Քան ծաղկած սալորենին,
Կամ գուցե դրանք ընդամենը ոչնչություն են,
Որովհետև դրանք ոչ մի առեղծված էլ
Չեն բացահայտում
Եվ չեն կարող գուշակել
Դեռ անհայտ ավարտը:
Իրականում կյանքի հրաշքը
Պարզ է դարձնում - անցողիկ կյանքն
Ու մահը հավիտենական են.
Չեմ կարող ասել՝
Որն է առավել կարևոր:

Ձյունահովազի թողած հետքերը
Գուշակի նշաններ չեն,
Սակայն կարող են արտաբերել
Լռության ձայնը,
Մինչ ուժեղ քամին կամ փոթորիկը
Կմաքրեն հողին դրոշմված հետքերը
Ու կջնջեն դրանց գոյությունը:

7

Ու այդ պահին ես կարող եմ հանկարծ հայտնվել,
Նարություն առնել հիշողությունից

Կամ երևան գալ մի նոր երազի փեսականով,
Դու ինձ կտեսնես ձեռնադրված արդեն՝
Ես արևի արփացումն եմ, շող՝ արծաթե
մեքաղաղրամից,
Քամուց սփռված երկրաչափական քարե
մարմիններ,
Երկնից ծորացող վարդերի գույնն եմ,
Նազարավոր վարդերին կյանք փվող սահանք եմ,
Արագություն՝ հանդարտության մեջ, ոսկե աղեղ,
Նանգսպացնող ժամանակ, պաշտպանիչ ուժ,
Մեծացող եզրագիծ, սև-սպիտակի հնարավորություն,
Լույսից ձեռնադրված փոհմապետ, «0», որ հապում է
անդունդը,
Տիեզերքից ընկած նիզակ, թռիչքում գրնվող աղեղ,
Բաղձալի երազի փեսականից
Պառակտված բյուրեղ,
Ցայած ջրի կաթիլներ, բծավոր գունավորում,
Խորաթափանց ծովային աքցան, որ զարդարում է
ռազմիկի գոտին,
Թագավորի կորած գլուխ,
Որ կրկին հարություն է առել մոլորակի արգանդից:

8
Փեքրվարը կենաց փարվա եղանակ է, որ ոչ է ասում
ամոթխածությանը
Ու սկիզբ դնում մոլեգին ձնաբուքին,
Քմահաճ քամի, որ փչում է իր փողը կիրճում,
Մոռանալով անունները, այսօրեղ փնտրում ու
ավարտին են հասցնում
Մեկ այլ ծննդի համար նախապեսված
արարողությունը,

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Առեղծվածային սաղմոսներ, որոնք
Օրորոցային է դարձրել մայրը,
Եվ միայն պողպատեության ասպծո առջև է
Նանդես գալիս, երբեմն էլ ձայնը բարձրացնում:
Բուռն հետապնդում... ապակենսամասնավաճ ուժ...
ազատ անկում... կայծակի լույս
Իդեերի ծիածան... կորսված գանձ... անկայուն օդ
Նենց նույն թռիչքը... համը գգացող լեզվի ծայր...
նպատակի
Իրականացման կարծրություն... կիրճի թեթություն...
անգերազանցելի թռիչք
Ներ մնացող լույսի ճառագայթ... լուծվելու
բացակայություն... բացակայության բեռ
Երախի ագույց... անհանգստություն... երակների
ֆուֆոյր... համեղ նվեր
Շնչառության ալիք... կորուկ վերելք... սկզբի
ինտենսիվություն
Մեխանան պար... եզրային մահ... դարարկություն

Դարարկ պարկերներ... երկրաշարժի ցնցումներ...
գոհաբերություն... երկրի գոգավորություն... արտաքինի
ֆիլիբրում... կործանում խաղաղության մեջ... շարվածան...
հոգնածությունից փափալվել կյանքում... թափառականի
սարսուռ... հիշողություն... անդորր կայծակից հետո...
սպասում... արձագանք լեռներից...

9

Լեռը շրջանցել
Խավարի բացասական ֆիլմում,
Մուգվել ցերեկվա լույսի ծովում,
Ծագման սկզբից մինչև վերջ փրամաբանական շղթա է.

Գոյության ու ոչնչության կիրճը ցնցվում է
Ազատության մեջ,
Որտեղ մենք միակն ենք,
Որ ընտրել ենք մեր սեփական ճամփան:
Իմ չորս վերջույթները մազլցում են
Անդունդի նյարդերի ցանցն ի վեր.
Քայլելով ժայռաբեկորների
Մտեղներով, փեփրալույսի արագությամբ՝
Ես նավաստի եմ բարձունքների վրա.
Ներսում եռում է անանուն մի ցանկություն՝
Այդ պահին ես այնպես եմ հարվածում,
Որ քամու արագությունը նույնիսկ չի կարող
մրցակցել ինձ հետ,
Ես ամբողջովին զինված եմ գրահով,
Լսվում է՝ ինչպես է քամին հարվածում:
Ես թափթփված առարկաների արքայազն եմ,
Ձյունե երկրի փասներկու ցեղերի եղբայրներից մեկը
Այն երկրի, որ լիցքավորվում է ավելի քան 90
ասպիճանում
Կամ ծագել է 120 ասպիճանում:
Իմ խայտաբղետ պոչն է պարզապես պահում
հավասարակշռությունս
Նենց մահվան եզրին...

10
Անցած գիշեր երագումս փեսա մորս,
Նա դեռ սպասում է այնտեղ՝ խորհրդավոր հայացքն
աչքերում:

Մենք դատապարտված ենք՝ լինելու
Միայնության ճանապարհորդներ,

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Երկու փարուց հեքո ժամանակն էր
Իմ սեփական ճանապարհով ապացուցելու,
Որ կարող եմ մի օր դառնալ ես զինվոր՝
Նաղթանակելով ավելի թեժ կռիվներում, քան իմ
հայրը՝

Ի պաշտպանություն իմ ազնիվ արյան
Եվ ի փառք, որ այն մնացել է մաքուր
Մերնդեսերունդ,
Նույնիսկ եթե իմ արյան վերջին կաթիլը թափվի:
Ես երբեք չեմ ընտրի ամոթի ճամփան
Ճակարագրական ոչ մի պայքարում,
Ու մինչև իմ մահվան հեք հանդիպումը
Ես բարձրաձայն աշխարհին կասեմ՝
Ում որդին եմ ես:
Եվ որ իմ նախահայրերի հերոսական անունները
Կրում են ձյան սուրբ մաքրությունը.
Իմ ծննդյան իսկ օրից
Ես հասկացել եմ,
Որ ես ու եղբայրներս
Ընդմիջոր պահապան աստվածներն ենք
Բոլոր ձյունածածկ գագաթների:
Ես երբեք չեմ մոռանա
Այն սրբազան կոչումը,
Որ երազումս առաջնորդում է ինձ,
Եվ այն մարդկանց դեմքերի շարանը, որ ձգվում է իմ
հեքսից,

Եվ իմ շրթունքներով
Ես արտաբերում եմ իմ մեծ ընտանիքի
Ոսկե ծագումնաբանությունը,
Եվ նույնիսկ մահվան եզրին
Ես աչքերս հառում եմ դեպի ապագա:

11

Ոմանք ասում են՝ լեռների ասարվածը, ում ես
ծառայում եմ,

Ոչ մի վրանգ ու աղեպ չի սպառնում,

Կանգնած լեռնագագաթին՝

Դեպի որ կողմ էլ շրջվեմ,

Իմ աչքերը կհանդիպեն անմաքչելի ձյան:

Բոլոր էակները լողում են մաքուր ու ազնիվ լույսի
տակ,

Նեռավոր արծիվը աստիճանաբար փոքրանում է,

Պահապանը, ում աչքերը հեղևում են այդ փոքր
կեպին,

Ինչ-որ պահի կորցնում է հետքը լագուրում,

Եվ ոչ հեռու, ներքևում հովվի ծխախոտի ծուխը

Մահուն վեր է ելնում՝ հազիվ հարմարվելով փաղտուկ
աշխարհին,

Սև եղևնուտները ձգվում են դեպի ճահճուտ
հովիտներ,

Ներքևում կապրավուն մշուշը փարածվում է

Փոքր գեպի սառցե մակերևույթի վրա -

Այդ պահերին հոգին ու մարմինը գնում են իրենց
սեփական ճամփով,

Ես խորասուզվում եմ իմ չարչրկված մտքերի հոսքում,

Երկնականարից կարծես լսվում են հարագապ
ձայներ

Այսպեղ՝ այս հսկա շքամուտքում, որ փանում է
երկինք,

Լեզվիս ծայրին գրնվող բառերը յուրովի

Մկսում են աղոթել այս հողում գրնվող էակների
համար:

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

12

Ես ապրում եմ նաև դասական տերսություն՝
«Ժայռերի օձը» վերնագրով,
Իմ կյանքն արժե հարյուր ձի, հարյուր կով ու նույնիսկ
Տաս հազար մարդկային կյանք,
Սուրբ Գիրքն ասում է՝ ով ինձ սպանի,
Կապանի նաև իմ ներսի մարդուն, որ կարող է լինել
հազար տեսակի:

Այդ ես-ը արյան հեքք չի թողնի ժայռերին,
Որովհետև անգույն է, ու նրան սպանողը
մեղսագործ է,
Ես հանգիստ եմ, մաքրում եմ իմ հեքքերը, ես
պարառոտում եմ գիշերվա վարագույրը
Իմ վիհավաճ աչքերով, քարե սրբերի նման
գաղտնաբար
Մի միայնակ հոգի կարող է լսել երկրի սրբի զարկը,
Բայց ինձ դուր է գալիս հայացքս սևեռել երկնի
աստղերին
Ու մոռացության մարմվել՝ մինչև արցունքներս
չորանան իսպառ:

13

Մահացու մի գնդակ
Սպանեց իմ եղբորը՝ Սպիտակ արծաթ անունով
ձյունահովազին,
Կրակողը պարզապես սեղմեց իր մաքրը,
Ու անողոք փողի արձագանքը
Նովտով մեկ տարածեց մահվան լուրը,
Գնդակն արձակվեց,
Բայց մեր աչքերը դեռ հույսով լի էին,

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Իրականում ես ուզում եմ բառի հակառակ կողմից
Պարզաբանել ճշտիվ մեկ ուրիշ բառ, քանզի այդ
ընթացքում

Բառը գտնվում է արցունքներով լի մթության մեջ,-
Իմ գլուխը, որ թաղված է ժայռերի սավերներում,
Թողեք դուրս հանեն մշուշի միջից, և քննախույզ
աչքերով

Ձննեմ դարանած վրանգները երկրի,-
Մեր գոյարևման ճամփեքը բացված են մեր
նախահայրերի պինդ թաթերով:

Տինավուրց արևը ապահովում է մեզ ջերմությամբ,
Մոտ ու հասանելի են ցածրում լուռ կախված
լուսինները,

Նրանք ցույց են տալիս իրենց բարությունը տարվա
եղանակներով, օգնում են մեզ
Ուշադիր լսել ամեն ինչի լեզուն, հաղորդակցվել
հոգիների հետ,

Իրոք, այն վաղուց արդեն մտել է մեր գիտելիքների
մեջ,

Այո, աշխարհին բաշխած բնության բյուր օրենքները
Օրեցօր փոխվում են մարդկանց կողմից:

Պողպատի շաչունն ու բարձունքների սավերները
Մեր մոլորակի կանաչ թռքերում

Թողնում են արյունոտ վերքեր, եւ մենք կարող ենք
Տարեցտար տեսնել, թե

Ինչպես են ոչնչանում արարածները:

Մենք գիտենք, որ ժամանակ չի մնացել

Ոչ մարդկանց համար և ոչ մեզ համար,

Գուցե արդեն սա մեր վերջին շանսն է,

Որովհետև երկրային կյանքի ընթացքը վկայում է՝

Եթե թողնենք որեւէ բույս կամ կենդանի ոչնչանա,
Աղետ կթափվի մեր բոլորիս գլխին -
Ահա ինչ եմ ուզում ասել բոլոր մարդկանց:
Ահա ինչու եք ինձ հաճախ տեսնում միայնակ նստած
Բարձրաբերձ ժայռին, ու խեղդվում եմ լացից:

15

Ես հեղաքրքրասեր եմ, հաճախ՝ անընդունակ տեսնելի
ինքս ինձ,

Մինչև դուրս չգամ այս ժայռերի միջից,
Ամենից շար ինձ դուր է գալիս գիշերային
աստղազարդ երկինքը,

Քանզի անձայրածիր է, նման
Այս սքանչելի վերարկուին՝ էսքիզավորված պարապի
ձեռամբ:

Նաստատելու համար հայտնագործությունս՝
Ես խոր շնչում եմ եւ սահուն որսում
Նեռավոր դաշտավայրի ծաղիկների բույրը,
Մի ակթարթում կարողանում եմ գիտնալ, թե որտեղ է
թաքնվել այծքաղը,

Երբեմն նույնիսկ հեշտ կանխատեսում եմ՝
Ում սմբակներից են կայծեր դուրս թռնում այդ
լեռնագոգում:

Ես կարող եմ լսել նույնիսկ փոշու ձայնը՝
Իր էությանը այն մի հսկա ժայռ էր, որ ծվարվել է
Ու համաստեղությունում հազիվ նշույլ դարձել
Եվ նույնիսկ հանգչել անդառնալիորեն,

Եւ բյուր սև ճեղքերի խորությունները
Պահում են չեկած արշալույսի շողը:
Երազներով լեցուն քնի մեջ ես մեկ-մեկ հայտնվում եմ
մահվան վիճակում,

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Այնպեղ ես քեսնում եմ իմ նախամարմնացած
կերպարը,
Թեթևացնելու համար մեղքի ծանր բեռը, ես
Ննչեցնում եմ զանգերը՝ որպես փրկագին.
Չնայած իմ ինը կյանքին, մահն անպայման
Վրա կհասնի ճիշտ այնպես, ինչպես իմ նոր կյանքն է
սկսվել աշխարհում...

16

Ես չեմ կարող բանաստեղծություն գրել,
Ես կարող եմ, ընդամենը, օգտագործելով թաթն իմ,
Կայծկլիպացող ձյան անկառավարելի էջերին
Թողնել իմ վերջին կամքն ու կրակագիրը
Իմ որդիների և թոռների համար:
Իմ սքանչելի նախահայրերի նման
Մի ամբողջ կյանք էր պետք՝ ծանոթանալու
Եվ մերվելու այդ խիստ, ձնառատ փարածքին,
Այսպեղ լայն բացվող արշալույսի հուրը
Ձյան անդրադարձման շնորհիվ
Ավելի գրավիչ է, քան մռայլ մայրամուտը:
Գուցե՛ չենք կարողանում վայելել երանելի
ժամանակները
Տարվա ցանկացած եղանակի ու ցանկացած ամսի.
Այսպես է նաև կյանքի ու ճակատագրի
անկայունությունը -
Երբեմն գոյության համար ուրելիք հայթհայթելու
ճանապարհին
Մենք վնասվածքներ ենք ստանում սրածայր
քարերից,
Բայց նույնիսկ այսպես՝ մեր ուրախ օրերը
Գերազանցում են թախծոփ օրերին:

Ես փեսել եմ այնքան վեհ հայացքներ,
Որ վստահորեն կարող եմ ասել՝ աշխարհում ոչ մի
կենդանի,
Նույնիսկ մարդ էակ չի կարող հասկանալ նրանց:
Այսպիսի հայացք ես չեմ վաստակել իմ սեփական
կամոք,
Այլ՝ Մեծ արարչի մեծահոգությամբ.
Այս ձյունառար լեռների բարձունքներում փեսել եմ
Ժամանակը հեղուկ վիճակում՝ վերածված
կապրավուն սառցակույրի,
Տիասքանչ աստղաբույլեր, որոնք բուրում են
կազդուրիչ թարմությամբ,
Տեսել եմ ինչպես է փիեզերքի մանրաթելերից սկիզբ
առնող լույսի ճառագայթը
Տերզհետե ընկղմվում հավերժական խավարում:
Իրապես, ես այստեղ եմ ասելու ձեզ իմ գաղտնիքը -
Ես ոչ մի փեսակի Դժոխք չեմ փեսել,
Բայց գրել եմ Երկինք փանող ճանապարհը:

17

Մա հրաժեշտ չէ: Քիչ էլ համբերեք,
Թեկուզ ինձ շար անգամ են հրել անդունդ,
Բայց ես վերջնականապես չեմ լքի հողն այս,
Ես կհեռանամ, կապրեմ միայնակ, այնտեղ,
Ուր հազվադեպ են մարդկային հետքերը:
Մի որսացեք ինձ այստեղ,
Այս մոլորակային խառնակ աշխարհում,
Քանզի ես ձեր եղբայրն եմ արյամբ ու ոսկորով,
Ու նախքան մութ թևերը կպարուրեն ինձ,
Թողեք մոռանամ ջարդի սարսավիռ:
Իմ նախնյաց հուշերի շռայլ հնձանում

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Նոզևոր լեզուն շրթունքներս դարձնում է ծիսական
անոթներ,
Եվ իմ անունը, որ հարում է իմ հոր անվանը,
Այժմ զենք է դարձել մերկ իշխանության դեմ:
Քիչ էլ համբերեք: Ես կարիք չունեմ համակրանքի
Առ իմ պարմությունն ու ապրելակերպը,
Մեփական արժանիքներիս եմ միայն զորավիզ
Այս աշխարհաց աշխարհում, որ չի հանդուրժում ոչ մի
փոխանորդ:

Մի արքածեք իմ պարկերն այնպեղ,
Որպեղ ամբոխը կարող է փեսնել այն,
Ես վախենում եմ նրանց հալածանքից, ինձ
յուրացնելու փորձերից նրանց,
Որ արվում են հանուն պաշտպանության:
Եղե՛ք համբերաբար: Սա հրաժեշտ չէ,
Բայց հավատում եմ՝ մինչև վերջնական դարաստանը
Ժամանակը չի ձգձգվի հավիտենապես:

** Ջորջ Բիլս Շալլեր(ծնվ. 1933թ) - Ամերիկացի կենդա-
նաբան, բնագետ, բնապահպան ու գրող: Նա «Թայմս»
ամսագրի կողմից գնահատվել է որպես առաջադար
գիրնական կենդանական աշխարհի հերթագրողների
մեջ: Նրա նշանավոր աշխատանքը, որն ուսումնասիրում
ու զարգացնում է ձյունահովազի պահպանության թեման,
մեծ ճանաչում է գրել ողջ աշխարհում:*

ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒՆ՝

*Իսկական արվարի գործն արժեուրվում է
ճիշտ այն ժամանակ,
երբ նրա ծննդից հետո անցել են
դարաշրջաններ, որոնք հերքել են այն:
Ալեքսանդր Բլոկ²*

Ինչպես կանխագուշակել ես, քո բրոնզե արձանը
կանգնեցված է
Տրապարակի խաչմերուկում, որպեսզի փչում են սառը
քամիները.

Անցնում են մարդիկ՝ ոմանք նոր են ծնվել, ոմանք
արդեն մահացել են:

Նրանք, ովքեր համակված էին քո սիրով,

Վաղուց արդեն չկան, իսկ նրանց որդիները՝

Նարբաժ քայլելով լույսի փակ, քեզ փեղադրել են
Փոշոս մոռացության մեջ: Այժմ արձանիդ սրվերում

Թոքաբորբ փարած ոչ մի հիվանդ չի կարող թթել,

Ոչ մի ջահել սրիկա չի կարող մտնել հասարակած
տուն,

Նորիզոնին հակառակ, լուսարձակ ցուցանակների
ներքո քայլող

Թմրամոլներն ու ծպտյալ առևտրականները մեզ
սպիտում են փեսնել

Մարդկային վշտի լիակատար դեմքը պարի վրա:

Ոմանք գլուխները վեր նայում են բրոնզե քո դեմքին,

Ու քո սևեռուն հայացքը

Վերելից թափանցում է ամենքի մկանները:

Միշտ կգտնվեն մարդիկ, ովքեր կանգ կառնեն

քո առջև,

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Որոնց կորսված հոգիները կսարսռան վաղվա
մշուշոտ մերթից,
Կան մարդիկ, ովքեր ողջ կյանքում հույս էին
փնտրում.
Ինչ-որ տեղ նրանք նաև պատասխան են փնտրում քո
դեմքին:

Թերևս սա է քո արժանիքը, ու ահա ինչու
Դու պեքք է ապրես, թեկուզ ոչ ոք չի կարող տեսնել,
Թե ինչ նախապիներ է տարել քո ճակատը,
Ինչ գրկանքներ ես կրել քո համոզմունքների համար:
Դու վստահ ես եղել, որ կգա օրը քո հարության,
Դու հավատացել ես, որ քո փառքն,
Անշուշտ, կգա հետագա դարերում:
Վաղուց ժամանակն է քո վերադարձի, քո վերադարձը
Շար սպասված կլինի, ու քեզ ճանաչելու համար
Կարիք չկա, որ հազնես դեղին բաճկոնակդ,
Մարդիկ կճանաչեն քեզ: Ուրիշ էլ ո՛վ կարող է լինել:
Պարզապես իջիր ուղիղ երկնքից՝ ամպե տաբաբով,
Թեկուզ այդ ապրանքանիշը գրանցված չէ
Փուտուրիստների կողմից,
Այն չի պատկանում Չե Գևարային³ կամ Աուգուստո
Սանդինոյին⁴:

Նազիվ թե դու գրանցված լինես բռնապետների և
բանկիրների մաքրում,
Որովհետև դու ուրքից գլուխ կատարյալ պոետ ես.
Դու քո հոգուն հակառակ կգաս ոչ թե
հեղափոխության պարահրապարակ,
Այլ սմբակների ռիթմով կվերադառնաս քաղաքի
ցանկացած անկյուն
Մտվերի նման, բոլորովին նոր ճակատագրով:
Օդը կճեղքվի ամպի որոտով,

Կհայրնվես կրկին պարուհաններին, սալարկուն
քարերին,

Որ պարասարել ես քո շրթունքներով:

Դու առաջին հոներից՝ էիր, որ շարունակել ես այդ
մոլեգին լեզուն.

Լոկ դու կարող ես փայփայել կոտրված ֆլեյտայից
թրթռացող նոտաները:

Պարերագմի ու հեղաշրջման դարաշրջանն ունի իր
բախտագուշակը,

Բայց ո՛վ է ասել, որ այն չունի վարպետ-մարգարե:

Դա ռուլետկա խաղ չէ, քո կայծակնային հարված
հասցնող գավազանը

Կարող է թափանցել մշուշի ու լույսի շախմատային
դաշտ

Եվ լուծել գլուխկոտրուկ հանելուկները՝ առաջադրված
Քնարական փողերի ասփղային նշաններից:

Ներմերիկ «կոկորդ-գլանը» մագնիսական սանձի
ձգումով

Ազատություն է փալիս նորածին երեխայի ճիչին,
ու միայն Տերը

Կարող է հնչեցնել զանգը՝ ճակատագրի նոր
ճամփորդությունն սկսելու համար:

Թերևս դու ամենավերջին առաքյալն ես,

Մեծարված քահանան, ով կրում է իր սեփական փշե
պսակը.

Դու գուշակեցիր 1916-ին, ու ընդամենը մեկ փարի
անց՝ 1917-ին

Նամաշխարհային մեգալիթը թնդաց իր
բազմազանությունը,

Բայց փգեքները ծաղրում էին քո արարքները

Ու ծրագրում բարձրացնել քեզ խաչը սփի,

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Ինչպե՞ն կարող էին նրանք իմանալ, որ դու
կանգնել ես աշտարակի գլխին
Եւ քեսել նոր դարաշրջանի հուրը:
Մինչ հիմա ոչ բոլորն են ունակ գնահատել
Քո թանկ արժեքը, աշխատավոր մարդկանցից
շարերը
Կարծում են, որ դու մահացել ես ու արդեն
անցյալում ես,
Բայց, անշուշտ, ճշմարտություն չէ սա, որովհետև
ոմանք
Կգան այն եզրակացության, որը նման չէ
մեծամասնության մտքին:
Վերցնենք, օրինակ, այն կնոջը, ով համահավասար է
քեզ`
Յվերանային՞, ով ասել է՝ «Ուժը... նրա հետք»:
Նա նույնպես իր ժամանակաշրջանում հազվադեպ
տաղանդ էր,
Նա հայտարարել է, որ դու իր ցեղից ես,
Թեկուզ վճարել է այդ քայլի գինը,
Նա անգամ ձեզ երկուսիդ համեմատեց վագորդի հետ,
Քո մահից հետո նա ընթերցեց քո
բանաստեղծություններն ու գրեց
Էսսե՝ «Ծխնելույզն ավելի բարձր է, քան խաչը»,
Որպես ընծա լավագույն պոետին,
Նաստարելով քո մեծագույն դերը ռուսական
պոեզիայի պարամության մեջ:
Այժմ երկուսդ էլ ապրում եք ձեր իսկ արքայության
մեջ,
Որը ոչ դրախտ է, ոչ էլ դժոխք,
Չնայած երկրի վրա անցկացրած ձեր օրերին՝
Դուք երկուսդ էլ նույն կերպով կրճատել եք ձեր
կյանքը

Եվ դուք երկուսդ, կառավարվելով ինքնավար
իշխանությամբ,
Կարողացաք հասնել ձեր համոզմունքներին-
Ապրել ինչպես մարդ արարած, մեռնել ինչպես պոետ:
Դա երե՛կ էր, թե՛ ավելի թշվառ ինչ-որ մի օր՝
Քո ապագային պարկանող ձայնը,
Որ դրված էր ժամանակի գրավապանը,
հափշտակվում էր
Վաշխառուական փոխարժեքով:
Ինչևիցե, քո պարզամն ավելի վառ է, քան կարմիր
արյունը,
Որ դեռ պարփակված է ժամանակի խորքում՝
մեկուսացված սարսափից,
Որպեսզի չանցնի ընդհանուր գաղափարի ուժի
վրայով՝
Լսելով իմ բացականչությունները՝ «Օ՛, անաբամ,
ճաղապ հսկա»:
Մենք կրկին փեսնում ենք քեզ՝ կանգնած մահացող
ժամանակի եզրին՝
Մեկ անգամ ևս հասարակելով քո փարոսի ճշմարիտ
բարձրությունը:
Նախապաշարումից ու վրդովմունքից բացի ուրիշ ի՞նչ
ձայն
Կհամարձակվի ժխարել քո սրտի անսահման
լիությունը,
Դու համարվում ես լեզվի ցեղապետն աշխարհում:

Փշալարերը զարդարել ես շողշողուն գոհարներով,
Մռայլ սանդուղքները լուսավորել բարձրավոլտ
բառարմարներով:
Դու սրեղծեցիր գոյություն չունեցող ժանրեր,

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Դու բարձրացրիր գեպնադամբանի խուփը,
Քո շնորհիվ հին մաքուր ռուսերենը
Ստիպեց աշխարհին սարսռալ վշտից,
Դու անկաշկանդ, փառ առ փառ կրակում էիր քո բառ-
փամփուշտներով՝
Արձակելով վերջին կայծերը քո արմատ գլխից,
Դու կերպարանքներին հարվածել ես հենց ճիշտ
պահին
Եւ լուծել նրանց խնդիրները անխուսափ լրջությամբ,
Քո ձեռքին բանաստեղծությունն ավելին է,
Քան սովորական մարդու հոգսերը, քանզի այն
դառնում է
Նամակրանքի ու օգնության պատրվակ շարերի
համար,
Նողագուրկ բանվորների ճիչն ու մայրերի վիշտը
Ազատվում էին խելացնորական ալիքի կլանումից:
Ես գիտեմ, որ դու հեռու էիր կարարյալ կուռք
լինելուց,
Ինչպես բոլոր մահկանացուները, դու նույնպես
ունեիր քո թերությունները,
Բայց ոչ մի ստոր արարք կամ ասեկոսե՛ կապված քո
անվան հետ,
Ոչ մի հայհոյանք չեն ազդել քեզ պաշտողների ջերմ
սիրտ վրա,
Ովքեր այսօր գալիս են մատուցելու փուրքն իրենց
հարզանքի:
Ներիր այդ դարի բնակիչներին: Օ՛ Մայակովսկի,
Շատ երկար են նրանք քեզ սրվերի փակ թողել,
Նրանք, ովքեր ստրուկներն են փառքի ու շահի,
Նույնիսկ հիմա քո շուքը չափազանց է նրանց համար,
Նրանք փորձել են մասնատել քո
ամբողջականությունը.

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Անավարտության ամբողջականությունն՝
ազդարարված երեք հոկտեմբերներին,
Բարձրացված առագաստ՝ կուրիսական ցիկլոնում,
սրածայր մանգաղ մի մեծ փորում -
Ահա այսպիսի կոպիտ պայքարում ձևավորված էակը
սոսկ կարող է հասկանալ ամեն ինչ:
Մայակովսկի, ո՛վ կարող է քեզ նման լինել:
Առանց սպառազինության, լեզվամբարձողության
սահմանին կանգնած
Քո հարձակումներն ավելի ցնցող էին, քան
ցանկացած միջուկային պայթյուն,
Զարմանալի չէ, որ ոմանք քեզ կոչում էին պոեզիայի
իշխան,
Ասում են, որ քո հայացքը սառցե ժայռեր էր
հալեցնում,
Ոմանք վախենում էին, որ դու դուրս կնետես
ավանդույթները,
Բայց իրականում դու ավանդակիր խիզախ
ռազմիկ էիր,
Անհամեմատ ավելի փոկուն, քան ցանկացած
ֆորմալիստ:
Դու օժտված էիր այնպիսի անկեղծ խոսքի
գործությամբ, որ շրջանցում էր բոլոր վեճերը:
Ծեր խորամանկ աղվեսը խոթել է քո քիթը
ավանդության մեջ՝
Որպես ռազմավարություն, հանդիսատես ձեռք
բերելու համար,-
Մայակովսկի, դու քննադատներից հասարակական
կարիք չունես:
Պոեզիան կարող էր այդ դարաշրջանում լսարան
հավաքել, և դու

Քո սարժե շինելով կենտրոնական դեր էիր
զբաղեցնում:
Մենք հիշում ենք քո կապը հեղափոխության ու
ավանգարդի հետ,
Որոնք առանձնահատուկ տեղ էին գրավում անցյալ
դարում՝
Թողնելով իրենց ազդեցությունը այլ ուղորդների վրա,
Նույնիսկ հակավիերամական պատերազմի
բողոքարկման վրա,
Երբ Գինգերզոն⁷ ու իր ընկերները հրապուրվում էին
Քո կրակոտ ու արյունոտ բանաստեղծությամբ:

Քո պոեզիան գառան բուրդ չէ՝ հանգիստ մանված, այն
հայրնվում է
Փողոցային ցույցերում և, իր սրածայր սուսերով
մխրճվելով՝
Կանգնեցնում է ցուցարարներին, ովքեր շաչյուն էին
լսում փեզերքից:
Այն օթևան է անտունների համար, դուռ, որ բացում են
քաղցած մարդիկ,
Օվկիանոսի արամներ՝ դարսված դարարկության
մեջ, երկնաթաղանթ՝ եզան մորթուց,
Դու երբեք չես ավերարանել, բայց ընթերցումների քո
ճամփորդությունում
Աստվածային ելույթներդ կարմրացրել են քո ձեռքերն
ու սիրտը,
Նրանք ասես գոլորշի լինեին՝ փաք ջրից ելնող,
Քո ռիթմիկ սանդուղքը մեզ փանում է դեպի
բարձունքներ՝
Մերթ շուրջով, մերթ ամպագոռգոռ թնդյունով,

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Քո ձայնը աշխարհի այն քիչ ձայներից է, որ
կարողացել է
Մարդկային ձայնով բառերն համեմել աստվածային
կայծով,
Թեկուզ դու ուժեղ մարտիրոսաբան էիր,
Ու քո ամբողջ կյանքում ժխտում էիր Աստուծո
գոյությունը,
Քո ընթերցումները գերբնականորեն ազդել են
շարերի սրտերին,
Ու շարերը նույնիսկ զառանցում էին:
Մենք քո կարիքն ունենք, բայց ոչ հետ բերելու
պարտության մի դարաշրջան:
Ո՛վ կարող էր ժխտել իշխանության չարաշահումը քո
դարաշրջանում.
Որ այն եկել է սպանելու, վրարելու և հալածելու
մարդկանց,
Այն դրդել է ահավոր հեղաշրջման, մեծաբառերով
սպեր է հրապարակել,
Ինչպիսի ցնցող ծաղրերգություններ էին
հանձնարարվում
Նենց իրենց՝ քաղաքակիրթ մարդկանց կողմից:
Ու չնայած այդ բոլոր ճնշումներին,
Մահը բոլորի առջև էլ իր դռներն է բացում.
Երբ ժամը գալիս է, ոչինչ չի կարող
Շրջանցել մահվան ու ծննդյան կարգը,
Բարի մարդիկ շարունակում են մեռնել, ինչպես
չարերը,
Ոչ բոլոր նորածինները բարեսիրտ կլինեն,
Բայց ապագայում ոճրագործներն անպայման
փոքրամասնություն կկազմեն,

ԸՆԶԱՌՑՈՒԾԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ

Ի վերջո միայն ազնվությունն ու բարությունը կարող են
կառավարել երկիրն այս:

Մայակովսկի, դու պարահականություն չէիր:

Եվ 20-րդ, և 21-րդ դարերը ուրբ դրեցինք

Մեր իմաստուն մրավորականների ծանր

հոգոցներով,

Անբարոյականությունից սկիզբ առած բարոյական
անկումով

Նրանք զգում էին մարդկային ոգու կործանումը.

Էլ ի՞նչ էր մնում ստորացված ու մեկուսացված

էակներին անել,

Բացի քարշ գալուց քավության սեփական

ճանապարհով.

Մայակովսկի, ոչ բոլորն են թերահավատ քեզ պես,

Քո մանիֆեստը երբեք չի առնչվել զուր

տրամաբանական հարցերին,

Որպես մարդկային առաջընթացի չափանիշ:

Դու հավատում էիր, որ երրորդ հոգևոր հեղաշրջումը

անխուսափելի է,

Ինչպես մյուս փուլերը դրա անհրաժեշտությունը ևս

անխափան էր,

Մի կողմից` անձնուրաց ծառայությունը, մյուս

կողմից` սիրո կարարելությունը

Կարող է աշխարհի, այսպես կոչված, առաջընթացի

իմաստը մի քիչ փոխել:

Մի հսկա ալեձեձ ծանձաղուր ես սկանապարել քո

ճարտար լեզվով,

Մի հսկա շոգենավ է նավարկում բառերիդ

ալեձուփ օվկիանոսով,

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Լոկոմոտիվ է անցնում քաղաքի կոշտացած
կրծքավանդակով,
Գրված բառերիդ քարերը դարսված են լայն ու բաց
հարթավայրում,
Թափառող խենթ քամին պարառություն է բրեզենյուն
ու թամբը,
Վայրի, բոսորագույն ցուլը հաստատում է մենության
վիթխարի ուժը.

Մայակովակի, այս ամենը հեռու է քո
ամբողջականությունից.
Քեզ հեղապնդողները նույնպես փնտրում էին քո
բանաստեղծությունները՝
Նամբեսելու սիրեցյալի շրթունքից ծորացող մեղրը,
Բավական է միայն ընթերցել Լիլիա Բրիկին՝
ուղարկված
Քնքուշ ու փոթորկոտ սիրո գրառումներն ու
բանաստեղծությունները՝
Նասկանալու համար, որ դու գանձ ես այդ
ասպարեզում ևս,
Նապա ինչպես են շարադրված Յակովլևայի⁹ մասին
տողերը.
«Նա սիրում է ինձ, բայց սիրում է ինձ ոչ... իմ ձեռքը
լինելու համար»:
Դրեք այս հուզիչ ենթադրությունները թափված
ծաղկաթերթերի մեջ,-
Մայիսը ողջունում է ինձ թաղման պսակի
քրիզանթեմներով,
Բայց դու ընտրված չէիր սրա համար՝ սիրեկանի
ճակարագրի,
Նախկինում դու վճռական էիր քո որոշումներում,

Դու երբեք թույլ չես արվել, որ քո
բանաստեղծությունները լինեն կարվի կաղկանձ,
Դու ծնվել ես լինելու կայուն անհայտ՝ փառերի
կայսրությունում,
Բայց դու միեղջյուրը չես, քո կողքին կանգնած են
Ներուդան¹⁰ և Վայլեխոն¹¹ և Յոժեֆը¹²,
Նեզվալին¹³, Տիբետթը¹⁴ և Բրոնսսկին¹⁵,
Ո՛վ կարող է մոռանալ Ռիցոսին¹⁶ ու Պագոլինիին¹⁷,
Բոլորը քո հավաքարիմ ընկեր-եղբայրներն էին:
Մայակովսկի, այդ մեծ մարդիկ պարվում էին քեզ,
Որովհետև դու բացեցիր քո սիրտը թշվառ հոգիների
առջև,
Նասարակական հրապարակներում, որտեղ
հավաքվում էին աշխարավորները,
Քո ձեռքը վերականգնում է ճշմարտությունը՝
սեղմելով նրանց կոպտավուն ձեռքը,
Ահա ինչու է Լուի Արագոնը¹⁸ շաղ փայլա հետևյալ
պողերը.
«Նեղափոխության ալիքներին գրնվող պոետը ինձ
սովորեցրել է
Դեմ-դիմաց կանգնել հոծ բազմությանը, դեմ-դիմաց
կանգնել երկիր կառուցողներին»:
Ոչ բոլոր գովաբանող երգիչներն են, պարզվում, որ
անկեղծ են,
Բայց մենք երբեք չենք կասկածել քո անկեղծության
վրա,
Պարեհապաշտների համեմատ, նույնիսկ այն
պահերին, որ փափանվում էիր,
Դու կարողացել ես կոնկրետ կոչ հղել քո մաքրության
ուժով,
Ինչ վերաբերում է «Մաքուր

բանասպեղծություններին», որոնք չեն բխել
սրբից ու հոգուց,
Որոշ քննադատներ սխալմամբ ուռնացնում են դրանք
գրքերում, և
Այսպիսի պոետները համարվում են մանսպրոներ
իրենց «տոկացող արժեքների» համար,
Ովքեր չունեն քնար, մարդկանց սիրտը հուզող
բառեր ու ձայն,
Նրանք ձեռք են բերում էժանագին փառք իրենց
լեզվական խաղի շնորհիվ:
Ճիշտն ասած, Մայակովսկի, որպես պոետը՝ պոետին,
Քո ոչ բոլոր բանասպեղծություններն են դասական,
Դու գրել ես նաև դոգմատիկ, փաղտկալի ու
սովորական հարվածներ,
Անշուշտ, այդ փաստը կարելի է հաստատել,
Այնուամենայնիվ, դու քո դարաշրջանի մեծագույն
պոետ-քաղաքացին էիր.
Ինչ վերաբերում է նրանց, ովքեր բառեր են բռնում
պղպջակային հեղինակության համար,
Ընդամենը խմբակների ղեկավարներ էին,
Ինչպե՞ս կարող են նրանք լինել առյուծ պոեզիայի
սավանաներում,
Եթե հարցնեք ինձ, թե ում հետ եմ ես նրանց
համեմատում,
Ես կասեի՝ նրանք հարուստ կանանց ձեռքի
փայփայված շնիկներ են,
Բայց դու, իմ երկարադեմ եղբայր, այն մարդն ես,
Որին Պաստեռնակը¹⁹ փուրք է մատուցել քեզ իր
գործերում,
Քո թռիչքն առավել թովիչ է, քան ցակացած գրական
մեկի:

ԸՆԶԱՌՑՈՒԹՅՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ

Մինչ դու ողջ էիր, ոչ ոք չէր հասնում քո արագությանը,
Երբ ողջ էիր, մեկ քայլ էր պակասում դառնայիր
լեզենդ,
Մահը, ցավոք, եղավ միջոցը այդ մուտքի:

Դու երբեք չես հնազանդվել այն փրակալներին,
ովքեր ծնվել են՝ ճաշելու արծաթե գդալով,
Ի սկզբանե էր քո արհամարհանքն ու
ամբարպավանությունը համաժողովների հանդեպ,
Որտեղ փոքրները մոլագարի ու անարժանի
պիպակ էին կայցնում քեզ,
Եվ այն բերանբացների, ովքեր իրենց օրերն անց էին
կացնում զարշահոյ սրահներում:
Ո՞վ է դարել քո կյանքն ու բանասպեղծությունները
նեղ չափանիշներով,
Քո հեղափոխական ու ավանգարդ լինելու
պարճառով
Շրջանառվում էին վիրավորական ակնարկներ ու
անեկդոտներ,
Կրկին ու կրկին նրանք դիմում էին իրենց սովորական
սպոր հնարքներին՝
Ուրնափակ փալով պոեզիան և քեզ:
Այդպես էին նրանք վարվել նաև քո սիրելի ու
մրցակից ընկեր Եսենինի²⁰ հետ,
Նրանք պնդում էին, որ նա հարբեցող է ու սեքսուալ
չարագործ,
Բայց դու հո գիտես, որ նա ջանք ու արցունք չի
խնայել
Օրհներգելու գյուղական կյանքը Ռուսաստանում,
Թերևս և Եսենինի, և քո մահից հետո
Ոչ ոք չի կարարել իրենց բարոյական պարտքը...

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Ես չգիտեմ՝ ինչպես են լուծվում նման խնդիրները
Արևելյան ուղղափառ եկեղեցիներում, բայց Եսենինի
ստորագրում
Ես լսում եմ սլավոնական ժողովրդական երգի
թախսձուր հնչյունները,
Ես փեսանում եմ խեժուր արցունքներ, որոնցով
պարուրված է ծառի կեղևը:

Մայակովսկի, դու հավաքում էիր մարդկային ոգուն,
Այդ պարճառով չէիր հավաքում Աստուծոն կամ այլ
գերբնական ուժի,
Դու զարդարել ես քո բառահյուսքը գիսաստղերով,
Երբեք չես կորցրել երգեհոնի ուժը՝ սփռելով դողալ
փակագծերին,
Ցանելով երկրի աղը բանաստեղծություններիդ վրա:
Երբ ոսկորները բուժվում են հին ծաղիկներով ու
ուղարկվում աստղային թռիչքի,
Նախ, թող այդ ոսկորները փորագրվեն քո
տասներկու գայրույթի կարադոսթամբ:
Քո հաղթության պսակը ի ցույց կդրվի՝ թունավորված
կայծուռուցքով,
Որովհետև միայն այդպես կամ նույնիսկ ավելի
ծայրահեղ ձևով
Կարող են քո մեծանուն հասկանիչները փորագրվել
դանակով,
Թող նրանք էլ ոսկեգույն ներկվեն առավոտյան
զվարթ լույսի ներքո,
Մայակովսկի, երգիչ լույսի և ռիտերիմ թշնամի
խավարի:
Նրանց, ովքեր հռչակել են քո մահը, աճյուններն
անգամ չենք կարող գտնել,

Իսկ դու կանգնած ես բարձունքի վրա՝ հենված
ամպերին,
Դու կնայես ներքև, երբ մարդկության ուղևորապար
գնացքը
Կանցնի ծեծված ու խուճապահար ամբոխով լի
քաղաքի միջով:
Դու կտեսնես՝ ինչպես են երեխաների աղաղակները
լռեցվում ժանգոտած գոբու
Ռիթմերով, փան պապերի մեջ, բարձրահարկ
շենքերի կմախքներն օգտագործվում են
Եկվորների կողմից, որպես կենսապարածք՝ թողնելով
նրանց միշտ կեղտի մեջ,
Դու կտեսնես, թե ինչպես են հին մշակույթները
շնչահեղձ լինում,
Մինչդեռ այս մոլորակի հողերի մեծ մասը
փրամադրված է մայրաքաղաքներին,
Որոնք պղծվում են ուժեղ դիլերներից: Պատերազմը
շարունակվում է,
Իսկ կյանքը, որ կորցրել է իր թռիչքը սնանկացած
երկրներում,
Շուրով կմրցակցի երկրորդ համաշխարհային
պատերազմի գոհերի հետ:
Մայակովսկի, չնայած դու կտեսնես նաև, որ
տիեզերանավեր են կառուցվում,
Որով մարդը կարողանում է հասնել Մարսին.
Մեզնից մի քանի քայլ այն կողմ հոգիները ցնցվում են
Նյութական ազդակներից՝ կապելով
ցանկությունները մաշված մեքաղաղրամների հետ,
Բնական աշխարհը հեռանում է՝ թողնելով իր անգույն
մարմինը,

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Մեր հայեցողական ավանդույթները, որոնք խրված են
հողի մեջ,
Ապաստան չեն գտնում ցանկության
ուխարավորներից,
Նրանց ճիշդ խլանում է արամնավոր շարժանիվների
աղմուկի մեջ,
Վախը վերածվում է հոգու մուսանդի՝ կորցնելով
Էականության փրամաբանությունը,
Եվ ոչ արևմուտքը, ոչ արևելքը չեն կարող փախչել
Փլուզված արժեքների գարհուրելի վերջնախաղից,
Քանզի իրադարձություններն իրական աշխարհում
շափ լավ են հաստատվում,
«Լուսավորչական ծրագրի» փեքսերն ու
հայրարարությունները
Վերածվել են էսթետիկական բեմադրության, այն
մարդկանց համար,
Ովքեր սպանություններ են կատարում հանուն
ագապության ու մարդկության,
Եւ այս ամենը շարունակվում է առանց բոլեական
դադարի.
Նրանք ճանկում են հասարակական կարծիքները,
անարգում ուրիշների գոյությունը,
Բարոյական հանդերձներ հագած՝ նրանք զինված են
բռնափրությանը
Ու դրացիներին ներկայացնում են, այսպես կոչված,
«քաղաքակրթության համակարգը»
Շափ ավելի ամոթաբար, քան Կոլումբոսի
«Նոր երկրի» հայտնագործությունը:
Այս աշխարհում փիեզերանավը պեպք է անվրանգ
վայրէջք կատարի,

Բայց որպեղի՛ց գրնենք մի վայր, որպեղ
արդարությունն է իշխում:
Ինչ վերաբերում է միջազգային օրենքներին, դրանք
թղթի կտոր են՝ դարարկ բովանդակությամբ,
Ապագա իրավարարները կհերևեն, որպեսզի
տարածվի ահաբեկչությունը,
Նեպո կմեկնաբանեն «օրենքը» քարբեր ձևերով՝ ըստ
իրենց շահերի:
Նրանք միասին կապարկեն ազգային
պեություններ՝ կործանելով հազարավոր ցեղեր,
Օգրագործելով իրենց վարչակարգը՝ նրանք
ակնկալում են,
Որ մյուսները կփոխեն իրենց գործելակերպը,
Նրանք նախագծում են այնպիսի սխեմաներ, որ բոլոր
գույները ծածկվեն իրենց գույնի քակ,
Առանց ավտոսանքի, նրանք նույնիսկ մի թիզ հողի
համար կոչնչացնեն մշակություններ՝
Արևակեզ Աֆրիկայից սկսած մինչև հեռավոր
Լաբինական Ամերիկա,
Մայրաքաղաքը շարունակում է հաղթել իր
պարերագմում՝ առանց վառողի,
Նրա մեծ «հաջողությունը» ակնհայտ է՝ այն իր ծածուկ
ուժով
Մինչև հիմա վերահսկում է աշխարհի քիչ հայրնի
անկյունները,
Նրանք չեն դադարում աջակցել իրենց միապաղաղ
համախոհներին,
Մինչ ուրիշ ցեղի համար գոյության մի այլ պողոքա
ջբացվի,
Նրանք չեն հասկանում արհեստավորի կամ
մասնագետի արցունքները,

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Նրանք ծիծաղում են անդինացիների՝ բամբուկից
պարբաստված շվիի վրա,
Որովհետև հազիվ գտնվի մեկը, ով կարող է այն
նվագել;
Իհարկե, նրանք չեն կարող բացատրել այդ փխուր
հնչյունները՝
Ինչպես է այն ծնվում թաքնված հովիտներում և
ձգվում մինչև լեռները:
Նրանք քանդեցին կառավարման ազգային
ծածկագրերը՝
Այն կոչելով վայրագության մասունքներ.
Եվ երբ երիտասարդները թարմանում էին ակոհով,
Նրանք ասում էին. «Տեսնու՛մ եք, հնդիկները
ակոհովից գլուխ չեն հանում»:
Ի դեպ, երբ որևէ ընդվզում է փեղի ունենում՝
քայքայելով կյանքի ճանապարհը,
Դրա գինը վճարվում է այդ կյանքով ապրած
մարդկանց փառապանքով:
Խղճից բացի, ոչ մի աստղադիպակ չպետք է
փեղադրված լինի
Բարձրահարկ շենքերի փանիքների վրա, որը ցույց
կտա, թե ինչպես են
Նանցանքն ու թշվառությունը աղքատության
արմապը դառնում:
Այսօր, 21-րդ դարում մեզ պետք չէ ապացուցել, որ
Մարդը գրկվում է ավանդույթից, պարմությունն ու
կյանքը կապված են
Կրկնակի վտանգների հետ՝ ՋԻԱՆ-ի և թմրանյութերի
չարաշահման.
Անկասկած, սա ավելի սարսափելի է, քան քչերի
դժբախտությունը,

Մա ճգնաժամ է, որ սպառնում է ամբողջ
մարդկության գոյությանը,
Մարդկության քարացած անարբերությունը հիմա
նույնիսկ մահվան եզրին է,
Չպետք է հեշտությամբ մոռացվի, որ վերջնական
դարաստանն անպայման կգա:

Մայակովսկի, անկասկած դու չէիր պարկերացնում,
Որ կմտնես բավականին փարօրինակ մի
դարաշրջան,
Բայց ահա, իմ եղբայր, ես կցանկանայի ասել,
Որ քո բանաստեղծական փողերը վաղուց են
գուշակել իրենց թույնն ու օրհնությունը:
Դժոխքի ու դրախտի խաչմերուկում կանգնած են
բյուրավոր մարդիկ՝
Նյութական մարմիններով, և անկախ նրանից՝ նա
աթեիստ է, թե հավաքացյալ,
Իր սրբում կրում է իր իսկ սեփական արարչին:
Այդ ժամանակ պաշտոնյաները, քահանաները,
հովիվները, իմամներն²¹ ու փուլկուները²²
Տնտեսական և պետական գերկառույցների
առաջարար գործիչների հետ,
Վարչահրամայական համակարգով մարդիկ են
խմբավորում ու ուղարկում առաջ:
Այս աշխարհի օջախը, որ կարող էր ջերմություն
ստանալ հենց արևից,
Քանդվում է մոռացության մարմվող
հանցագործություններից:
Մայակովսկի, ժամանակը, որ մենք վերապրել ենք,
փաստեր է առաջարկում,

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Որոնք քո պոեզիայի անմահ ոգին դիմավորում է
հավասարակշռությամբ ու կայարում
Իր թռիչքը մահացու կիրճի ու արդեն անցյալում
մնացած անանուն գագաթների վրայով:
Քո ծանրակշիռ ու լուրջ փողերը կխայտառակեն ու
կպարծեն
Նրանց, ովքեր փրկվում են մինչև քառապանքը
համբուսելը.
Քո բանաստեղծությունների ասփղային շղթան
կծածկի երկնակամարը,
Քո երկայթև ու արծաթե փողերը կմտնեն
պիեզերական բառապաշարի մեջ,
Քո փանջված լեզուն նման է գիսասփղի, այլ ոչ թե
սուզվող երկնաքարի,
Քեզ նվիրված հուշարձանը չպետք է
Բրոնզից պատրաստված լինի, որ չգողացվի,
Այն չպետք է լինի նաև մարմարից, որ չքայքայվի,
Նրա գորեղ ձողերը փեղադրված են մարդկային ոգու
պարվանդանին:
Մայակովսկի, քո լեզուն ու քո
բանաստեղծությունները
Նաղթանակ են չարությանն ընդդեմ, որ մեզ հայտնում
են երկիրն ու ծովը,
Յուրաքանչյուր թիզի հետ բառերն ընկղմվում են մեծ
խորության մեջ,
Գուցե և դա քո ընտրությունն է, որովհետև ողջ
կյանքի ընթացքում
Դու կիրառել ես բանաստեղծական արվեստն
ակնածանքի համար,
Այլապես դու չէիր նախապի փաղազափություն
մշակողներին,

ԸՆՁԱՌՅՈՒԹՅՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ

Երբ դու այն փեսնում ես, ուշադրություն ես դարձնում
նրա փեխնիկային ու ձևին,
Որովհետև առանց արյան, ցավի ու սրտի բառախաղի
Մեր պոեզիան կսկսի պարտվել ընդհանուր
պայքարում:
Մայակովսկի, մարմնիդ հանգչելու օրից մինչ այսօր
Ոչ մի գուշակ չի կարող կանխագուշակել այս
հուզահարույց ճիչը,
Ինքնավստահ քաղաքական գործիչների անկայուն
գործելակերպը,
Այսքան փարիներ շինծու պնդում էին, թե քո
պոեզիան վաղուց գրել է իր գերեզմանը՝
Ներքելով, որ այն այսօրվա երկրում կարող է լինել
լեզվի Նիմալայների գազաթ,
Շափ քչերը գիտեն, որ դու արդեն անցել ես Լեթա
գետի ջրերով՝
Նանց բոցի կափաղի լեզու, ու հասել մեր փներին,
Չնայած սա հորելյան չէ, որ կազմակերպել ես ինքդ
քեզ համար,
Քո գալուստի մասին փեղեկությունն օդ է բարձրացել:
Մայակովսկի, սա քո հարության օրն է կամ նոր
ծնունդ ես առել՝
Նաղթելով մահվան ծանր կշռին,
Մա ուրապիկ երևակայություն չէ, սա իրականություն է:
Որպես պոետ, քո դառը ճակատագիրն ավարտին
հասավ՝
Այդ թնդացող գնացքը կսուլա դարեր ի վեր:
Ցանկացած պահի կարող ես միանալ մեզ, միասին
կարող ենք
Տաճարներ կառուցել սրտով, շրթուքներով և ամբողջ
մարմնով,

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Որպես ժողովրդի հեզ ծառա ու մրաժող՝ ժամանակին
չենթարկվող բանաստեղծություններով:
Շողա, ինչպես աստղերը մութ գիշերներին, որպես
գոհաբերություն,
Որովհետև նրանք վեհորեն ու արթուն հսկում են
անձայրածիր փիեզերքն
Եւ նրանց լույսը շողում է անթիվ հոգիների վրա:

Մայակովսկի, մեր նոր Նոյ,
Արշալույսի ծագման հետ լեռնաշղթաների
գագաթներն արդեն սպասում են
Քո փապանի իջնելուն թե երկրի վրա և թե
օվկիանոսում:

Պոեզիան չի մահացել - նրա շունչն ավելի ծանր է, քան
կապարի կտորը,
Ու չնայած նա աշխարհի քահանան չէ և չի կարող
մարդուն ազատել մեղքից,
Նավարա, խնդրում եմ, նա հավեր կանգնած կլինի
Մարդկության բարոյական արժեքների
բարձունքներին՝
Չնահանջելով անգամ մի քայլ՝ բարձր պահելով իր
հասարարուն ձայնը

Դարեր ի վեր:

*1. Վլադիմիր Մայակովսկի(1893-1930) - Ռուս առաջա-
րար մոդեռնիստ-բանաստեղծ եւ դրամատուրգ: Նրա
ստեղծագործությունները կազմված են 13 հատորից:*

*2. Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Բլոկ(1880-1921) - Ռու-
սական գրական սինվոլիստական շարժման առաջա-
րար բանաստեղծ:*

3. Չե Գեւարա(1928-1967) - Արգենտինայում ծնված, Կուբայում եւ Լատինական Ամերիկայի այլ երկրներում հեղափոխական շարժման գործիչ:

4. Աուգուստո Սեսար Սանդինո(1893-1934) - Նիկարագուացի հեղափոխական գործիչ եւ պարտիզանական ուժերի առաջնորդ:

5. հոներ - քոչվոր ժողովուրդ, ձևավորվել է 2-4րդ դարերում, մերձուրալյան տարածքներում, ուզբական ու սարմաքական ցեղերից, որոնց միացել էին Մոնղոլիայի տափաստաններից գաղթած թուրքալեզու հունևու ցեղերը:

6. Մարինա Յվերաևու(1892-1941) - Սովետական դաշրջանի մեծ գրող:

7. Ալեն Գինզբերգ(1926-1991) - Ամերիկացի հանրաճանաչ քանասրեղծ:

8. Լիլիա Բրիկ - Մայակովսկու սիրուհին:

9. Տարյանա Յակովլևու(1906-1991) - Էմիգրանտ Ռուսաստանից, ով Փարիզում շահել է Մայակովսկու սիրտը:

10. Պարլո Ներուդա(1904-1973) - Ծնվել է Չիլիում: Նա 20-րդ դարի Լատինական Ամերիկայի ամենահայրնի պոետն էր:

11. Սեսար Վայլեխո(1892-1938) - Ազդեցիկ եւ սովանգարդ գրող Լատինական Ամերիկայից:

12. Աթթիրա Յոժեֆ(1905-1937) - 20-րդ դարի Նունգարիայի մեծ պոետներից է:

13. Վիրեզուալ Նեզվալ (1900-1958) - Չեխոսլովակիայում պորտեալիզմի հիմնադիրներից մեկը: Խաղաղության համաշխարհային մրցանակի դափնեկիր, ՉԽՄԾ ժողովրդական գրող:

14. Նազրմ Նիքմեթ (1902-1963) - Նա դրեց Թուրքիայի ժամանակակից պոեզիայի անկյունաքարը:

15. Վլադիսլավ Բրոնեւսկի(1897-1962) - Լեհաստանի ամենահայրնի հեղափոխական պոետն է:

16. Յանիս Ռիցոս(1909-1990) - Նեղափոխական պոետ, Ժամանակակից պոեզիայի նորարար Նունաստանում:

17. Պիեռ Պազոլինի(1922-1975) - Տայրնի իրալացի պո-

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

էր, ռեժիսոր եւ կոմունիստական կուսակցության անդամ:

18. Լուի Արագոն(1897-1982) - Նայրնի ֆրանսիական պոետր, կոմունիստական կուսակցության անդամ:

19. Բորիս Պաստերնակ(1890-1960) - 20-րդ դարի ռուս հայրնի պոետր:

20. Սերգեյ Եսենին(1895-1925) - 20-րդ դարի ռուսական պոետիայի հայրնի լիրիկ:

21. Իմամ - մահմեդականությունում հոգետր ծառայող:

22. արուկու - Բուդդայի երեք մարմիններից մեկը:

ՄՆԱՅՈՒՆԸ

Նախաբան

Երբ գիշեր է, ես դառնում եմ Մեծ շերեփի յոթ
աստղերը,
Կեսօրին ես վերադառնում եմ իմ ցեղի մոտ:
Բարեբախտաբար, ես ձյուժ ունեի վառելու,
Ինչի լույսի փակ ես փեսնում եմ եւ՛ կյանքը, եւ՛ մահը՛:

1.

Ես իսկում եմ աղը լեզվից
Ու կարծես էլեկտրական ցնցում սրանում:

2.

Լեռնաշղթաների երգչախմբի ձայնի հետ մեկտեղ
Մթության մեջ լսվում է
Բամբուկե եղեգի փավղի խոխոջյունը:

3.

Ես չեմ գողացել ավանդույթները,
Դա ինձնից հեռու է: Նույնիսկ սրվերից ձգված
Բազուկներն իմ բավարար չեն:

4.

Իմնելու կաշվե թասի մեջ կեղտ է հայտնվել,
Ինձ համար շար դժվար է այն հեռացնել,
Զարմանալի չէ, որ ինչ-որ մեկը անձրև է թափում
երկնքից՝

Ինձ մաքրելու համար:

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

5.

Նանկարծ ճայթյուն լավեց
Պապից կախված ավանդական սրից:
Բիմոն² ասում է, որ կարող է գուշակել անեծքն ու
օրհնությունը,
Բայց ոչ անկայուն աշխատանքով:

6.

Մինչ իմ բերանն ասում է երկու,
Երկուսը չի կարող դառնալ երեք,
Բայց երբ բարձրաձայն ասում եմ երեք,
Անթիվ իրերի պարկերներ են հայտնվում...

7.

Անցած գիշերվա բուխարու թեժ բոցերը
Այժմ պարզապես մոխրի մի կույտ են:
Եթե նույնիսկ մրրիկ լինի,
Ոչ մի թանաքի հետք այսօր չի լինի:

8.

Մի հատիկ ազաթ գրավ երեխան,
Երբ ոչխարներին արոտի էր փանում,
Տղան չգիտեր, որ ինքը բախտավոր է,
Նա միայն երազում էր մի կտոր եգիպտացորենի
թխվածք ունենալ:

9.

Ես չեմ միայն եզակի վկան,
Բայց ես լսում եմ մի ձայն՝
Մուրցով կանչում է իմ անունը
Սանքսինգի բլրում³ գտնվող դիմակից:

10.

Իմ մարմինը կրակի համար է,
Երբ ոչ մի ուրիշ վառելիք չի լինում.
Նենց որ վառես, կրեսնես նրա պայծառությունը,
Այդպես չի կարող լուսավորել նույնիսկ
վառելափայտը:

11.

Ազապ անկման քարը,
Թռիչքից հետո մնացած սագը
Երգի ընթացքում կարող են երևալ,
Ինչպես արցունքի կաթիլներ,
Որ խեղդվում են կոկորդում:

12.

Մահն ու ծնունդը
Պոեզիի համար երկու հրաշքեր են:
Լեզվի շնորհիվ նա իր փեղն է գրնում
Տոհմաձառում:

13.

Երբ կրակն այրում է ինձ,
Իմ շրթունքներից ազապվող ճիչը
Շար փարփոհնակ է հնչում ինձ համար,
Ես չեմ կարող վստահորեն ասել, թե դա իմ ձայնն է:

14.

Իմ ոտքը պարահարար դիպավ մի քարի,
Բայց թողեցի այն՝ ընկած դաշտում:
Կներեք ինձ, ես այնքան էլ չեմ կարող վստահ լինել
Վաղվա օրվան, ես ապրում եմ այսօրով:

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

15.

Ես բամբուկե ֆլեյտայի և հովվական սուլիչի
արանքում եմ,
Աստուծո պարզևած լեզուն հնարավորություն է տալիս
Իմ բերանին, որ ազուցված լինի կողմնացույցին՝
Նախապես սովորական օվկիանոսի համար:

16.

Ես բարձրացա Աստուծո ուսը՝
Նրան մի հանելուկ ասելու,
Բայց ես թմրած սկսեցի սավառնել սաղմոնի նման
Ջրերի վրայով՝ պարուրված լուսաբացի հրով:

17.

Նյութսուրի օջախը
Աշխարհի կենտրոնում է՝ հսկայական ջինգում:

18.

Ջիղի Փույին⁴ իր ամբողջ կյանքում
Երբեք չի լքել իր հայրենի հողը,
Բայց ասում է, որ ամեն ինչի մասին
Նաշվեպտություն է տվել աշխարհի ճանապարհներին:

19.

Արծիվը թռավ հեռավոր սահմաններ,
Մինչև ֆիզիկապես կործանման իր վերջնական
պահը,
Նա թույլ չտվեց, որ մեկը տեսնի
Այդ անսահմանության ու պարապի բարձրակետը:

20.

Ես մի փոքր կեպ եմ երկնի ու երկրի միջև,
Ու երբ ժամանակը շրջվում է,
Տեսնում եմ դարարկության խալը՝
Նայանված երկնքում:

21.

Ով սպանում է շնչափողի փիրապետությունը,
Թող այնքան երգի, մինչև լեզուն անզգայանա.
Որպես երգիչ՝ նա արդեն անցել է 57 սերունդ,
Ո՛վ գիտե, որ մարմնավոր ծրարված կամքն է
հաջորդիվ:

22.

Ո՛վ է սպեղծել լեռնաշղթայի ու երգի
ներդաշնակությունը,
Գու՛ցե մեր հերոս Ջիջ Ալուն⁵,
Նամբերության այդ մարմնավորումը դեռ շրջում է
երկրում
Եվ օգնում բերել ճամպրուկները փունդարձի
ժամանակ:

23.

Երբ արծաթագործ Էրզուն⁶ ձևավորում էր մեզ
արծաթից,
Թրթռուն թիթեռները վերածնվում էին ուրիշի
մարմնում,
Չնայած նա արդեն հրաժեշտ է փվել ապրողների
երկրին,
Նրա աշխատանքի կրկնոցը դեռ լսվում է մեր մեջ:

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

24.

Այդ վաղուց մահացած Շալո⁷ շունը
Այժմ պարզապես հանց սրվեր է քայլում,
Նրա արյունոտ սուր ժանիքների քրթքրթոցից
Ժամանակին կարողանում էինք ազատվել:

25.

Դա հիրավի մեր պատմական սխալն է՝ բաժանել
մարդկանց
Ըստ դասակարգի: Այժմ ես ունեմ երկու բան,
Որն ի սկզբանե ինձ չէր պատկանում.
Կարո՞ղ եք ինձնից դրանք վերցնել անմիջապես:

26.

Երբ թմրանյութի համը բերանս առա,
Կարոտեցի համը դառը հնդկացորենի,
Երբ հրաժարվեցի թմրանյութերից,
Նասուն հնդկացորենի փեսիլքն էր հայտնվում իմ
աչքի առաջ:

27.

Լեռների խորքում կային ոսկե մաքներով
հանքափորներ,
Նրանք հորեր էին փորում այսօրեղ ու այնօրեղ:
Մա ապացույցն է հանցագործության, սակայն
վերքերը լռում են:

28.

Ձիերը հեծած՝ նրանք սպուգում էին իրենց
տարածքները,
Ձիերի մեջքին՝ նրանք պահում էին բաժակների
հավասարակշռությունն

Այնպես, որ չէին թափում գինու մի կաթիլն իսկ;
Իսկ հիմա մենք չունենք այդ հմտությունը:

29.

Ոչ որ չի համարձակվել ծաղրել մեր նախահայրերին,
Քանզի ողջ կյանքի ընթացքում
Նրանց գլուխները լեռների կապարների նման
դիպակետ էին:

30.

Ունենալով ասացվածքի ու թևավոր խոսքերի
պաշար,
Կարծում էիր՝ կարող ես կուլ փալ արևն ու կրակը:
Երեցները, նաբաժ օջախների ճակատագրիսին*,
Բառերով իրենց աշխարհը հասցնում են
թափանցիկության:

31.

Մթությանը մոռացության փրված ոչ բոլոր գրքերն են
Պարունակում լույսով շաղախված բառեր,
Մահվան հաղթանակներն անցնում են կողքով՝
փրորելով ուսերը:

32.

Մթության մեջ օդը հևում է գլխավերևում,
Մի լաստանավ գնում է քամու առջևից:
Միայն լույսն է կարող իր ողջ էությանը
Վերադառնալ իր սկզբնակետը:

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

33.

Նեռավոր լեռների անդորրի մեջ
Միայն երկնքից արտացոլվող լույսն է թույլ
փալիս մեզ
Տեսնել ձյան անցյալն ու ներկան՝:

34.

Միայն լույսը կարող է մեզ առաջնորդել՝
Անցնել անդունդի վրայով, թևեր փալ՝
Դառնալու Աստուծու սուրհանդակները:
Ոմանք ասում են՝ լույսը յուրաքանչյուրին փալիս է լոկ
մեկ հնարավորություն:

35.

Ես չեմ բռնել ժամանակի սանձը,
Բայց բախտի բերմամբ ես հեծել եմ լույսի ձին:
Նրա ճակատի փայլը արևի պաքից է;
Այն ինձ պարվիրում է՝ «Գնա ու հաղթիր մահվան»:

36.

Խավարից կառչածներից բացի, մյուս մշտագո
Էակները միայն կարող են ընտրել լույսը:
Ես գիտեմ՝ երկնականարի բարձունքներում
Լոկ լույսը կարող է բացել վաղվա դուռը:

37.

Լեռնագագթներն ընտրել՝ որպես բաժանման կետ -
Մի՞թե սա է կիսում անսահմանությունը:
Մա ինչ-որ բառ չէ, որից կարելի է հեռու մնալ...
Ո՛վ կարող է բաժանել թվացյալ միասնությունը:

38.

Նամասպետությունները չեն աղղում իրենց իսկ
սեփական ճամփեքին:
Լուռ Ծիր-Կաթինը ամենաբարձրինակ առեղծվածն է:
Քանզի քամի է եղել հավիպենական մթության մեջ...
Այն փչում է բաց դռան կողմը, որն երբևէ կնքված էր:

39.

Մեզալիսի՝ մեծ քարի վերևում,
Աստղաբույլերը տեղակայված են արմավենու վրա,
Նրանք սպասում են, թե երբ արգանդ կուղարկվեն:

40.

Մի սրբազան ճյուղ փնկեցին բարի հողում,
Ու հենց այդ պահին աստղազարդ երկնքում մի ասպրդ
ոչնչացավ:
Ու՛մ ձեռքով փնկվեց այդ սրբազան ճյուղը:

41.

Մի հավ անընդհատ կրթկրթում է,
Մի կաքավ թառում է կտուրի վրա:
Մի՞թե պեք է ճամփա ընկնել հենց վաղը:
Ես լսում եմ միայն աքաղաղի կանչը:

42.

Թամբը փան ներսում մի պահեք,
Այն հակասում է մեր փառուներին:
Իմ ձին նեպվում է ամպերի մեջ,
Նրա սմբակները զգուշությամբ են անցնում
փեփուրների վրայով:

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

43.

Ամաչկոտը խուլ-համր չէր,
Նա բնավորությամբ սակավախոս էր:
Նա սրիպում էր բառերին կաթ խմել
Ու բանալի պարտասպում նրանց համար:

44.

Ասում են՝ մեր արոտավայրերում
Կովերն ու ոչխարները միշտ փեսնում են նույն
բնապարկերը,
Բայց նրանք երբեք փեսած չկան քո մշուշոտ
կերպարանքը;
Այդ ժամանակից ի վեր խոպան հողեր են մնացել
այսպեղ:

45.

Ո՛վ է զարնվել ցողի կաթիլին, որն էլ ազարվեց խոտի
ցողունից
Եվ խուլ շառաչով գեպին ընկել, և հսկայական մի
գուր է փորվել:

46.

Նանուն բարձրաբերձ մեր լեռների
Ես պարտասպ եմ առաջ գնալ ու հանդիպել մահվան.
Նազարավոր փարիներ ի վեր ես միակը չեմ այսպես:

47.

Ոչխարները վաճառվել են հեռավոր վայրերում;
Այսօր երեկոյան փարախ կգան նրանց ոգիները:
Մթության մեջ նեպած քարը
Այլևս պարասխան հնչյուն չարձակեց:

48.

Ձիասպացները երգում են ժայռի լանջերին
Ու թույլ չեն փախն՝ արևի շողերը ապարդյուն
ծախսվեն:

Նաջորդ փարի այս երջանիկ ժամին
Արծվի ձագերն արդեն այսպեղ բույն կիյուսեն:

49.

Մի անգամ նա վազեց երեք հազար մղոն մեկ օրում,
Այդ կախարդական նժույզը նույնն է մնացել:
Սմբակների քառափրոփ ձայնը կարող է այնքան
շարունակվել,

Մինչև կսկսվի մի ուրիշ նոր խաղ:

50.

Ես աշխարհի հենասյունն եմ.
Առանց ինձ փիեզերքի մեջքը
ճռճռացող ու կոպիտ ձայներ կհանի:

51.

Չորս ոսկե վագրեր
Երկիրը պսպրում են իրենց ոտքերի փակ,
Ու ննջելով մեծ գեպի ափին,
Ես փեղափոխվում եմ վագրի բեղի փակ:

52.

Երբ դու այսպեղ ես, ժամանակը դյութանքով,
Շարժվում է գեպի հոսանքն ի վար:
Նրա անունը Դեյվիդյան¹⁰ է;
Այն հոսում է վեհ ու խոնարհ, հանգիստ, առանց
փրփրելու:

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

53.

Ես փասներկու ձյան ցեղի որդին¹¹ եմ;
Նրանցից վեցը բույսեր են, վեցը՝ կենդանիներ...
Աստվածները վկա, միայն մենք՝ կենդանի
էակներս ենք,

Սպանում մեր եղբայրներին:

54.

Լեռներում թաքնված է եղեգի բարակությամբ,
Փլեյբայի նման Նյուտոնի ողնաշարը,
Այն արձակում է մահվան հնչյուններ, եւ արձակում է
կյանքի հնչյուններ:

55.

Ամաչկոտրն ու Ջիդի Մաջիան
Երբեմն նույն մարդիկ են:
Նրանց ձայները լավում են լեռների երգչախմբից:

56.

Տարեդարձը մահվան յուրահապուկ
հաղթանակներից մեկն է
Առանց ծիսակատարության ու ապացույցների:

57.

Ես Ջիդի Լյուք Մաջիա-Լեյջն¹² եմ;
Իմ երակները բաց են:
Առաջ շարժվիր ու կրակիր, ես կշրջվեմ
Ու քո գնդակը կգտնի իր փեղն իմ սրտում:

58.

Մենք ունենք արյան վրիժառության ավանդույթը հին,
Եթե նույնիսկ լեռների սրվերը ծածկեն մեզ:
Լացիր, քանզի ունես արյան պարպը եռուն
դարաշրջանից մնացած,
Իմ բանաստեղծությունները բարձր են պահում
ազատության ու սիրո զգացմունքները:

59.

Նույսդ մի դիր քո ձեռքում գրավող սանձի վրա,
Այդ ձիուկը քո հավաքարիմ ուղեկիցն է:
Այո, մի ապավինիր ոչ մի բանի,
Վերջում կհասնես կրակի երկիր:

60.

Նյութընկալությունը մեր արժանիքներից մեկն է:
Մեր օջախների կրակները լույսեր են ճառագում:
Ճիշտ ժամանակն է շրջանցել գինու կաշվեթասը,
Այսօրվա կրակից մոխիր կմնա միայն:

61.

Շամա Վիզիրը¹³ ամենալավ կիթառ նվագողն է.
Նա ապրում է՝ ձգելով լարերը:
Ասում են՝ երբ նա մահացել է,
Քամին կտրել է նրա կիթառի բոլոր լարերը:

62.

Բակի այդ կարվի ձագը
Չգիտի ոչինչ կյանքի անհեթեթությունների մասին,
Նա միայն խաղում է մկան հետ,
Որպեսզի իմաստ փա իր կյանքին:

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

63.

Քահանան սալիպակ սանդուղք է դրել
Մարդկանց ու հոգիների միջև,
Նա ծուխ է բարձրացնում վեր,
Որպես ավերիս մյուս աշխարհին:

64.

Ես երագում էի, որ մայրս շերեփով
Մեղր հաներ ոսկեգոծ գեպից:
Արևի շողերում շքեղություն կար,
Քամին խճճում էր նրա մազերը:

65.

Նրանք անցյալի հաշվեպվությունն են, այդ
շրթունքները
Իսնել են գինին արծվի ճանկերով պարասպած
թասով:
Մենք անցորդներ ենք այս աշխարհում,
Նոր սեփականատերերը ավելի պարասխանապու են:

66.

Ես իմ ձեռքերով բույն եմ պարասպել՝
Նույս ունենալով նրանց հավաքել կարևոր
ընդմիջումներին,
Բայց վերջում հասկացել եմ,
Որ այդ ամենն իրոք ունայնություն է:

67.

Մինչ քո գիտակցությունը կանցնի լեզվի
լեռնաշղթան,
Քո արագավազ ձին երբեք չի հասնի բառերի սրտին:

68.

Ես ուզում եմ մտնել քաղաք առանց քաղաքի
պարիսպների,
Իսկ իմ ոտքերն ու հոգին ազատության պակաս են
զգում:

69.

Դու չես հայտնաբերել ինձ,
Ես միշտ էլ եղել եմ այսպեղ:

70.

Լեզունդն ասում է հասկի հատիկը կպչել է շան պոչից
ու փարածվել,
Նակառակ դեպքում այս նախալեռներում չէին լինի
բերքատու դաշտեր
Ոմանք ասում են, որ դուք բերում եք
պատահականության օրինակը,
Բայց այդ գուգաղիությունը պահանջում է
բացատրություն:

71.

Ես երբեք ամրացված չեմ եղել երևակայական
գրափախարակին
Ու չեմ կարող պնդել, որ ճակատագիրն է ինձ
առաջնորդում:
Ինչևիցե, բայց երբ Աշիլեյզին ինձնից հարցրեց,
Ես պատասխանեցի այնպես, ինչպես եղել է:

72.

Կանայք ցանցով ձուկ էին բռնում,
Նավաբնի ճրտերը արժեն փասներկու ֆունտ,

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

Այդ արհեստական արհեստներում խոհանոցի կրակը երբեք չի
հանգչում,
Բոլորը միայն կենդանի են հիմա աղոտ բառերում:

73.

Չնայած ինձ դուր են գալիս սևը, կարմիրը և դեղինը,
Բայց պահ է լինում՝ ես խենթանում եմ սպիտակի
համար,

Մակայն բոլոր գույների մեջ սոսկ սևագույնն է
Նարագապ իմ հոգուն:

74.

Ոսկեգոծ գեղը հոսում է ապագայի միջով՝
Անխռով ու անձայն, հստակ ու անշտապ:
Այն թաքցնում է երազները, միաժամանակ՝ նաև
արցունքները:

75.

Ես ուզում եմ վերադառնալ, բայց չեմ կարողանում,
Չեմ կարողանում, որովհետև չեմ ուզում:

76.

Ես ուզում եմ գնալ Մալա Նդիփո¹⁴
Ես այդ վայրում կմնամ յոթ օր, յոթ գիշեր:
Ու այդ ամբողջ յոթ օր, յոթ գիշերվա մեջ ես կսիրեմ
բոլորին,
Մակայն չեմ մոռանա իմ մեն-միակին:

77.

Յի ժողովրդի ասացվածքն ասում է՝
«Մթերքների մեջ հնդկացորենը չունի իր
հավասարը»:

Ես հենց երեկ եմ կերել հնդկացորեն:
Մայրս փարեցփարի փխրուն է դառնում:
Ո՞վ է ապրողների մեջ փեսնում իր կուսական դեմքը:

78.
Այս խավարի ու լույսի դարում
Ես չեմ դադարի արև երգելուց,
Քանզի իմ պոեզիան բեղմնավորված է լույսով:

79.
Ժամանակը պարում է դանակի ծայրին,
Միայն լույսն է թափանցում դեպի ապագա:

80.
Առածները կյանքի են կոչվում գինու սափորով,
Բոլոր նախադասություններն ունեն համը կրակի:

81.
Ես ապրում եմ աշխարհի ճաքերում,
Միայն լույսն է թույլ փալիս փեսնել՝ ինչեր են մեռել:

82.
Ինձ պարկանող թամբը կորցնելուց հետո
Ես կարողանում եմ թռչել հոգու թևերով:

83.
Իմ մայրենի լեզուն հեկեկում է խավարի մեջ,
Նրա թևերը սփիպված են անցնել արշալույսի ասեղի
ծակով:

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

84.

Ես փափանվում եմ կրակի ու ձյան միջև,
Այդ պահը ոչնչով չի փարբերվում մահից:

85.

Խավարն ու լույսն են դեկավարում աշխարհը,
Նրանց հերթափոխը չի կարող խանգարվել:
Մահվան մշտական քամին բերում է մի գաղտնի
հաղորդագրություն՝
Նրանք անբաժան երկվորյակ քույրեր են:

86.

Այս անցած դարաշրջանի հերոսները,
Ասրվածներն ու ռազմիկները հսկում են լեռները:
Խաղաղ երկինքը գրնվում է հեռու հեռվում,
Միայն արժանապատվությունն է հատում մահն ու
ժամանակը:

87.

Ես չեմ հեռանա այս աշխարհից՝
Լեռների գրկից, արշալույսից,
Նենց որ կրակը կլանի մարմինն իմ,
Ես մի ծիպ կուղարկեմ՝ ձեզ պարմելու կյանքս...

88.

Ես հմայիչ խոսքեր չեմ թողնի այս աշխարհում,
Քանի դեռ շարունակվում է կոտորածը:
Ես միայն կարող եմ գլուխս մտցնել փոշու մեջ
Ու շշնջալ՝ «Վերջ դրեք արելությանը»:

89.

Եթե նույնիսկ մարդկությունը, որպես ամբողջություն
հուսահատվում է,

Մենք չենք կարող հուսահատվել,

Որովհետև մենք մարդկային էակներ ենք:

90.

Իմ ձայնի փոխում կան մարդկային հնչյուններ,

Որոնք արձակվում են հարյուրավոր ու հազարավոր
մարդկանց սրբերից:

Այդ բոլոր հնչյուններն ամփոփվում են իմ մեջ

Ու դառնում իմ ձայնը:

91.

Երբ այն օրը գա, որ աշխարհն այս

Վերջապես կգնահատի իմ արժեքը,

Կսկիծը կանհետանա իմ բոլոր վերքերից,

Ու վերջապես ես կդառնամ լույսի մի շող:

92.

Ճշմարտությունը, հեռվում նստած,

Դիպում է մեզ: Ազիշիզուն¹⁵, նույնպես,

Բայց երբ մենք ուզում ենք նրան մոտենալ,

Մոլորությունը նույնպես նստում է նրանց մոտ:

93.

Ես արթնանում եմ ամեն օր, որպեսզի փեսնեմ

Երկնքում իշխող Ինը դեղին աստղերը¹⁶:

Ոչ բոլոր գուշակություններն են բացահայտում
մարդկանց ճակատագրերը,

Պոեզիան գովերգում է լոկ արևի ու լուսնի

հավերժական շարժը:

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

94.

Ես չգիտեմ, թե որտեղ է Բբիլոզիբբո¹⁷ սարը,
Կամ, որ ժամի և որտեղից է փչելու քամին:
Էական չէ, որ սենյակը մութ է, կրակի լույսի փակ ես
զանազանում եմ անուրջները,
Ավելի ճիշտ, ես անհանգստանում եմ իմ
մերձավորների կյանքի համար:

95.

Նենց ի սկզբանե ես չեմ ապրել ինքս ինձ համար,
Ուրեմն, ես համարձակվում եմ ժամանակից շուրջ
Վերցնել թվացյալ սուրն ու մխրճել սիրտն իմ:

96.

Իմ սիրտը պատված է սպիներով,
Բայց աշխարհին նայում եմ հաշտ ծիծաղով,
Եթե, իրոք, կարողանայի անցնել ժամանակի
ծերպերով,
Նավանաբար կգտնեի երջանկության բանալին:

97.

Պուրակում մի աղավնի է դես ու դեն թռչում,
Բայց հուսալով, որ կթռչի հեռու, երկնի լագուր
զագաթները,
Նրա միակ անհանգստությունը բազեն է հանկարծ
չհայտնվի -
Մահը կթողներ դափարկություն օդում, որտեղ կյանք
կար մի ժամանակ:

98.

Իմ ծննդյան օրից մայրս լողացնում էր ինձ մաքուր
ջրով,

Երբ լքեմ աշխարհն այս, ինչ-որ մեկը կլվա ինձ մրով:
Այս գեղեցիկ ու կեղտոտ աշխարհը
Նման է ջրի կաթիլի, որն անցնում է մի ակնթարթում:

99.

Մի մեծ կապու գաղտագողի մոտենում է անտառին՝
Ներսում թողնելով իր կերպարի պայծառությունը,
Ես հրաժարվել եմ մեկբառանոց խնջույքի հրավերից,
Բայց նշել եմ 10 000 նախադասություն ունեցող
խնջույքին թռչելու ամսաթիվը:

100.

Քունս՝ ձեռքերում, թամբին՝ մերձակա
Բառերը հանց պայտեր զնգում են ունկերիս մեջ,
Իսկ փնից դուրս պառկած է մի լուռ, ամա երկիր:

101.

360 աստիճանի երկինքը միշտ խառնում է
Մաքուր ու կեղտոտ էներգիայի պոռթկումը՝
Կյանքի ու մահվան դռան վերևում պահելով
վարպետությունը:
Ուրիշ ինչ-որ մեկն էլ դիպողի դերում է:

102.

Տան ծակծկված փանիքի ճեղքերից
Առկայծում է աստղազարդ երկինքը:
Կարո՞ղ է մի ուրիշ փանիք լինել աստղերի վրա, թե՛
պարզապես արշալույսն է դա:
Մա առեղծված է և ունի «գուցե և» պարասխանը:

103.

Աշխարհում անհամար բաներ ծնվում և մահանում են, Կյանքի ու մահվան դարպասները միշտ բաց են: Բոլորի նման մահից հետո ես կունենամ երեք հոգի, Որոնցից մեկը կշարունակի պոեզիան դարեդար:

1. Ջիղի Մաջիան ավարտել է բանաստեղծությունների այս ժողովածուն անմիջապես «Ջահերով փառապրոնից» հետո, 2016թ.: «Ջահերով փառապրոնը» նշվում է Լիանգ-չան Յի՝ փոքրամասնություն կազմող ցեղի կողմից, ամառային արևադարձի օրը:

2. Բիմո - Արիմոն քահանա, ով ծիսակատարություններ է անում և սուրբ երգեր երգում: Յի հասարակության մեջ, ըստ ավանդույթի, բիմոններ լինում են փղամարդիկ, և այդ պաշտոնը ժառանգաբար անցնում է հորից որդուն:

3 Մանքսինգ Մունդ - Ննագիրական օբյեկտ, որը հայրնաբերվել է Գուանդան քաղաքի մոտ գտնվող Սիչուան վայրում: Բրոնզե դիմակներն ու քարանձավները թվագրվում են 3000-5000 տարի:

4. Ջիղի Փոյի - Իմաստուն երեց, պոեզի հոր համաքաղաքացին:

5. Ջիջ Ալու Յի - Ժողովրդական, առասպելական հերոս, ում սիրանքները ներկայացված են «Գիրք ծագման» /Book of Origin/ գրքի նույնանուն էպոսում:

6. Էրգու - Ըստ Յի ժողովրդի ավանդույթի՝ արժաթագործի անուն է:

7. Շայո - Շան անուն է, որը բանաստեղծը հիշում է մանկությունից:

8. Նյուսուոի կողմից օգտագործվում է «ndeggu» բառը (չինարեն՝ degu 德古), այն վերագրվում է մեծ փորձառություն ունեցող մարդուն, ով կանչված է խորհուրդներ տալու և միջնորդելու վեճերի ժամանակ:

9. Նյուսուում օգտագործվող «snow» բառը սրուգա-

բանորեն կապված է «aruwasa» բառի հետ, որ նշանակում է հոգի, եւ խորհրդանշում է ընդհանրական կամ անհատական ամենավեհ ձգտումներն ու արժանիքները:

10. Դդիփոյնո - Գեյ, որը գրնվում է Մեծ Լիանգզանի սրբում: Այն հաճախ է հիշարակվում կանանց գեղեցկության նկարագրություններում:

11. Ըսր «Գիրք ծագման» ժողովածուի՝ երկրային կյանքը ծագել է ձյունառար փարսածաշրջաններում, եւ 12 փարսածաշրջաններում էլ սկիզբ են առել 12 ցեղեր:

12. Ջիդի Լյուք Մաջիա-Լեյջ - Պոեթի լրիվ անունն է: Ջիդին նրա ընդհանրական անունն է, Լյուքը՝ հայրանունն է, Մաջիան՝ անհատական անունը, Լեյջը՝ երեխայական անունը, որն օգտագործվում էր միայն ամենամոտր բարեկամների կողմից:

13. Շամա Վիգիր - Վայրնի կիթառ նվագող:

14. Սալա Նդիփո - Վայրնի հավաքարեղի, որպես Յի ժողովուրդը փոխում է «Ջահերով փառաբանը»:

15. Ագիշիզուն - Ըսր ավանդույթի՝ հայրնի քահանա եւ ինասարուն մարդ Յի ցեղից:

16. Ինը դեղին աստղերը աստերոիդներ են, որոնցում յուրաքանչյուր աստղը ներգործում է հաջորդականությամբ, ըստ թվային համակարգի, որն ինտեգրված է չինական «luoshu» բառին (նշանակում է իննսկողմ պարկեր, որն օգտագործվում է գուշակություններում), Յի փոքրամասնության փաստայնա արեւային օրացույցի մեջ: Աստերոիդները հիշարակվում են «Տիեզերքի սերունդ» վերնագրված աստղագուշակական տեքստում, որը Յի լեզվից չինարեն է թարգմանվել Վանգ Յիգի կողմից: Նախագահ Լյու Վենթինը քննարկել է «Ինը դեղին աստղերի» կապը գուշակությունների ու օրացուցային ժամանակահատվածի միջեւ:

17. Բրիլոգիրո - Լեռնաշղթա, որը Յի ժողովրդի կողմից հիշարակվում է որպես աշխարհագրական առանձնահատկություն: Ասում են, որ այն գրնվում է Յունան նահանգում:

18. «Flyting»-ը բանավոր բառախաղ է, որի ժամանակ

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

մասնակիցները պետք է իրար հաղթեն իրենց սրամտությամբ, երեւակայությամբ, ասացվածքների խնացությամբ: Յի հասարակության մեջ այս խաղը խաղում են փոնական օրերին կամ ավանդական առիթներով:

19. Յի մարդիկ հավատում են, որ մահանալուց հետո մարդն ունենում է 3 հոգի: Առաջինը վերադառնում է նահապետի մոտ, երկրորդը ընդունում է զոհաբերություններ (որոնք դրվում են հիշատակման արտեի առջև), երրորդը մնում է դիակիզման հողում: Նյուտուի մարդիկ այդ 3 հոգիները կոչում են «hlayi», «hlayju» եւ «hlage», գրական թարգմանությամբ՝ « իմաստուն հոգի», «կիսաիմաստուն հոգի», «ոչ իմաստուն հոգի»:



Ի
Ս
Ս
Ե
Ն
Ե
Ր

ԵՎ

Ե
Ի
ՈՒ
Յ
Թ
Ն
Ե
Ր

Լիլիթ ՂԱԶԱՐՅԱՆԻ
թարգմանությամբ

**Ռուան պոեզիայի 20-րդ
մրցանակաբաշխության արարողությանը
հնչեցված պատասխանը**

Նարգարժան պրն. Ռուան, հարգելի ժյուրի, ընկերներ.

Երախտագիտության անհուն զգացումը ողողեց հոգիս, երբ ծանուցվեցի, որ Ռուան մրցանակաբաշխության ժյուրիի որոշմամբ դարձել եմ Ռուան պոեզիայի 20-րդ մրցանակաբաշխության դափնեկիր: Ծանրակշիռ նկատառումներից ելնելով, այն է՝ նախաձեռնության անաչառությունն ապահովելու նպատակով, պրն. Ռուանը, ներառյալ ժյուրին, այդ հաստատման հետ ոչ մի կապ չունեն: Նրանք իրավամբ քաղաքացիական հասարակության, գոլայական ավանդույթի մրավորականներ են, այսինքն՝ սրբով ճնշվածների հետ ու գիպելիքի համար աչք են՝ իրավամբ զարգացած ընտրանի: Ո՛վ կարող է ասել ինձ,- այսօր Չինաստանում, բացի Ռուան մրցանակաբաշխությունից, պոեզիայի քաղաքացիական մեկ այլ մեծարանք գոյություն ունի՞, որն անխափան ընթացել է մինչև իր 20-րդ առիթը՝ հավատարիմ մնալով արդարության ու անխտրականության իր հիմնական սկզբունքներին, անդրդվելի ցանկացած ոչ-բանաստեղծական հանգամանքների կամ գործոնների՝ ինչպես քաղաքական, այնպես էլ առեւտրային շահերի հանդեպ. այս ցուցանիշը հրաշքի պես մի բան է: Ինքնին հասկանալի է, որ պիպի լինեն չերգված հերոսներ ու պարամոթյուններ, որ հազիվ թե պարմվել են՝ անսալով նման աննկուն հերոսության: Անասելի այն ամենին, որ փոկունությամբ դիմադրել են, այժմ հարմար թաքնված են նրանց անասան ոգու խորքում. նման իրադարձություններն, անխոս, կապող օղակ են հանդիսանում՝ լցնելու նրանց կյանքը ար-

փակարգ կարեւորությամբ: Որպես մրցանակակիր, ես պիտի գլխարկը ձեռքիս ոտքի ելնեմ, որ նայեմ նրանց աչքերի մեջ՝ հիացմունքով ու ակնածանքով:

Ես պիտի ըստ արժանվույնս հարգեմ նրանց, քանի որ նրանց հետ նույն հայացքներն եմ կիսում, բայց հավելեմ նաեւ, որ իմ հարգանքը լիովին բխում է պոեզիայի արվեստի հանդէպ փածած իմ համընդհանուր նվիրումից, ինչը ոչ մի դեպքում մնայուն իրավունքների, ասենք՝ այս մրցանակով փառավորվելու ժեստի կարող համարվել: Իսկ եթէ դա ճիշտ է, ապա արդարեւ կանգնած եմ մարդկային հոգու պղծության ու անհավասարմության բարձրագույն աստիճանին: Բացահայտ խոստովանել իմ երախտագիտությունը՝ համարժէք է Պուշկինի եւ Շեքսպիրի ճշմարիտ սիրահարների հետ իմ ամուր կապի հաստատմանը, ինչպէս նաեւ իմ մեծաթիվ արձակ գրվածներում պոեզիայի հանդէպ փածած իմ անսասան հավատին՝ պայմանավորված կյանքի մաշած խնդիրների անխիղճ հալածանքներով, ինչպէս օրինակ՝ շքեղությունն ու արտաքին ցուցամոլությունը՝ անվանարկված մեկ դար առաջ Էյնշտեյնի պէս հսկաների կողմից՝ իբրեւ խոզանոցի բարոյական հիմք:

Մինչդեռ քաղաքակրթության այս ժանտախտային արսարը անհրաժեշտ է հնարավորինս արագ չեզոքացնել ու կասեցնել հնարավոր բոլոր միջոցներով, թեւէ ես խորապէս գիտակցում եմ այն փաստը, որ մարդկային քաղաքակրթությունը պարկեշտության /քաղաքավարության/ ցանկացած մակարդակի հասցնելու համար նրանց շարքերում պէտք է լինեն հանճարեղ ճգնավորներ ու դեկավարներ, բանասպրեղծներ, որոնք թեւէ սակավաթիվ, բայց արթուն հսկում են մարդկային մշակույթների ողջամտությունը եւ որոնց ներկայությունը

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

խոսում է երկրագնդի վրա մարդկային ցեղի բնական ընտրության ծավալների մասին, լոկ այն պատճառով, որ պոեզիան իր մեջ կրում է մարդու եզակի էությունը, ճշմարիտն ու բարին, մարդկային արժանապատվության ու երեսակայության մոդելավորումը, ճարտարամիտ ու բառերով արտահայտված գեղեցկության բարդագույն ուղիները:

Երբեմիցէ, մարդկության արշալույսին, պոեզիան մեզ հետ էր, այն մեր ներքին գոյի անբաժան մասնիկն է կազմում: Ինչ-որ առումով պոեզիան, կրոնի հետ, մեր ունեցած ամենագեղեցիկ ու խորհրդավոր շրջահայեցությունը, ակտիվացրել է ժամանակը, ու կրկին ուժով, որի հզորությունն ու սկզբնաղբյուրը միանգամայն անհաս են մեր մտքին, ինչպես Ամենակարող փեզերական Գեզիպի բեկում կամ անդրադարձում: Մենք մեր Յի համայնքներում մինչ օրս պահպանում ենք մեր դարավոր հարգանքը, որ տաժում ենք մեր շաման-կերպարների նկատմամբ, այսինքն՝ Բիմոսի, որ շարունակ մոգոնում ու հաղորդակցվում են աստվածների ու երկրագնդի վրա ապրող բոլոր զգայուն էակների հետ: Դուք նրանց կոչում եք քահանաներ, սակայն մեր Յիերի համար, նրանք նաեւ պոետներ են, անվիճելի նախագուշակներ մարդկային երգերի եւ դյուցազներգերի:

Անշուշտ, այս խորհրդապաշտ գիպելիքն իմ բանաստեղծ գործընկերներին բաժին հանելով նշեմ, որ բանաստեղծական առոգանությամբ օժտված Ուրոպիան, անտեսանելի մի թագավորություն է, որի սահմաններում եւ սահմաններից դուրս շատ քիչ բանաստեղծների է հաջողվում շրջել ու շրջադիպել: Դա անկեղծորեն արկած կամ խիզախում է՝ դեպի անհայտություն, գեղագիտական կարարելություն: Ինքս ինձ սփոփում եմ, որ նույ-

նիսկ ամենաուշագրավ ու նրբաճաշակ մարդկային արարածներից, բոլոր մասնագիտացած ու խոսքի գիտակ վարպետներից առավել բանաստեղծներն են մեծագույնն ու աստվածայինը: Թագավորներն անգամ բանաստեղծների կարծիքի դեմ անհամաձայնություն չեն արտահայտում: Ինչ-որ մեկը հավաստում է, որ պոեզիան ամենաթանկ քարերի միջի ադամանդն է, մարդկային հոգեշինության ամենաթանկ մեքաղը, այն հնչյունի ու բառի կապարյալ համադրությունն է՝ լավագույն դասավորությամբ:

Ընկերներ, ուզում եմ ձեզ մոտ սիրտս բաց անել իմ օրերս կապարած պոեզիայի երկարատև ճամփորդությամբ: Բարեբախտաբար, ինձ հրավիրել էին Մեքսիկա՝ ներկա գտնվելու Լապինական Ամերիկայի երբեմնի ինձ հանդիպած ամենապաղանդավոր գուսաններից մեկի՝ Սեզար Վալեջոյի ծննդյան 120-ամյակին նվիրված փոնակատարությամբ: Երբ Սեզար Վալեջոյի հայրենի քաղաքում էի՝ Անդի սրբում, այդքան անհավարալի հեռասույգ, մեկուսի ու գերախորշ, ինձ վրա անջնջելի փայլվորություն գործեց այն, որ մինչ օրս պոեզիան փեղարնակների վրա իր հզոր ազդեցությունն ունի: Սեզար Վալեջոն, ում շուրթերից մարդկային վշտի ու հրճվանքի գագաթնակետին հասնող այնպիսի հուզիչ, աղիողորմ երգեր են ասվել, եղել է ժամանակի ամենավերջին կարկառուն օրինակներից մեկը՝ ի վկայություն հռոմեացի դափնեկիր-բանաստեղծ Քվինտուս Նորապիուսի առաջի խորիմաստ ճշմարտասիրության՝ պոեզիան ավելի հարատև է, քան բրոնզը:

Մանյազո դե Չուկոյում, պերուական /Անդեր/ լեռնաշղթայում, իմ սեփական աչքերով ես մեկ առ մեկ փեսա նրա ցեղի մարդկանց, որոնք արտասանում էին նրա

բանաստեղծությունները. նրանց ձայնի ելևէջներում արժանապատվության նոտա կար, նրանց դեմքերին՝ հանդիսավոր գնայլանքի արտահայտություն: Դա մի տեսարան էր, որ ցնցում ու գերում էր: Նամարվելով 20-րդ դարի մեծագույն բանաստեղծական նորարարներից մեկը, ցանկացած լեզվով, միայն սակավ ընթերցողների է հաջողվում ազգարվել նրա լաբիրինթոսից: Դեռ ավելին, մինչ օրս նրա խորամուխ կարեկցանքը ազգագրկվածների ու անարգվածների հանդեպ, նրա բնատուր մարդասիրությունն ու անդադար պրպումները կյանքի ու մահվան ամենախնդրահարույց հարցերի շուրջ, ցնցել ու ոգեշնչել են ողջ աշխարհին, բանաստեղծներին ու հասարակ ընթերցողներին, որոնք դեռ զգայուն են խղճմանքի հարցաբանության հանդեպ՝ համակված բարի մտայնությամբ ու գեղեցիկ զգացումով: Մի առիթով Սեզար Վալեջոն գրել է. «Մի սեւ քար դրված էր սպիտակ քարի վրա»: Նա իր սեփական մակագիրը գրչում էր բանաստեղծական առոգանությամբ, ավելին՝ վերջին հաշվով նա փիլիսոփայում էր մահվան իմաստի շուրջ:

20-րդ դարի ամենաարմատական ավանգարդ բանաստեղծ Սեզար Վալեջոնի կյանքի մայրամուտից սահել է յոթանասունչորս տարի: Սակայն տարօրինակ է՝ ես երբեք չեմ զգացել, որ նա մեզ հետ չէ: Ինձ համար նա ապրում է մեր մեջ ամեն մի բոպե: Տարագրված ֆիզիկապես ու հոգեպես, մշտապես դաժան կարիքի մեջ: Եվրոպայում, նա երբեք չվերադարձավ իր հայրենի երկրի ծալքերը: Բայց եւ այնպես այսօր նրա մասին հուշերը վկայում են, որ նրա բարի համբավը շրջել է ամբողջ աշխարհով մեկ՝ սփռվելու այն բոլոր մարդկանց, որոնք սիրում են նրա բանաստեղծությունները՝ հանց հսկա մի քար պերուական Անդերի, իբրեւ աշխարհի երեւելի քաղաքացի:

Նրա բանաստեղծական ժառանգությունը վկայությունն է իր կոթողային մեծության, հավաստելով այն, որ մեծ բանաստեղծներն ու մնայուն պոեզիան պիտի գերակայի բոլոր մութ ու չար ուժերին: Ի վերջո, նրա պատմությունը ընձեռում է մեզ ծայրագույն լուսավորվածություն առ այն, որ թույլ ու պարզունակ պոեզիան չի վերապրեցնի իրեն թուլացնողին: Ժամանակն ամեն բան իր տեղը կդնի: Սա լեզվիս ծայրին պահ տալով՝ ես պիտի պահականամ ցանկացածին՝ ինքնագթությունից ու ինքնագոհունակությունից, ու պիտի շարունակեմ առաջ շարժվել՝ մարդկային խիզախության ու համեստության մեծագույն չափերով՝ առաջ փանելով իմ գեղարվեստական նկրտումները:

Շնորհակալություն ուշադրության համար:

**Ուղերձ Ֆեռնանդո Ռենդոնին,
մրցանակաբաշխության արարողության ժամանակ՝
ի նշանավորումն Ֆ. Ռենդոնի՝
Պոեզիայի համաշխարհային շարժմանն ուղղված
անուրանալի ավանդի**

Տիկնայք եւ պարոնայք, սիրելի բանաստեղծներ.

Այսօր ինձ պատիվ է ընձեռնվել մրցանակ հանձնել պրն. Ֆեռնանդո Ռենդոնին նրա փայլուն առաջնորդության ու մեր մոլորակում պոեզիայի ընդլայնման, իբրեւ հզոր գործիքի խթանմանն ուղղված նրա անուրանալի նկրպումների համար. ի նշան մեր երախտագիտության ոչ միայն որպես հրաշաշնորհ, խարիզմատիկ առաջնորդի, որ նախաձեռնել է երկու մեծագույն ժամանակակից մշակութային շարժումներ՝ Մեդելինի եւ ՆՊՇ/Նամաշխարհային պոեզիայի շարժման/ Պոեզիայի միջազգային փառատոները, այլ նաեւ որպես կանչ գործողության մեր բոլոր այն բանաստեղծ ընկերներին, որոնց համար նրա օրինակը ոգոշնչման աղբյուր է, եւ ցանկություն ունեն մրցակցել Ֆեռնանդո Ռենդոնի հետ՝ ի նպաստ այն մեծ գործի, որի համար մեծն կոլումբիացին եղել է նման համախմբման նիշ ու չափանիշ: Ինչ վերաբերում է կոլումբիացուն, որին մենք պատվում ենք այս հատուկ առիթով, վստահ եմ, որ այս դահլիճում ներկա գրնվող բանաստեղծներից շատերը, լավ ծանոթ են նրան: Փաստորեն, դեռեւս 1990-ական թթ.-ին Ֆ. Ռ.-ն, որպես պոեզիային նվիրված միջոցառումների կազմակերպման ու համաշխարհային պոետների միջեւ կապերի խթանման պաշտպանի ու գլխավոր դերակատարի անունից սպարեզ եկավ: Բոլորովին վերջերս Չինաստանում փպագրվել է նրա առաջին չափածո գիրքը, որի ներածա-

կան մասն այսպես են շարադրել.

«Ժամանակակից համաշխարհային պոեզիայի անսխալական վեր խոյացող անհատականության՝ Ֆեռնանդո Ռենդոնի կերպարը ավելի մեծ կարեւորության ունի, քան քնարական քանքար շքանշանները, ասել է թե՛ իբրև գործող փաղանդաշար բանաստեղծ, ճակատագիրը նրա ուսերին է դրել ներկա գլոբալիզացիայի դարաշրջանում համաշխարհային բանաստեղծական շարժումների դեկավարման պարփականությունը, ինչպես մենք բոլորս ականապես ենք, նա հաջողել ու այնքան հիանալի է պաշտոնավարել, որ արժանացել է համաշխարհային հիացմունքի ու մեծարանքի»:

Որքան որ ինձ հայտնի է, Ֆեռնանդո Ռենդոնը հայտնվել է Կոլումբիայի պատմության մեջ դժվարին ժամանակներում, երբ իր հայրենի քաղաքը արնաքամ էր եղել գրեթե կես դար փեւած եղբայրասպան պատերազմներից: Վշտերի եւ աշխարհի ու իր երկրի առջեւ ծառայած խնդիրների ժամանակ նա ներդրեց իր մտավոր բարձր կարողությունները: Բնականաբար, արդար կոլումբիացու հաշտեցման հաստատուն հավաքքի մեջ պոեզիան հզոր գենք է՝ ընդդեմ ներքին հակասությունների ու սոցիալական անարդարության, ինչպես նաեւ համաշխարհային խաղաղությունը ողջ աշխարհում հնարավոր դարձավ ի շնորհիվ պոեզիայի ու կյանքի համար բուռն թափ ստացած երկարատեւ բանաստեղծական գործողությունների: Մենք պարփական ենք պատվել նրան, քանի որ նա բոլորից առավել մեծ ավանդ է ներդրել պոեզիային նվիրված փարատեսակ միջոցառումների կազմակերպման գործում՝ ի նպաստ համաշխարհային պոեզիայի շարժման բարգավաճմանը, որի գործող մասն ենք կազմում մենք բոլորս:

Բանաստեղծական բերկրանք փարածելու կրքով բռնկված՝ Ֆեռնանդո Ռենդոնն այն մարդն է, որ ծնվել է հափուկ պոեմահյուս առաքելությամբ, մարգարեական պարզամտով, որը պոեզիան է՝ խաղաղության ու արդարության համար, հափել սահմանն ազգերի, ռասսաների ու կրոնների միջև: Արդյունքում՝ Մեդելինի պոեզիայի միջազգային փառապրոնի ֆենոմենալ հաջողությունների ստեղծագործական ներշնչանքին նա փառք ու փայլ ավելացրեց, ավելի մեծ գարկ փալով համաշխարհային պոեզիայի շարժմանը՝ բազմաբույլ ու բազմաբուխ բունակափարություններով՝ հիրավի ներգրավելով համաշխարհային բանաստեղծների համընդհանուր մասնակցությունը, ընդլայնելով վերելքը «նոր մոլորակային զգոնության, որը կնպաստի ժամանակակից հասարակության դիրքորոշման մեջ հրափայտ փոփոխություններին»՝ հակառակ համաշխարհային ճգնաժամերի՝ ի նպաստ խաղաղության, սոցիալական արդարության ու շրջակա միջավայրի պաշտպանության: Կարելի է համոզված կերպով ասել, որ այս երկնքի փակ ոչ մի աշխարհիկ մարդ երբեւէ այսքան նվաճումներ չի ունեցել, ինչպես մեր անկրկնելի Ֆեռնանդո Ռենդոնը՝ բարձրակարգ ռազմագեպը մշակութային շարժումների, շարժիչ ուժը բանաստեղծական բերկրանքի փարածման ու բանաստեղծների շրջանում նման վիթխարի մասշտաբով կապերի խթանման: ՆՊԾ-ն, ավելի ու ավելի, դիտվել է որպես գեներապոր՝ մարդկային արժեհամակարգերի վերականգնման եւ վաղը մեր կյանքն ավելի մարդկանականի հանդեպ վերակողմնորոշելու:

Մենք ապրում ենք արդյունաբերական պահանջների, զանգվածային սպառման ու զանգվածային ինֆորմացիաների /ինֆորմացիա + զվարճություն/ մի դարաշրջա-

նում, որ առաջնորդվում է գլխավոր լորդերի միացյալ նախասիրություններով ու դրան հետապնդողներով /դրամաորսներ/: Կոշտ կապիտալիզմի այդ ողջ փայլին Ֆեռնանդո Ռենդոնը թիկունքով շրջվեց՝ խիզախ հարված հասցնելով նրան, իսկ նրա այս մեթոդը ոչ այլ ինչ է, քան Ներկուլեյան արիություն, քանի որ նա հավատում է, որ բանաստեղծները կարող են հրաշքներ գործել ու առաջնորդել մարդկանց ազատության ու անկախության արքայական ճանապարհով: Զարմանալի չէ, որ շարերի համար նա ժամանակի Դոն Կիխոտն է հանդիսանում. իդեալիստական երագողը, ով անշփոթ «փոփոխություններ ներմուծելու ու հրապապ փրանսֆորմացիաների համար օգտագործում է պոեզիայի ուժը», իսկ նրա բանաստեղծական ընթերցումների միջոցով մարդկանց նյութապաշտական ֆեպիշից զարթնեցնելու փորձը նման է 16-րդ դարի ասպետական հերոսի չափազանցված սխրագործությունների: Բայց այդ ուժով, ռազմավարական պլանավորմամբ ու մարտավարությամբ մեր ժամանակակից Դոն Կիխոտը համախմբել է դաշնակիցներին ու դիմադրել չար ուժերին՝ ունենալով ֆենոմենալ հաջողություն դառնալու այն մոդելը, որին մենք հետևում ենք:

Նարգելի Ֆեռնանդո Ռենդոն, Յինհայի լիճ պոեզիայի միջազգային կազմկոմիտեի անունից՝ համեցեք սրանալ այս պատվավոր մրցանակը՝ ի հարգանս պոեզիայի միջոցով ավելի լավ աշխարհ կառուցելու՝ ձեր փասանայակներ շարունակ ներդրած համառ ու հերոսական ջանքերի:

**Մանիֆեստ`
Յինհայ լիճ պոեզիայի միջազգային փառապոռնի**

Մարդկության երգերի ամենահին օրրաններից մեկը, Չինաստանի երեք խոշոր ջրուղիներից սկիզբ առնող աղբյուրը` Յինհայը, պարծենում է աշխարհում ամենաբարձր սարահարթային տեղագրական դիրքով. անառիկ ու փառավոր դիրքում տեղակայված լինելով, չորս կողմից բանաստեղծական լուսապսակով պաշարված, այն իր ձգողական ուժով գերում ու աշխարհի բոլոր ծայրերից իր գիրկն է առնում հեռու-մոտիկ բանաստեղծներին, որպեսզի հավաքվելով սուրբ Կոկնոր լճի ափին, վկայեն խոշոր մշակութային միջոցառման մասին: Այսօր մենք, 23 երկրներից 220 բանաստեղծների այս փոքրիկ վաչկապուրն սեղմ միությունը, փողաշարվել ենք լճի ափին, որպեսզի հանդիսավորությամբ հռչակենք մանիֆեստը, հստակորեն հաստատական լինենք մեր բանաստեղծական բանականությանը, ինչպես նաև բանաստեղծական արվեստի սրբությանը:

Նախ եւ առաջ մենք համոզված ենք, որ անհիշելի ժամանակներից ի վեր մեր` մարդկային արարածներիս հետ պատահած ամենահիասքանչ բանն այն է, որ մենք ունենք ու համակված ենք պոեզիայով: Եւ առաջին սերնդի աշուղների ու քնարական երգիչների շնորհիվ մարդը դուրս է եկել քառսից` Յուրայի շրջանի ջունգլիների բնական ընտրությանից, անցնելով մինչեւ քաղաքակրթության ծագումը: Պոեզիան սկիզբ է առել մեր հին իմաստուններից, մարգարեներից ու բանաստեղծներից, որոնք երկխոսության մեջ էին մտնում աստվածների հետ հաղորդակցվելիս: Արվեստի ամենահին ձեռը` պոեզիան, մշտապես մարդկային տարատեսակ քննախոսու-

թյան շրջանակներում ապացուցել է, որ ամենակենսականն ու ազդեցիկն է: Անհնար է պարկերացնել, որ մարդն առանց Իլիականի, ջեսերի /հին եգիպտական բառարան-ուղեցույց/ ու երգարանի պես ներքին հենակի կարող էր հաղթահարել իր առջև ծառացած բոլոր դժվարությունները: Պոեզիան անձրեւի կաթիլն է, որ սնուցում է կյանքը, արեւի շողը, որ սփռվում է փրփուրներով, ծայրագույն աստվածային ուժը, որ մաքրում ու վեհացնում է մարդու բնույթը: Նոմերոսի, Լի Բոյի եւ Շեքսպիրի ոգեշնչող փողերը մեզ շրջապատող իրերը նրբագեղ են դարձնում, եւ իր հերթին կապարյալ գռեհիկ միջավայրը վերածում են հեքիաթային մոլորակի: Մարդկային գործունեության մշտահավերժ արթմնի պոեզիան սերտորեն միահյուսվել է այն բոլոր մշակութային թեմաներին, որոնք մեր հոգեւոր կյանքը հնարավոր են դարձնում:

Ներհայացք նետելով անցյալին նկատում ենք, որ նախորդ դարաշրջանը փուրք է փվել մարդկային փառքի հեղեղմանն ու անպարվությանը՝ հանուն իր կայացման: Չափից ավել անարժան փառապանքներ գոյություն ունեն: Տարածված է նաեւ աստվածաներշնչանքային փրկությունը: Մարտահրավերը վերածվում է հնարավորության, իսկ ճգնաժամը նոր թափ է առնում: Գործիքային խելամարտության խմորումը հանգեցրել է գիտության եւ փեխնոլոգիայի բարգավաճմանը՝ կորզելով վիթխարի այն ներուժը, որ թաքնված է մարդկային հոգեբանական գիտակցության խորքում: Ասպագինման ու բնության շահագործման իր ջանքերում մարդը հասել է լիակատար ազատության, ինչը ծանրապես գրնվում է նրա հանդուգն ձեռքերում: Մյուս կողմից՝ մեքենայից ու համակարգչից գերկախվածությունը վնասի իր բաժինն է հասցրել՝ ծնելով հոգեւոր նվաստացում ու անհասկացիկ

զանգվածային շնչահեղձություն, ինչպես նաև կտրուկ անկում իր սրտեղծագործական զարթոնքում:

Բայց հույսը դեռ չի մարել, եւ այդ հույսը վերստին նկատելի է պոեզիայի մեջ՝ էությունը մարդկային բանականության ու աչքը մարդկային խղճի: Բանաստեղծները, անկախ իրենց արմատներից ու կրոնական պատկանելությունից, նրանք բոլորը Արարչի կողմից օժտված են մաքուր բանաստեղծական սրտով, որը փրփում ու այրվում է ճշմարտության, Բարու եւ Գեղեցիկի պապակով: Այս պահին այստեղից, որ ամենամտյուն է արեւին, դիմում ենք մեր բոլոր գործընկերներին եւ բոլոր նրանց, ովքեր ցանկանում են վերստին լուսվորվել, ականջները լարեն եւ ականջալուր լինեն մեր մանիֆեստի հռչակմանը:

Մենք հանդիսավորությամբ հայտարարում ենք, որ պարտավորվում ենք վերականգնել բնական էթիկայի մաքրությունը՝ կարգավորելով մարդկային շփումը բնության հետ, կապող կամուրջ հանդիսանալ մշակույթների միջեւ հաղորդակցության ու փոխըմբռնման համար՝ բարձր պահելով կյանքի հանդեպ ունեցած հույսի ու հավատի անմար փարոսն ու առաջ մղել երկրագունդը, ուր փոխադարձ հարգանքը, հոգատարությունն ու սերն են գերակայում:

Մենք ամենայն լրջությամբ ազդարարում ենք, որ ձեռնամուխ կլինենք լեզվի մաքրմանը եւ բանաստեղծական արվեստի անունից օրինակ կձառայենք՝ հակադարձելով խաղաղությունն ընդդեմ պատերազմի, արդարությունն ընդդեմ մեղքի, եւ մեզ հասու բոլոր միջոցներով մենք կփորձենք գսպել փառապանքներն ու մահը:

Եւ վերջինը, որ ոչ պակաս կարեւոր է, մենք համապատասխան վերաբերմունք կդրսետորենք այն ամենի հանդեպ, ինչը հանրության կարծիքով էապես բանաստեղ-

ծական է, ծավալով փիեզերական ՝ արժանի մարդկային արժանապարվության՝ վերաձեւելով առողջ ու բարյացկամ հարաբերություններ, ներգրավելով աշխարհի բոլոր զգայուն էակներին: Նավաբացած ենք, որ բանաստեղծները պարվով կկատարեն իրենց առաքելությունը, մեծ հաշվով դա պոեզիայի առաքելությունն է:

Նանուն մեր պարասխանարվության, այս կենսական կարեւորություն ունեցող մարդկային արվեստի առաքելության համար, մենք անդադրում կշարունակենք մեր սրբագին պաղապանքները Մուսաներին: - Մեզ երբեք չքեք: Տվեք մեզ ոգեշնչում ու ցույց փվեք մեզ՝ խոցելիներին, ձեր հմայքը, որ հեպայսու, ի դեմս սուրբ Կոկնոր լճի (Յինհայ լիճ), մենք վճռենք ու աղոթենք:

-Թող Մայր բնությանը փառք վերագրվի: Թող կյանքն իր բոլոր դրսեւորումներում ազատ ու անկախ լինի: Թող քաղաքակրթությունն իր իրական նվիրական բարձրության վրա լինի: Եւ ի վերջո, թող վերստին պոեզիան մարդկանց սրբերում արմատավորվի:

**Լեռնաբնակների գոյաբանական հիշողություններն ու
օգնության հասնող մարզինալացված պատկերները**

*Գլխավոր նորա՝ 2014 թ. Յինհայի վավերագրական
փառատրոնի կրոր սեղան ֆորումում*

Ենթադրությունը, որը գնալով ավելի ու ավելի համոզիչ է դառնում, եւ որն, անկեղծ ասած, իմ սեփական փեսակերն է՝ միանգամայն անհավանական, կայանում է հետեւյալում. այսօր մարդկային քաղաքակրթությունը բաժանվում է երկու փիպաբանության՝ ծովային ու լեռնային: Իմ փարամերժ փեսակերներն, անշուշտ, կարող էին շարադրված կամ մշակված լինել ավելի փրամաբանական եզրույթով՝ թերություններից ու խեղաթուրանքներից խուսափելու համար, որոնք անխուսափելիորեն որպես կռվան են ծառայում՝ նման աղաղակող, փոխարկելի ու ծեծված ճշմարտություններում: Որպեղ էլ ընկած լինի ճշմարտությունը, այս փաստն ինձ համար պարզից էլ պարզ է. այսպես կոչված մարդկային քաղաքակրթությունը աճող արտադրողականության ու հարստության հանրագումարն է՝ հասարակական զարգացման եւ նյութական մշակույթի մակարդակը, որն առաջարկում է ինչպես նրա շուրջ սպեղծված բնական աշխարհի մեկնաբանում, այնպես էլ նվիրում իր ամենօրյա աշխատանքին եւ մարդկային փոխհարաբերություններին: Նաշվի առնելով այն հատուկ ուժականությունը, որ նյութականացված է ծավալվող արկածախնդրությունների, առեփրի, գաղութների, զանգվածային արտագաղթի ու ներգաղթի, հրեփանավակների ավարի ու հափշտակման մեջ, ծովային քաղաքակրթության պարմական նշանակությունն ու ներդրած ավանդը, որի հիմնադիր ռահվիրան է

հանդիսանում հունա-հռոմեական ժողովուրդը, եւ որի հետնորդներն են գերմանա-սլավոնական ցեղերը, հստակորեն ու ջախջախիչ կերպով առանձնանում են: Տաճար հինգ հարյուր թվականից ի վեր կոչու ու անողորմ հայացքը համաշխարհային պատմության՝ պայմանավորված բարձր քրիստոնեականների, հարկապես սպառազինության եւ ռազմածովային նավաշինության/նավագնացության/վերելքով, որն իր հերթին նպաստեց հունա-հռոմեական մոդելի փարածմանը՝ գերազանցելու ու խոչընդոտներ հարուցելու երկրի ճնշող մեծամասնությանը, կասկածից վեր է դնում ծովային գերիշխանության գերակայությունը:

Այսպես եւ միտումնավոր հակադրում են ծովային քաղաքակրթությունը լեռնայինին՝ առանց արեւմտյան քաղաքակրթության եւ ոչ-արեւմտյան փարբերակների միջեւ ճյուղադասություն /դիֆուսիոնա/ առաջ քաշելու, ինչպիսիք են, ասենք, արաբականը, հնդկականը կամ չինականը՝ չմոռանալով անհաջող մրցակցության գերակշռության ու վերջինի հպարակեցման վնասարար հետեւանքները: Արդյունքն այն է, որ ծովային մրցակազմի, որը վայելում է աշխարհի օվկիանոսների վրա շարժականություն ու գերազանցություն, ի հայտ գալու արդյունքում Աֆրիկայի եւ Լատինական Ամերիկայի քաղաքակրթության շար հին կենտրոնների հաշվին համաշխարհային գործերի համապետքստում խոշոր փոփոխություններ եղան: Ինչն է իսկապես կարեւոր Ստավրիանոսյան համաշխարհային պատմության հեռանկարում. իբերյան խաչակրաց արշավանքի ներքին մղումը, որ նախաձեռնել էին մի բուռ իսպանացի հանդուգն աշխարհակալներ ու վարձկաններ, եւ պարզվում է, որ դա եղել է գլոբալ նշանակության օպերացիա՝ վերջնական ողբերգական

վախճանը ացտեկների ու մայաների մշակույթների: Զարմանալի չէ, որ Կոլումբոսի՝ Նոր աշխարհը հայտնաբերելու 500-ամյակի տոնակատարությանը բնիկ իսպանացիներն ու իսպանախոս աշխարհը խիստ բաժանված էին. պաշտպանական ձայներ էին հնչում դարերի ընթացքում ճնշված տեղաբնակների օգտին՝ ներառյալ բնիկներ ու կրեոլներ, եւ հակառակը:

Ժամանակի սղության պատճառով ես սփռված եմ որոշ բացթողումներ անել, նման բախտորոշ հանդիպման ժամանակ ներկայացնել միայն ընդհանուր ամփոփումը, մինչ իմ այսօրվա հիմնական թեզի ներկայացմանն անցնելը, այսինքն, հաշվի առնելով դրա չափն ու կշիռը. ծովային քաղաքակրթությունն իրենից ներկայացնում է գերակա սրատուս քվոն, որով մենք ապրում ենք, չնայած իր թերություններին ու թույլ կողմերին: Եւս մեկ անգամ հարկ է նշել, որ թեեւ ծովային քաղաքակրթությունը գերակայում է լեռնային քաղաքակրթությանը, այնուհանդերձ, լեռնային քաղաքակրթությունը չպետք է մերժվի, իբրեւ սպառված կամ բրածո կամ հեփամնաց:

Նանդիսապետներից շարերին այսօր մի հարց է հուզում, թե այսօրվա թեման «Լեռնաբնակների գոյաբանական հիշողություններն ու օգնության հասնող մարզինալացված պատկերները» իրենից ինչ է ներկայացնում: Թեման, որպես այդպիսին, անտարակույս, խոսելու է քաղաքական կոռեկտության մասին: Բայցեւայնպես, ես ամբիոն եմ բարձրանում խոնարհյալ ու շոյված նման նշանավոր փորձագետների ու արհեստավարժ թիմի ներկայությունից, եւ ես ձեզնից ակնկալում ու դիմում եմ ձեզ՝ արտահայտել ձեր տեսակետներն ու ձեր մտքերն ասել՝ ուշադրություն չդարձնելով այն հանգամանքին, որ

այս նյութը, հնարավոր՝ որ հավանության չարժանանա: Մտքերի խաչաձեւ բեղմնավորումը, ինչը հարիր է նման առիթին, իմաստալից է միայն այն ժամանակ, երբ փաստերը առաջարկվում եւ հակադրվում են, տալիս ու առնում են:

Ես պիտի սանձեմ խոտորման իմպուլսը, կենտրոնանալով ծովային քաղաքակրթության հետեւության գաղափարի վրա, որը հանդիսանում է լեռնային քաղաքակրթությունը: Ինչպես մեզ հայրնի է, մարդկության նյութական մշակույթը վերջին հարյուր տարիների ընթացքում ավելի շատ է փոխվել, քան նախորդ հինգ հազար տարիների ընթացքում: Այդ դարաշրջանային վերափոխման խաղի անվանումը 1780-ական թվականներին Արդյունաբերական հեղափոխությունն է, երբ ժամանակակից աշխարհի համար առաջնային նշանակություն ունեցող բեկում տեղի ունեցավ փոփոխական արտադրողականության մեջ, քանի որ այն ապահովեց փոփոխական ու ռազմական բազա ծովային քաղաքակրթության գերիշխանության համար, որի նպատակն էր հիմնականում թիրախավորել ոչ զարգացած երկրները:

Ֆենոմենը, որ անգեն աչքով ամենքի համար իսկ փեսանելի է, այն է, որ աշխարհի առավել բարենպաստ տարածաշրջանները, փոփոխական բարգավաճման ու սոցիալական հարստության առումով, կամ առափնյա են, կամ ափին ավելի մոտ են տեղակայված: Բացարձակ հակադրությամբ՝ լեռներն ու բարձրադիր գոյությունները մշտապես կախված են փոփոխական լճացումից եւ գրվում են արտաքին աշխարհի կողմից մտավոր խթանման բացակայության տակ՝ ֆիզիկական մեկուսացման ու փոփոխական ռեսուրսների անհասանելիությամբ պայմանավորված: Սա պարադոքսալ է հնչում, սակայն սովոր-

րաբար, ենթադրվում է, որ կղզիացած ու թերզարգացած լեռները, ժամանակակից մարդաբանության ու ազգագրության ամենավերջին մրածելակերպից ելնելով, նախնական ու դեռեւս անաղարտ պահպանված մշակույթների մնացորդներում պարունակում են որակներ՝ արժեքավոր ու անգին, մեր անցյալն ավելի լավ հասկանալու եւ մարդկային բնույթի ուսումնասիրության համար:

Այս առումով լեռներն ու սարահարթները՝ փնտրեսական վերելքից կտրված, ծպտյալ օրհնություն են: Լեռնաբնակները բախրավոր են, քանի որ ֆիզիկական մեկուսացումը հնարավորություն է տալիս անեղծ պահել իրենց հին սովորությունները, արժեքային համակարգերն ու աշխարհայացքները՝ փրկվելով փոստային-նեոլիթական մուտացիայի բնական ընտրության երկաթե օրենքից, ընդգրկվել համընդհանուր հարուստ մշակութային ժառանգության կազմի մեջ, որին հավակնում են բոլոր ազգերն ու ժողովուրդները: Մյուս կողմից՝ լեռնային ժողովուրդը, ի դեմս ժամանակակից հասարակության աճող բարդության, հայտնվել է գլխավոր հոսքային մշակույթների կողմից ասպարակվելու եւ կույ զնալու վրանգի փակ՝ անգթորեն կորսվելով հեգեմոնիկ փիլիսոփայական կաղապարների ու մշակութային ավանդույթների ազդեցությունից: Այդ ամենով հանդերձ, հուսադրողն այն է, որ շար ավանդական հասարակություններ, դեռեւս ամուր կառչած իրենց հին ապրելակերպից, դարերով սրբագործված բարքերից ու ավանդույթներից, հնագույն ձեռագրերից ու նշանագրերից. սպառնալիքների ու ահագնացող ուրնձգությունների պարագայում անզամ շարունակում են վեր հառնել: Նրանց ձեռագրերն ու այբուբենը, թեւս ոչնչացման եզրին են, բայցեւայնպես դեռ որպես գործիք են օգտագործվում, որպեսզի հավեր-

ժացնեն գոյակցական այն հիշողությունը, որը հին ժամանակների կենդանի մշակույթի ուղեցույցն է, ձայնը՝ թեպետ խեղդված, մաքուցում է իր հարկ եղած, համենայն դեպս, ծանրաբարո դերը՝ արթնացնելով մարդկային խիղճը, որ երկար ժամանակ նիրհ է մտել: Մի աշխարհում, ուր գլոբալիզացիան վայրի կրակի պես դուրս է ժայթքում, նկատառության սկզբունքը բռնաճնշված է, իսկ նեո-մերկանտիզմի /առեւտրականության/ ազդեցությունն իր կործանարար հետեւանքներով հիմնականում ընկնում է թույլ մշակույթների եւ աղքատության հասցված հասարակ ժողովրդի վրա:

Ներկայումս մենք ամեն օր ականջալուր ենք լինում աշխարհով մեկ փեղի ունեցող փազնապալից կորուստների մասին հաղորդագրություններին: Մեկ կամ երկու լեզու է, որ բացարձակապես հիվանդ շարունակում է գոյություն ունենալ մարդկության համար: Տնագույն լեզուն ոչնչանում է, ոչնչանում է նաեւ հին ազգը, քանի որ այդ լեզվով կողավորված մշակույթը անհետանում է: Որպես այդպիսին, այն ըստ էության, ենթադրում է մարդկային կորուստ եւ հարված է հասցնում մարդկությանը: Մշակութային «զեները», կողավորված լեռնային քաղաքակրթություններում, կարող են լինել գոյաբանական հիշողության վերջին հանգրվանը ոչ միայն լեռնային բնակիչների, այլ նաեւ մեր՝ քաղաքային բնակիչներիս համար, որպեսզի փրկվենք ու պահպանվենք, քանի դեռ շատ ուշ չէ:

Շլացուցիչ շարժման այս աշխարհում, խռնված ինչպես երբեք այդքան շատ մեքենաներով ու հեփիոպներով, ուր մարդիկ, մեկը մյուսի ճամփան կտրելով, աղմկելով ու հրելով անցնում են քաղաքային փողոցների մայթերով, ես չեմ հանդգնում խոկալ մեր՝ մարդկանց սարսա-

փեցնող հեռանկարների մասին՝ խախտելով մենավոր անդորրը բարձր բնակարանային շենքերի, անգոր լինելով հաշվի նստել ինքներս մեզ հետ՝ հիշողության կորստի ու մեր անցյալի մասին հուշերի պարճառով: Ահա թե ինչու այսպեղ ներկա գրավողներից յուրաքանչյուրն ի գորու է լեռնային քաղաքակրթություններին փրկության ձեռք մեկնել, որոնք հայտնվել են նման ծանր վիճակում. փրկություն այն միջոցներով, որոնց դուք փրկապետում եք՝ պարկերավորման սքանչելի գործիքով: Այսպիսով, հանձնաժողովի անունից մենք հրավիրվել ու հավաքվել ենք՝ փրկելու լեռների փառահեղ մշակութային ավանդները, եւ դուք՝ անհատ վավերագրողների, դերասանների, անկախ պրոդյուսերների, գործակալների այդ կազմով կենսական դերակատարում ունեք՝ արժանի մեր մեծագույն հարգանքներին ու բարեկամական ջերմ վերաբերմունքին: Նշենք, որ ձեր պրոֆեսիոնալիզմն ու անձնվեր աշխատանքը կլինեն այն փրկության բանալին, որը կկապի մեզ մեր անցյալի, ներկայի ու ապագայի հետ:

Ես, օրինակ, կշարունակեմ անմխիթար վիճակում հայտնված լեռնային քաղաքակրթություններին հավուր պարշաճի ուշադրության արժանացնելու իմ բարձրադաղակները, առաջ քաշելով իմ պահանջը՝ ավելի հագեցած, ավելի բազմակողմանի ու ավելի վավերական արձանագրություն ներկայացնել այն մասին, թե ինչ է կատարվում հենց մեր թքի փակ՝ լեռներում ու լեռնային երկրներում:

Այս փեսանյութերն ու պարկերները, իրենց պարմական գործառույթներից զար, հարուստ սնունդ կմաքակարարեն՝ ավելի լավ իրագեկվելու մեր անցյալի մասին, ինչպես նաեւ նպարակահարմար միջոց կհանդիսանան՝ ավելի լուսավոր ապագայի համար, ապագա, որը մարդ-

ԸՆԶԱՌՑՈՒԹՅՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ

կությանը կգարգացնի ավելի մարդասիրական, ներդաշնակ ու բազմակողմանի կերպով, ապագա, որում արդարությունն ու իրավահավասարությունը կգերակայեն, պարզապես այն պարճառով, որ անցյալից զրկված մարդն ապագա չունի:

Չոն Պոեզիային

Բանախոսություն՝ պոեզիայի երեկոյի ժամանակ

*Նվիրվում է Վրասային կլոր սեղան ֆորումի՝
համաշխարհային պոետների մարդասիրությանը*

Նարգելի բանաստեղծ գործընկերներ, հարգարժան հյուրեր.

Ի վերջո, պոեզիայի մեր փառապոռնի այս վերջին հանդիսությունից, կապված Չինաստանի ամենաչքնաղ լճի հեպ՝ երկամյա աչքի ընկնող միջոցառում, համեմված փեղացի ու արպերկրից ժամանած՝ ժամանակակից բանաստեղծական գրի նման առանցքային դեմքերի հեղինակավոր բույլի ներկայությամբ, պարզ է դառնում, որ այսօրվա օրակարգի գլխավոր դրույթները շոշափելու են «Բանաստեղծական գիրը բանաստեղծի մեջ, եւ Բանաստեղծը հասարակության մեջ» թեմային նվիրված հարցերը:

Այս պահին եւ այսպեղ ներկա գրնվելով՝ ես հավատում եմ, որ սուրբ, վաղեմի ու վսեմ զգացողություններն այս արարողության պիտի ողողեն մեզ՝ այս բազմությանը, որ ամեն օր ապրում է կյանքը փոռն դարձնելու համար: Պոեզիայի միջոցով կերտված զարմանահրաշ գործերը հիշեցնում են ինձ այն անվրեպ ճշմարտությունը, որ մարդկային արվեստի բոլոր ձեւերի մեջ՝ իր սպասարկու պար ու երաժշտությամբ, միայն պոեզիան կարող է վերահաստատել կյանքի ամբողջականությունը, այնպես, ինչպես ուրիշ ոչինչ անկարող է անել:

Մա ինձ հիշեցնում է իսպանացի մեծանուն բանաստեղծ Գարսիա Լորկանի հնարած հրաշալի շնջական բառը՝ «դուենդե/duende»՝ (առասպելական արարած՝

քան ոգի կամ ուրվական), ով ապավինում է դուենդեին. կախարդական ուժը կարող է միջուկի փրոհման պես պայթեցվել միայն լավ պոեզիայի շնորհիվ, որը միտված է ենթագիտակցության խորքը պեղելու ու որոշ սուբստանցիա մշակելուն, ինչը կձեռափոխի այս աշխարհը: Այո, իմ խորին համոզմամբ այս երեկոյին ներկա գրավող ամեն մի բանաստեղծ Արարչի կողմից շնորհված է Լորկայի դուենդեով, շնորհիվ որի անհիշելի ժամանակներից ի վեր մենք պապակ ենք ճշմարտության՝ այլ ոչ սրի, բարու՝ ոչ թե չարի, գեղեցիկի՝ բայց ոչ փոքրի: Պոեզիայի երկարատև ժողովրդականության գաղտնիքը, որ մարդիկ շարունակում են վերադառնալ դեպի պոեզիա եւ կարելու նշանակություն են փափաքում իրենց հոգեւոր կյանքին, ընկած է հենց այն բանաստեղծների վրա, որոնք գրեթե ինքնամոռաց սիրահարված են իրենց կոչմանը:

Ժամանակի անսահմանությունն ու մարդկային փենզանքների խորությունը հանդիսանում են պոեզիայի էականության հավերժական կրակը մարդկության պահպանման ու բազմացման համար՝ անհատական թե ընդհանրական, ֆիզիկական կամ հոգեւոր մակարդակի վրա: Այն եղել է մեր հավաքքի ամենաըմբոստ գործառնությունը, հավաստելով, որ մարդ չի կարող սոսկ հացով ապրել: Նոգեւոր գերակայությունը, բացի դրանից, մարդու բանաստեղծական առաջնորդությունը եղել են փորձաքար, որով մարդը երկրի վրա փարբերվել է մյուս բոլոր երեւոյթներից:

Ընկերներ, պոեզիան՝ մարդկության փարոսը լուսափուր, հավերժ մարդկային առաջընթացի առաջափարը, իր ջերմությունն ու ոգեշնչումն է ճառագել աշխարհի ժողովուրդների առաջխաղացման ճանապարհին: Արշալույսի բացվող ցուլի հետ նա ուղեկից շեփորն է հնչեղ,

մեկնասակիզքը աշխատանքային օրվա, նա ապագայի առեղծվածը գուշակող պատգամախոսն է, պայքարի գործիքը օտարացման դեմ, ու նաեւ բալասանը մեր փանջալից սրբերի: Այդ ամենը պսակելու համար պոեզիան վերստին կարթնացնի հոգիները, որ նիրհել են կյանքի մանրուքների մեջ, եւ նորից մեզ ճիշտ ուղու վրա կղնի:

Այժմ, ամենախորհրդանշական վարագույրի իջեցման պահին, թույլ փվեք մեզանից յուրաքանչյուրի անունից, որ այսպեղ, այս պահին ներկա է գրնվում, ինչպես նաեւ՝ Բարձրավանդակի, որ իմ փունն էմ դարձրել, հարգանքի փուրք մաքուցել Իվ Բոննեֆոյին, Նիկոնոր Պարրային, Թադեոս Ռուելիչին, Գարի Մնայդերին, Թոմաս Թրանսթրյոմերին, Շեզ Լինին, Էռնեստո Կարդենալին: Այս վերերանները ափսոսանք են հայրնել, որ առողջական խնդիրների կամ աշխատանքի գերծանրաբեռնվածության հարգելի պատճառներով այսօր մեզ հետ այսպեղ ներկա չեն գրնվում, սակայն նրանց բանաստեղծական երգանքները եղել են ուժի ու եռանդի անսպառ աղբյուր: Վասնզի պոեզիայի հանդպեպ ունեցած նրանց օրինակելի կիրքը երեսան է հանել մեր երիտասարդ սերնդակիցների հսկայական ներուժը՝ ցույց փալու կյանքի հանդեպ սերը, ազատության կարոտը, թույլի եւ ուրնակոխ արվածների հանդեպ կարեկցանքը, բարբարոսության դեմ հակադրվելը. մխիթարելու նրանց, ովքեր ձախորդության ու թշվառության մեջ են գրնվում, եւ ի վերջո, որ ոչ պակաս կարեւոր է՝ առանց երերալու երկխոսություն հաստատել իրականության հետ, քանի որ վերջին հաշվով «տարբերակները կյանքի, արդարության, արժանապարվության ու գեղեցկության»՝ լայնորեն ներկայացված պոեզիայի միջոցով, միակ այլընտրանքն է, որ մնացել է մեզ՝ մահկանացուներին, մի ձեռնարկ, որ

արժանի է մեր մնայուն մարդկային անվանմանը:

Եւս մեկ անգամ թույլ փվեք խոնարհաբար ուրբի ելնել ու ողջունել ամբողջ աշխարհի մեր բանաստեղծ ընկերներին: Կարեւորելով ձեր ներկայությունն ու ներգրավածությունը խոստումներով ու ճգնաժամերով, երջանկությամբ ու փառապանքով, արարմամբ ու ոչնչացմամբ լի մեր աշխարհում, պիտի ասեմ, որ նախախնամության ճոճանակը ճոճվում է հոգուր աշխարհի խաղաղության, արդարության ու գեղեցկության:

**Տեղայնացված բանաստեղծական գիրն ու
մարզինալացված ձայնը**

Ծրագրային ելույթ՝ հնչեցված 2014թ. համաշխարհային բանաստեղծների՝ Վրասնային կյոռ սեղան ֆորումի բացման արարողությանը

Այսօրվա թեման ինձ վայրկենապես բերում է իրադարձությունների նեքստուսի, ավելի ցայտուն դարձնելով նեոկլասիցիզմի գերիշխող ազդեցությունը, կոշտ կապի-փալիզմի փարածումն ու սպասարկու սպառնալիքները, որոնք պարճառ են հանդիսանում մշակութային, բնապահպանական ու էթնիկ դիվերսիֆիկացման: Նեո-կլասիցիզմի փիլիսոփայության սրընթաց ինտեգրման ու արագ ընթացող համաշխարհայնացման փոշիացվող ազդեցությունները դեպի շուկայական ֆունդամենտալիստներ՝ ինքնակապարելագործվող մարզարեության ծանր դեպքերն են: Զարմանալի չէ, որ նրանք իրենց հետ բերում են նոր զարգացող, բթացնող /հարթեցնող/ աշխարհ, ուր նրանց «երկաթե-սիրտ» պրոպագանդան հզոր ազդեցություն ունի ժողովրդական երեսակայության վրա:

Գլոբալիզացիան, որպես հերթական սադրիչ արտահայտություն, ըստ էության հիմնականում միաված է նրան, որ գլխավոր բարոնները՝ միջազգային բիզնեսների դիմակների փակ ձգվում են միջազգայնացնել աշխարհը՝ ազգերի միջեւ պարբերաբար փնտեսական ու սոցիալական պայմաններ ստեղծելով, ինչպես նաեւ աշխարհի փարբեր ժողովուրդներին փոխակերպելով վերածում են փափուկ ու միօրինակ շուկայի: Սա մի խաղ է՝ ճարպկորեն խաղացված շուկայի արմատականների

կողմից, որոնք սահմանում են հարուստներին աշխատողների հաշվին հարստացնելու, շրջակա միջավայրի ու ավանդական արժեքների կանոնները: Աշխարհի այսպես կոչված՝ հարթեցումը, քիչ թե շատ վիրավորալ իրականություն է՝ սրեղծված անտեսանելի, բայց ամենակարող ուժերի կողմից, որոնցից դիպվածաբար առելորի առաջնակարգ համաշխարհային կազմակերպություններն են, ինչպես ԱՆԿ-ն /Առելորի համաշխարհային կազմակերպություն/, ԱՄՆ-ն /Արժույթի միջազգային հիմնադրամ/, որոնք հանդիսանում են բարոյագուրկ հանրային շահերի միջազգային խնամակալը, եւ հիմնական խաղացողներն են. ասես անտեսանելի մի ձեռք աշխարհը պառակտում է, փոխարեն այն ղեկավարելու եւ թույլ չտալու, որ այն ճիշտ հունից շեղվի: Ներգիտել, մեր նախկին ջերմ, հարմար, բարգավաճող տեղական համայնքները, արդյունաբերություններն ու մշակույթները դուրս են մղվում կյանքից: Նման անիրավ վտանգները չպետք է թերագնահատել:

Տեղին է նշել, որ ես դեմ չեմ տնտեսության մեջ շուկայի օրինական կարգավորող գործառույթին: Մեր գործն, անշուշտ, շուկան աղբով լցնելը չէ, այլ նրա պաշտպաններին Արդարության իրավունք վերապահելը. շուկայական ֆունդամենտալիստները մշտապես կառչած են այն գաղափարից, որ հանրային /սոցիալական/ շահերը լավագույնս ծառայեցնելու համար մարդկանց պիտի թույլատրեն իրենց անձնական հեղափոխությունները հեղափոխել՝ չմտածելով Բարու, Ճշմարտության ու Գեղեցիկի մասին: Նման պրոպագանդան՝ ի նպաստ անարգելք կապիտալի հոսքերի, հաճախ զինաթափ անող խաբուսիկ ու գայթակղիչ անմեղ պատյան ենթադրելով, լավագույն դեպքում մարդկային էության այլասերում է, անկախ

նրանից, թե որքան շոշափելի ու արագ շահույթներ այն կարող է մատուցել ՆԱ-ի ձեռով: Մարդկության ընդհանուր նպատակը թվում է պիպի համաձայնեցվի զուր առեւտրական կարիքների հետ:

Գլոբալացման նման փրամաբանությունը առնվազն անհավասարակշիռ է: Մարդկային էության այլասերումը հանգեցնում է կառավարության պարտականությունների միտումնավոր խեղաթյուրմանն այնքանով, որքանով բազմաթիվ հանրային շահեր ավանդաբար ընդգրկվում են վարչական շրջանակներում, եւ դա ոչ ոքի հոգը չէ: Ժողովրդավարական պետություններից շարերը զանգվածաբար եր են քաշվել հանրային շահերի սեկտորից: Շար մարդիկ, հարկապես նվազ զարգացած երկրներում, փուժել են՝ սոցիալական ապահովագրական ցանցի կողմից ֆինանսական օժանդակության բացակայության պատճառով: Առաջ են գալիս նոր սոցիալական խնդիրներ: Տարածվում է գործազրկությունը: Լրացուցիչ արտոնություններն ու բարեկեցությունը դառնում են սակավադեպ: Սա առաջընթաց չէ, այլ՝ հեղուկացում: Եթե գլոբալիզացիան միայն կոշտ կապիտալիզմի փարածման մասին է, իսկապես ավելի հստակ է դառնում, որ փիլիսոփայության մեջ առկա *neo laissez faire*-ի /«թույլ քվեք՝ անել»/ վրանգները նյութականացվել են՝ ի վնաս բազմաթիվ բացակա երկրների ու կառավարությունների վարչական գործառույթների իրագործման:

Սա, բնականաբար, գլոբալացման դեմ առաջացնում է երցնցում ու դժգոհություն: Մենք ապրում ենք արտադրական կարիքների, զանգվածային սպառման եւ զանգվածային ինֆոթեյնմենթի աշխարհում՝ շահութամետ եւ միլիարդավոր սպառողների ագրեգատային /զանգվածային/ նախասիրություններով պայմանավորված: Ինք-

նաբերաբար այս գլոբալ գյուղին պատկանելով, մարդիկ ընդօրինակում ու քծնում են հողիվուդյան մոդելին եւ արագորեն թողարկում են մեծաքանակ մակրոնալոցված ֆիլմեր ու սերիալներիայն աստիճան, որ ԱՄՆ-ից դուրս մշակութային արտադրանքներից շատերն ունեն ամերիկյան տեսք ու ամերիկյան ուղղվածություն: Կինոարտադրությունը, մասնավորապես երրորդ աշխարհի շատ երկրներում, դառնում է մամոնայի «գանձանակի»-ի գոհը՝ պայմանավորված պոռչպացող սպեկուլյացիայով: Ներեւաբար, մշակութային բազմազանությանը հասցված վնասները մարդկային տարեգրությունների մեջ հավասարը չունեցող ու աննախադեպ են՝ այդչափ կուրորեն շահույթ հետապնդելու տեսակետից, չխոսելով միջավայրի ու այլ սոցիալական արժեքների մասին, որոնք կամ փոխզիջումային, կամ մարզինալիզացված են:

Մեր քաղաքական մեխանիզմների զարգացումը ուրք չի մեկնի մշակութային արտադրության զարգացման հետ: Ռեսուրսների անհավասար եւ անարդյունավետ բաշխում կա մասնավոր շահերի ու հանրային շահերի միջեւ, որոնք ակնհայտ երեւում են անգամ անգեւն աչքով: Շատ զարգացող երկրներում խանդավառությունն ու ոչ նյութական ակտիվների արտադրության ու պահպանման համար հարկացվող չափաբաժինները նվազում ու սպառվում են՝ ռեկորդային ցածր ցուցանիշներ գրանցելով: Գեղարեսիլ վայրերի ու զարմանահրաշ տեսարանների գերշահագործումը, որոնցից շատերն անձեռակերտ ու բնաշխարհիկ նկարագիր ունեն՝ արժանի պահպանության առավելագույն աստիճանի, անառարկելի են համարվել: Ամենաշատը խորշում են նրանից, որ զարգացման նման կործանարար ձեւերը՝ ամենուր փառաբանվող neo laissez faire քարոզիչների կողմից, որոնք հա-

մագործակցում են փարբեր ինքնակոչների ու դրամաշորթների հետ, մեծարում ու երկինք են բարձրացնում, որպեսզի ինկուբացիոն մշակույթի անվան փակ կերպեն իրենց շահույթների թագավորությունը: Իսկապես, եթե լուրջ քայլեր չձեռնարկվեն շրջակա միջավայրի պաշտպանության եւ մշակույթների ամրապնդման համար, ապա գլոբալացման՝ որպես ամերիկանացման այս «ջագրնոթը»*, ընդամենը մի քանի փասնամյակ անց արմափախիլ է անելու մշակութային, էկոլոգիական եւ նույնիսկ կենդանական բազմազանությունը, որոնց առաջացումը պայմանավորված է մարդուկության, կենդանական ու բուսական աշխարհի միլիոնավոր փարինների անցած էվոլյուցիայով:

Վերոնշյալ վրանգներին կրկնապարկվել է այն, որ neo laissez faire-ի կողմնակիցներն ավելի շար խնդիրներ են սպեղծել, քան լուծել: Նափկապես Մերձավոր արեւելքում Սադամ Նուսեյնի եւ Մութարաքի պես գերիզորմարդկանց հաղթական կործանումը ոչ փնտեսական կայունություն, ոչ էլ սոցիալական ժողովրդապետություն է բերել Իրաքին եւ Եգիպտոսին, կամ աշխարհի մյուս մասերին:

Նման հուսահատեցնող խոշոր աշխարհաքաղաքական անկարգությունը միփում է մեզ վերակշռադատել այն, որ այս գլոբալ ճգնաժամը հարթվելու է միայն այն ժամանակ, երբ մարդկությունը ինքն իր ճակատագրի փնտրիման պահանջարերը լինի: Այդպիսի ինքնահաս-

** «ջագրնոթը» - որեւէ մեծ ուժ, որ իր ճամփի վրա ամեն ինչ կործանում է: Ջագանատիսի՝ հնդիկ աստված, որի կատքի անիվների փակ մարդիկ սովոր էին ներսվել, քանի որ համարում էին, որ նման գոհաբերությամբ քավում են մեղքերը:*

տարածման համար ելակետ պիտի հանդիսանա բացահայտումն առ այն, որ մարդկության պատմությունը նախապես շարք բարդ է ձևավորված՝ ըստ կրոնի, էթնիկ պատկանելության, քաղաքակրթության ծագման, արժեքային համակարգի. բոլոր այս գործոնները պիտի հաշվի առնվեն, նախքան ավելի մարդկային ու խաղաղ աշխարհի համար կառուցողական երկխոսություն սկսելը:

Ապրելով «ոսկեգօծ դարում» ու վերահսկողությունից դուրս մի երկրագնդում՝ ինչու՞ պիտի այսպես ամուր կառչեն պոեզիայից, որ թաթախված է հայրենի հողում: Իմ վերոնշյալ բուռն ճառախոսության՝ ընդդեմ շուկայական մեխանիզմներից ավելորդ կախվածության ու նեոլիբերալիզմի թերությունների, թելը մանվել է այս երեւոյթներից: Ես, անշուշտ, գործալ մակարդակում որպես բանաստեղծ եմ ընդհանրացնում: Պեքք չէ խուսափել բարոյական պատասխանատվությունից, ուր էլ որ լինենք, պեքք է պաշտպանենք ու պահպանենք հոգեւոր պտուղների սրբությունը եւ հարստացնենք մարդկության մշակութային մաղթեղջյուրները /կամ՝ առաքության եղջյուրները/: Բարոյական առումով, երբ գործալիզացիայի ուժերը սկսում են քայքայել քաղաքակրթության բուն հիմքերը՝ հյուժելով նրա կենսական ուժերը, մենք՝ բանաստեղծներս, այդ առիթով պիտի մեր ձայնը բարձրացնենք, որպեսզի ընդլայնենք անհատների հնարավորության սահմաններն ու ներգրենք նրանց այն աշխարհում, ուր մենք մեր միջոցներով ենք գերազանցում, որը, ըստ էության, բանաստեղծական գրությունն է: Այսպես մի բառ պիտի գեղեղվի, որը կորակի իմ դիրքորոշումն առ այն, որ փեղայնացված բանաստեղծական գիրը կարող է օգտագործվել որպես հակա-համասեռացնող ուժ, հակաթույն պոպուլիստիկ սպառնալիքների դեմ, որոնք դիրքա-

վորվել են գլորալացման փարբերակով, շուկայական ֆունդամենտալիստների ու նեոլիբերալիստների աջակցությամբ:

Մշակութային ասպարեգում գլորալացումը միավաճ է հոմոգենացման եւ անհատի բնաջնջման, մասնավորապես՝ նրա միօրինականացմանն ու նույնականացմանը, սուր երգչախմբում՝ որպես ամենացայտուն առանձնահատկություն: Ամեն դեպքում, սա պիտի ընդունվի որպես կանխատեսում եւ ախտորոշում. գլորալիզացիայի ուժերը, անդրազգային բիզնեսների կոալիցիան ու ջունգլիների շուկան մշակութային բազմազանության երդվյալ թշնամիներն են: Նամաշխարհային մշակույթների մասին այս հրապարակ նախագուշացումը չպետք է լավի համաշխարհային բանաստեղծների ականջներում, որի իսկությունը վառ կերպով լուսաբանված է մեր ժամանակների իմաստուններից մեկի՝ ուրուգվայի Էդուարդո Գալյոնոյի՝ *El libro de los abrazos*-ում /Ողջագուրանքների գիրքը/:

Իմ խորին համոզմամբ՝ ցանկացած մշակույթ, անգամ փոքր ու թույլ, արժանի է հարատևելու: Այն, ինչ ես վիճարկում եմ, ծայրահեղ ձեռնհաս շուկայի փրամաբանությունն է, որը պահանջում է մշակութային արտադրանք, անկախ նրանից, թե ինչքան հոգեւոր արժեքներ են դրանք ներառում ու մարմնավորում, ու մինչեւ որ դրանք չվաճառվեն, արհամարհելով ամեն ինչ՝ գոռով առաջ կիցկեն եւ չորս քամիների ուղղությամբ կցրեն: Երբ խոսում եմ փեղայնացված բանաստեղծական գրի մասին, նկատի ունեմ, որ բանաստեղծը պիտի իր քաղաքացիական ձայնը դառնա, հանրահայտ գոհունակություն ու դժգոհություն արտահայտող խոսափող պիտի լինի, սրբապարկերը՝ իր սեփական ժողովրդի, իր խոսքն ասի ան-

Կարակուսորեն ու աներեր աշխարհին ու աշխարհի համար: Որքանով ինձ հայրնի է, պոեզիան երբեք մասնագիտական գրադմունք կամ արհեստ՝ ասենք ավադագործ, չի եղել, եւ բանաստեղծը, բնավ, կարիերիստ չէ: Սակայն ամեն հին ու բարձր քաղաքակրթություն բանաստեղծին ըստ արժանվույն է գնահատում, սովորաբար նրա հետ համաձայնում ու հարգում են: Նրանց Կեղն ու կարեւորությունը մարդկության հոգեւոր կյանքում չպեպք է վիճարկվի: Ինչ-որ առումով, համաշխարհային պոեզիայի երկնակամարում, Դանթեն Իտալիայի, Պուշկինը՝ Ռուսաստանի, Միցկեիչը՝ Լեհաստանի, Յեյթսը՝ Իռլանդիայի (քնարական փառանդների ինչպիսի բույլ), նրանք բոլորը իրենց մշակույթի խոսնակներն են համարվում, խիղճը իրենց ազգի, անվիճելիորեն:

Ողջ աշխարհին փիրացած վարնիչ կապիտալիզմը միտված չէ մշակութային պտուղների ու հոգեւոր առաւորության: Ասեկոսներն ու կասկածները մոլեգնում են պոեզիայի գործածության շուրջ: Ես, օրինակ, հավատացած եմ, որ ոչ մի արժանի հասարակություն չի կարող պարզաճ կերպով գործել առանց բանաստեղծների համար վերապահված որոշակի դերի, պարզապես այն պարճառով, որ պոեզիան իր ժողովրդի հոգեւոր դաստիարակության կարեւորագույն սյուներից մեկն է:

Մենք ապրում ենք հոգեւոր ընկճախտով ու փխրուն մրաճեկակերպով համակված մի աշխարհում, որը փանում է սուր ճգնաճամի: Նարսություն մեջ լողալն ու փարատասակ փեխնիկական սարքերի կիրառումից հաճույք սփանալը բավարար չէ: Մարդիկ նաեւ բարեկեցիկ ապագայի մասին գեղագիտական փեսլականի կարիքն են զգում: Անցյալում բանաստեղծները զարմանալիորեն բյուրեղացնում էին այն, ինչ հասարակ մարդիկ լայնորեն

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

զգում էին, սակայն քաղաքակրթության արդարացման ու մարդկային արժանապատվության մասին մտքերը աղոտ էին արտահայտում՝ որպես հակաթույն օտարացման ու գերիշխանության դեմ: Եկեք հասկանանք այսօր մեր առաքելությունը. համաշխարհային պոեզիայի շարժումը վերընթացի ճանապարհին բախվում է գլոբալացման գերիշխանությանը, որը սպառնում է ամեն ինչ հոմոգենացնել /միափարբել/ ու կլանել քաղաքացիական հասարակությունը: Բանաստեղծները ներքուստ ուշադիր լինելով պարմական հետեւանքներին, ազատության ու արդարության կրքով բռնկված, հետեւելով իրենց արժանավոր նախնիներին, փրկության ձեռք են մեկնում՝ միաթարելու հոգեւոր կտրանքների ենթարկված ու քառսի մեջ գտնվող մարդկանց եւ, բարձրացնելով բանաստեղծական արվեստի կերտնը, բարձրանում են լույսի ու քաղցրության բարձունքին՝ հիմնված լուսավոր մարդկային բանականության աննկուն ժայռի վրա, որն առաջնորդում է դեպի վաղվա Ուրուպիայի ապարանքները:

**Ինչու՞ է պոեզիայի դերը մինչ օրս
նշանակալից համարվում**

*Ելույթ՝ Յինհայ լիճ պոեզիայի միջազգային
փառատոնին*

Նարգարժան նահանգապետ՝ պրն. Նաո Պենգ, հարգելի բանաստեղծ գործընկերներ, փիկնայք, պարոնայք ու ընկերներ.

Շնորհիվ Կազմակերպչական Նհանձնաժողովի կողմից իրագործված այս հիանալի աշխատանքի, այսօր այս փաստը, որ երկրագնդի բոլոր ծայրերից ժամանած բանաստեղծների լավագույն խումբը ժողովվելու է այսօր՝ մաս կազմելու ամենագրավիչ բանաստեղծական պարանքի՝ Յինհայ լճի միջազգային փառատոնին, առաջիկա հինգ օրերին, երբ փառաբանվելու է բանաստեղծների մոզական ձիրքն ու բանաստեղծական արվեստի ուժը, մեզ կհամակի անդիմադրելի ուրախությամբ ու հպարտությամբ: Նարգելի բանաստեղծներ, խնդրում եմ աներկբայորեն բարձրագույն ծափողջույններով դիմավորել այս յուրօրինակ հավաքույթը՝ լուսավայլ մեր հավաքական հպարտություն մեջ, որ մենք բանաստեղծներ ենք: Որպես Չինաստանի գրողների միության փոխնախագահ՝ ես իմ ջերմ ողջույններն եմ հղում մեր երկրի եւ արտերկրից ժամանած բոլոր բանաստեղծներին, ինչպես նաեւ իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում միջոցառման բոլոր կազմակերպիչներին:

Նաղթանակած փորձառությունը, որին ես, ընկերներ, պարանք պիտի պիտի կոչեմ, հիասքանչ իր բնույթով բանաստեղծական տեսականի շուրջ մեկտեղված, երբ 120 առանձնհատուկ տղամարդիկ ու կանայք, անկախ

գույնից, ռասսայից, լեզվից կամ կրոնից, համախմբվել են վկայելու, որ պոեզիան հզոր գործիք է հանդիսանում հասարակության մեջ բարեփոխումներ իրականացնելու եւ խիղճն արթնացնելու համար՝ պատերազմին հակադրելով խաղաղությունը, չարությանը՝ արդարությունը: Չկարծեք, թե պահի ազդեցության փակ Մուսաներին փոքրիշատե հուզում է այս էժան սնափառությունը, որն, անշուշտ, փոխարենը մեզնից իր օգրին պահանջում է մեր միահամուռ զգայականությունն ու մեր հոգեւոր բարձրությունը՝ որպես խոսնակ ազդելու հասարակության վրա եւ փոփոխություններ մտցնելու՝ նպաստելով մարդկության հեփազա խոստումնալից ապագայի գալստյանը:

Ընկերներ, համաշխարհային պատմությունը վկայում ու հավաստում է, որ մեր այս աշխարհը, մարդկանցով բնակեցված այս չքնաղ կապույտ մոլորակը, չի կարող գոյություն ունենալ ու հարատեւել առանց բնաստեղծների: Սա ասելով՝ ես պարզապես նկատի ունեմ մեր բոլոր փեխնոլոգիական սարքավորումներն ու համացանցը, որ թեեւ զարմանհրաշ մատակարարներն են հարմարավետության ու բարձրակարգ կենսամիջոցի, բավարար չեն: Ռոբոտները չեն ծաղկում: Կյանքը չի կարող կարգավորվել մեխանիկորեն, կամ սոսկ ժողովրդի հաշվետու գումների փեղեկավորության վրա: Մառը հաշվեկշիռներն ու օփարացման փրամաքանությունը մեր վառված հոգիների համար բալասան չեն կարող լինել: Թեեւ մեր դարաշրջանի ձեւավորման գործում լավատեսությունն այնքան քիչ է եւ հույսի նշույլ սեղմվել է ճգնաժամերից, խաղաղությունը այնքան փխրուն է, որ թվում է, թե պատերազմ է, երբեմն հույսերը աղեփների հեփեանքով խորփակվում են, երջանկությունը՝ խամրում,

մենք չպիտի կարծենք, թե բանաստեղծ կոչվելով մենք պետք է կոկվենք, կամ որպես նյութ / սուբստանցիա, / գովազդենք պոեզիան, որը փոխակերպում է ըմբռնումն ու հասարակական կյանքը: Այո, մենք կողմնակից ենք Բարուն ու Գեղեցիկին: Ականավոր չեիս բանաստեղծ Յարուսլավ Սեֆերտը այնքան ցայտուն է մտքերն արտահայտում, նույնիսկ երբ կենտրոնանում է փոքր ու մտերմիկ ժեստերի վրա.

Օրորոցի ճորոցն ու օրորոցային շնչալը

Ու նաև փեթակի շուրջ մեղունների պար բռնելը

Մեզ ավելի մոտ չե՞ն կանգնած ոգով,

քան սվիններն ու թնդանոթի գնդակները:

Դիմելով նման առօրեական ուժերին, ինչպիսիք մեղուններն ու օրորոցային երգերն են, որպես մարդկային կարիքների խորհրդանիշներ, Սեֆերտը խոսում է մեր բոլորի անունից:

Չկարծեք, թե ես կանխատեսում եմ վերահաս դժբախտություններն ու աղետները: Նենց մեր մոլորակում քանիցս մոլեգնում են եղբայրասպան պատերազմներ՝ օրօրի խլելով բազմաթիվ մարդկային կյանքեր: Տեղահանված խաղաղ բնակիչները դառնում են պատերազմող լորդերի ու քաղաքական գործիչների հիմարությունների անմեղ զոհերը: Թեև ժամանակավոր վրաններում ու փախստականների ճամբարներում նրանք շնչահեղձ են լինում, այնուհանդերձ, նրանք վերաթեւորում ու գեղեցիկ դառնում են հնչեցնում են դեռևս իրենց մանկության օրորոցից հայրնի մեղեդին ու իրենց մայրենի լեզվով գրված լավագույն սիրված բանաստեղծների տողերը, որոնց, անգամ ամենասահմանակցուցիչ պահերին ու ամենաբիրտ օտար միջավայրում, հավաքարիմ են մնում: Անկասկած, իրենց սրտի խորքից կլկլալի հնչող բանաստեղծություններն են:

վեղծությունները վկայում են գրկանքների ու բռնակալության դեմ նրանց վերջին հենարանի մասին:

Պոեզիան դեռ նշանական է այսօր: Թեև հնարավոր է, որ բոլոր բանաստեղծների մոտ առկա լինի արտակենսբրոնության կամ մարդախուսության մի տարր. լավ բանաստեղծները, որոնք 18-րդ դարի Ռոմանտիկական շարժումից ի վեր հասել են հերոսական արձանների, երբեք քաղաքակիրթ ժողովրդի մեջ իրենց գրավչությունը չեն կորցրել: Այնքան պարադոքսալին է, որ պոեզիան արվեստի մյուս ձևերից փարբերագարվելով, կարող է սավառնել բնագանցության երկնային կամարների միջով՝ աստղագարդ երկնքին հասնելու համար եւ, միեւնույն ժամանակ, սողսկելով իրականության խրթին օրերի մեջ, համբուրում է անթիվ աշխարավոր մարդկանց ու կանանց ուրբերը: Ջարմանալի չէ, որ հանճարեղ նիկարագուացի բանաստեղծ Էռնեստո Կարդինալը անգամ 20 տարի առաջ բանաստեղծական շարժումը գուգորդում էր բոլոր հարստահարված ազգերի ազատության հետ:

Պոեզիայի պահանջարկը բարձր է, քանի որ այս փառավոր դարաշրջանում, ուր կապիտալի բարոններն ու ֆինանսական լորդերը դիմակավորված հանդես են գալիս որպես անդրազգային գործարարներ, աշխարհը գլոբալացման են փանում՝ արագորեն լուծելով ազգերի միջև սոցիալական ու փոստական խոչընդոտներն ու փոխակերպելով աշխարհի բազմազան բնակչությունը փափկասուն միօրինակ շուկայի՝ աշխարավորների, շրջակա միջավայրի, ավանդական արժեքների հաշվին:

Անտեսանելի նման հրեշն ավելի ու ավելի է ճանկառում մեր հասարակությունը, փոխանակ առաջնորդելու ու պահելու այն, որ ռելսերից դուրս չգա, քանի որ սպա-

ռիչ մոլուցքը հեռացնում է մեզ մեր արմատներից կամ կյանքի ակունքից, որը կենսական է ողջամիտ մարդու նորմալ հոգեկան վիճակի համար: Այդպիսի անիրավ վրանգներին հակազդելու համար, մենք՝ բանաստեղծներս, պիտի բանաստեղծական արտահայտչականության գրավչությամբ ելնենք, եւ ունկնդիրների մեջ ներկա գրնվող ամեն մի բանաստեղծի ձայնը, փառահեղ բարձրության վրա, լսելի պիտի դառնա՝ ընդդիմանալու նյութական ուժերին «հոգու ուժով»՝ ամբոխի մեջ արթնացնելով պոեզիայի արեւի ոգին եւ նախաձեռնելով նոր սոցիալ-մշակութային վերածելում ողջ մոլորակում: Պոեզիայի մոգական ներուժը նպաստում է նման ձեւափոխությանը, եւ բանաստեղծների խանդաղապրագին ոգին կասկածի փակ չպիտի առնվի:

Լավ պոեզիան միշտ կարելու է, քանի որ պոեզիայի արեւային ոգին մշտապես լուսավորել է մարդկանց՝ անհավասարություններով ու վրանգներով լի ճանապարհը: Պոեզիան փաստորեն կենսական մեծությունն է մարդու, նրա հոգեւոր առաջնորդարանը, որով մարդն առանձնանում է այլ փեսակներից: Դժվար է պատկերացնել, որ հին մշակույթի մնացորդները մինչ օրս աչքի լույսի պես կպահպանվեին՝ առանց բանաստեղծական ոգով ներշնչվելու: Փիլիսոփաները մեզ կոչ են անում երկրագունդը բնակեցնել պոեզիկորեն՝ առաջարկելով մարդկության համար կարված երջանկության բաղադրատոմսը, այսպես կոչված՝ ապրելու քաղցրության գաղտնիքն ավելի շահեկան փեսանկյունից: Լավ պոեզիան մինչ օրս պահանջարկ է վայելում, քանի որ վաղուց ի վեր այն դարձել է հասարակումն այն բանի, որ մարդու մեջ խորը արմատներ ձգած մարդկայնության կարոտը մեզ փանում է դեպի մեր ծագման ակունքները: Միայն պոեզիա-

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

յի ջահը բարձր պահելով՝ մենք կարող ենք գուշակել ճիշտ ուղղությունը, պայքարել խավարի դեմ լույսին հասնելու համար ու քայլել ճիշտ ճանապարհով՝ եր դեպի փուն, դեպի մեր հոգևոր օջախը: Վերջապես, բանաստեղծությունը ներբողյան է դառնում այս երկրագնդի վրա ընթացող իրադարձությունների՝ անցյալի, ներկայի ու ապագայի գովքով:

Միրելի բանաստեղծներ, թեև այսօր մենք դիմակայում ենք բազում դժվարությունների, սակայն երբեք ապագայի հանդեպ մեր հույսը չենք կորցրել: Եկեք ուրախությամբ ցնձանք, որ մեզ բաժին է հասել պոեզիայի այնպիսի առասպելական հարսություն, որ ժառանգել ենք մեր մեծ բանաստեղծներից, որոնք ապրում կամ այս կյանքից հեռացել են, այն խորին համոզմամբ, որ պոեզիան մարդկության համար այն անփոխարինելի հիմնավոր արդարացումն է, որ գորովաբար «աչքը հառել է վաղվա օրվան»:

Ո՛վ է Բանաստեղծը: Ի՞նչ է Պոեզիան

Ելույթ Սիչանգի՝

*«Թավշե ճանապարհ» պոեզիայի միջազգային փա-
ռատրոնի բացման արարողությանը*

Քիոնհայ, 2016 թ.

Ի՞նչ մեթոդով ենք պահանջ ներկայացնում, որ բա-
նաստեղծը օժտված լինի երիցս՝ էթնիկ, ազգային ու հա-
մաշխարհային մրածողությամբ: Ավելի ընդհանուր
նպատակադրումով՝ ամեն մի բանաստեղծի ծնունդն եր-
ջանկության միախառնություն է, կամ երկայնության ու
լայնության դիպվածական համակարգ: Այսինքն, բա-
նաստեղծը բնածին կապվածություն պիտի ունենա այս
կապույտ մոլորակի րեղանքին՝ որպես բանաստեղծ ու
մարդկային արարած, բայց նա այս ու այնպեղ է՝ հակա-
ռակ իրեն:

Այնուհանդերձ, թեեւ վիճել կարելի է, որ բանաստեղ-
ծի ազգային պատկանելությունը զուտ պատահականու-
թյուն է, այնուամենայնիվ, նա դա կրում է, ուր էլ որ լինի՝
իր ծննդյան օրից, անջնջելի դրոշմն ու հետքերը նյութա-
կան ծագման ու հոգեւոր զարգացման, որ բնորոշ են իր
էթնիկ համայնքին ու սեփական ժողովրդին: Նման կա-
պերը, ինչքան էլ էթնիկապես ամրացած ու կաշուն լինեն,
չեն խոչընդոտում նրա մրավոր զարգացումն ու գեղագի-
տական ընդլայնումը: Նանճարեղ լինելու համար նա պի-
տի վերածի ու գերազանցի այնպիսի ծագումնաբանա-
կան ու փարածաշրջանային սահմանափակումներ, որ
վերջին հաշվով եւ, վերջ ի վերջո, վեր հառնի, որպես իր
սեփական ժողովրդի արժանի զավակ եւ աշխարհի օրի-
նակելի քաղաքացի, որ սնվել ու դաստիարակվել է փար-

բեր ազգերից, որ միասին կոչվում է մարդկություն՝ լավագույն հոգևոր պարուղներով ու ծաղկունքով: Քանի որ լավ բանաստեղծը հարուստ սննդակարգի՝ «հասրընտիր ժառանգության, բնության ու վարվելաձևերի լավագույն փարբերի ամբողջության» վրա նստած լավ աշակերտ է, նա պեղում է ոչ միայն սեփական ազգի, այլև միեւնույն երկրի հեռավոր ու փարբեր շրջաններում բնակվող մարդկանց հեղինակած բարձրագույն կարգի բանաստեղծական ստեղծագործություններ: Մա բանաստեղծականությունը փիեգերականության հետ մերձեցմանն ու նրա փաղաչափական միջազգայնացմանը նոր թափ է հաղորդում: Միայն այն ժամանակ, երբ բանաստեղծն իր եզակի մրածելակերպն ու երեսակայական թռիչքը դյուրին ու մաքսելի է վերարտադրում, ինչպիսին էլ որ լինի՝ չքնաղ, իրական թե փառահեղ, նրա ստեղծագործություններում միշտ խոսվում է կյանքի հավերժական պարանքների մասին, որպեղ եւ իր ժողովուրդը, եւ, անշուշտ, բոլոր ժողովուրդները հանդիսատեսներ են, հարկապես, եթե նրա ստեղծագործություններն անցնում են փարբեր լեզուներով թարգմանվելու ծանր աշխատանքի միջով, նա համարվում է խոշոր բանաստեղծ, իսկ նրա ստեղծագործությունը՝ ճշմարիտ պոեզիա, արժանանում է համընդհանուրի մակդիրի: Ներեւաբար, իմ մրածելակերպը հանգեցնում է այն նախնական եզրակացության, որ ժամանակակից գրքալացման մեծ խորապարկերին, հնագույն երրորդությունը՝ էթնիկականի, ազգային պարկանելության ու փիեգերականության՝ միախմբված ու մարմնավորված բանաստեղծի մեջ, մի անվիճելի պաշար է, որ այժմ լուծված ու մասնաւորված է:

Գոյություն ունի միաբարրության հզոր մի փրամաբանություն, կարող եք այն անվանել չար ու կործանա-

րար, որն այսպես է գործում. այն, ինչ համարվում է լավ պոեզիա՝ սրեղծված էթնիկ հանճարեղ պոետի կողմից, չի կարող որպես այդպիսին լավը համարվել օրեցօր փափակացվող աշխարհում: Ներեաբար նման կոռուպցիայի արդյունքում՝ դեզինֆեգրացիան փանում է դեպի հաճույք, իսկ մարդկային ներքին մղումը՝ բարձրացման: Ի վերջո, պոեզիան սկիզբ է առնում երեակայությունից, սակայն այն գործադրվում է անաղարփ ու անկաշառ լեզվական միջոցներով: Զարմանալի չէ, որ բոլոր բանաստեղծները հայրենիքի գաղափարը զուգակցում են մայրենի լեզվի կամ լեզուների հետ: Նախկապես այն բանաստեղծները, որոնց աքսորել էին իրենց երկրից, ինչ-ինչ պարճառներով այստեղ-այնտեղ ցրված, կառչած են մնալու իրենց մայրենի լեզվին՝ որպես վերջին ապավեն՝ պահպանելու մի փեսակ գաղջ սիմվոլիկ կապ աշխարհի հետ, անգամ որպես միակ նպատակ՝ մինչև վերջին շունչը:

Ընդհանուր առմամբ բանաստեղծականության երրորդությունն այսօր ավելի շփոթախառն է, քան երեսույն է: Մանավանդ կարելի է ասել, որ պոեզիայում առկա են էթնոսի եւ ազգային պարկանելության փարբեր դրսեւորումներ: Մեզնից առաջ, նախորդ սերունդների մեջ անթիվ ականավոր բանաստեղծներ փայլուն կերպով ցույց տվեցին էթնիկ պարկանելության ու համաշխարհային ազգերի միջեւ դիփսոփոմիայի /ճյուղադասության/ առաջադրման աննպատակայնությունն ու անարդյունավետությունը: Մեծ բանաստեղծը պարտադիր պոկրուսության /փանջանքով համակերպեցնող/ գաղափարների իրական թշնամին է: Մեջբերենք 19-րդ դարի լեհ բանաստեղծ Ադամ Միցկեւիչին, որի ինտենսիվ հայրենասիրական քնարերգությունը, իրավամբ դասված լեհական պո-

եզիայի ամենաբարձր ձեռքբերումների շարքին, նույնպես սիրվել են իր հայրենիքի սահմաններից դուրս գտնվող միլիոնավոր ընթերցողների կողմից:

Այս ոգով գրելու գերազանցությունը կայանում է առանձնահատուկ նրբագագություն ու մրաձողության մեջ, որը պարկանում է որոշակի ռասայի կամ ազգության ներքին ձիրքին, նրանց անգուգական կարարելությանը՝ արտահայտված ամեն ինչ ներդաշնակության մեջ միավորելու: Այլ կերպ ասած, նկարառվում է ոչ սոսկ այն փաստը, որ նրանք հանդիսանում են էթնիկ /ազգային/ բանաստեղծներ, այլ որովհետև նրանք այն աստիճան օգտակար են, որ զարմանալիորեն սիրով ընդունվող նրբագագություն են բացահայտում՝ բնապարկերների, հաճույքի, բուռն զգացմունքների, ինչպես նաև հավերժական փարրերի հանդեպ, ինչպիսիք են լեռները, գետերը, ժայռերը, ծառերը, ծաղիկները, խոտը եւ լուսարու արեգակը, ինչը նրանց որպես հազվագյուտ շնորհ է վերագրվում, փայլուն հաղթանակ հանճարի՝ ծաղկած ու նվաճած: Դիլան Թոմասը աչջեցնում է ինձ որպես մի բանաստեղծ, որը պարկանում է Ուելսին, ինչպես նաև գրական աշխարհին՝ ճանաչված որպես այդպիսին նաև այլուր:

Ռոբերտ Փրոսպի պոեզիան, համարելելով հովվերգական պարկերականությունը առանձին փիլիսոփայական թեմաների հետ, ավելի փիպիկ օրինակ է հանդիսանում 20-րդ դարի Ամերիկայի համար, քան Թ. Ս. Էլիոթի ստեղծագործությունները՝ Նորելյան մրցանակակիրը ընդդեմ նախորդի, այսինքն՝ երկրի ոչ պաշտոնական բանաստեղծ դափնեկրի: Գյուղական կյանքի իրարեսական պարկերման ու քսաներորդ դարասկզբին Նոր Անգլիայի գյուղական վայրերում իր արգասաբեր աշխա-

քանքի համար փառաբանված հիրավի պանդուխտ բանաստեղծ Ֆրոստը համալիր ուսումնասիրություններ է կատարել հասարակական ու բարոյական խնդիրների, մահվան նկատմամբ վերաբերմունքի ուղղությամբ: Ֆրոստը միշտ փորձում է իրատես լինել, փնտրույս Նոր Անգլիայի գեղջուկի երեսում «հնարավորություն փառվ փաստերին ու ներգիտակցության պայծառ թագավորությանը, նա խոսում է մեզանից շարերի համար, խոսում է ավելի լավ, քան մեզանից շարերը»(Ռադքլիֆ Սքվայերս):

Խոստովանում եմ, որ իմ մեջ արմատացած հակում կա անընդհատ պրպրել եւ վեր հանել այսպես կոչված մարգինալի, փեղականի, ազգայինի, թույլի, փոքրամասնության, կանանց արտաքին փայլի երեսում թաքնված իրական գանձերն ու արժանին մաքուրցել: Որոշ ձայներ, իրոք, ինչ-որ փեղ դարան են մտել՝ անանուն, անխոս, անգամ անարտահայտելի: Մինչդեռ դրանց բացակայությունը կամ առկայությունը հարստացրել է մեր ներքին էությունն ու դարձրել մեր աշխարհը լիարժեք ու անեղծ: Կորսված, նրանցից ավելի հզոր ուժերը անտեսում են հենց իրենց ահագնացող վրանգները: Մինչդեռ հարկավոր է ըստ արժանվույնս գնահատել նրանց՝ թե ինսպիրտուցիոնալ, թե մշակութային առումներով, ցանկացած քաղաքակիրթ հասարակություն պիտի իր շահը պաշտպանի:

Ըստ էության, բանաստեղծականության երրորդությունը սերտորեն փոխկապակցված է: Զսանմեկերորդ դարի այս նոր ու երիտասարդ փարիքում բանաստեղծական թարգմանությունը վերածննդի մեծ ալիք ու ոգեորություն է փեսել, շնորհիվ որի էլ ավելի շար բանաստեղծություններ օտար լեզուներով սպառվեցին աշխարհով

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

մեկ: Ինձ ամենից շատ մխիթարում է այն հանգամանքը, որ որոշ բանաստեղծներ, որոնք ստեղծագործում են փոքրամասնական լեզուներով, թարգմանիչների ցանկալի ուշադրությունն են գրավում, որը մարդկային պատմության փարեգրության մեջ աննախադեպ երևույթ է:

Նամաշխարհային պոեզիայի շարժումը եռման գործընթացում է, որ երևում է հորիզոնում, թեպետ աննշմար ու անմիջամուխ: Պոեզիան մեզ մեր քաղաքացիական կյանք է վերադարձրել: Բանաստեղծների գործերը պոեզիայի հարուստ արտահայտչականությունների շնորհիվ նպաստել են կյանքի, արդարության, արժանապարվության եւ գեղեցկության իրական՝ նոր սոցիալական կառուցվածքի վերակառուցման ընտրությանը՝ որպես հակաթույն ընդդեմ կույր սիրո՝ առ կոշտ կապիտալիզմի եւ առեւտրական գործառնության/կոմերցիալիզմ/ ու նյութապաշտական ֆերիշի գոեհկություն. պոեզիան օգնում է մարդկանց գրնելու զարգացման ինտեգրալ ուղին: Չնայած իր գործությանը, փոփոխություններ մտցնող նրա հարակից ուժերը դեռեւս սպասում են ավելի լավ ընկալվելու կարողության, այնուամենայնիվ, պոեզիան մարդկանց սրտերում արգելված պատ չի հիմնել՝ եր մղելով բռնի օտարումներն ու փարաբնույթ նենգ սոցիալական կոռուպցիաները:

Երբ պոեզիան բանաստեղծի միջոցով իջնում է հազարավոր քաղաքացիների մտքի խորքը՝ «որտեղից, ասես մագնիսից, անտեսանելի արտահոսք է դուրս մղվում», այն կատարելապես ազդելու է մարդկանց ներուժի վրա, ոգեւորելու եւ կենսական ուժ է հաղորդելու ամենքին:

Նենց այդ հավատով մենք այսօր հյուրընկալվել ու հանդիսավոր կերպով բացում ենք Քիոնհայում՝ Սիչանգի

ԸՆԶԱՌՅՈՒԾԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ

«Թավշե ճանապարհ» միջազգային պոեզիայի շաբաթը: Մենք հավատում ենք, որ բանաստեղծների այս անկախ /սուվերեն/ հավաքույթը, ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրի սահմաններից դուրս ի գորու է ներդաշնակության, առաքության, բարեկրթության ու երջանկության հենքի վրա նպաստել մարդկային հարաբերությունների կերպմանը՝ շնորհիվ պոեզիայի ազարագրական ու միասնականացնող ընդունակության:

Չինացի բանաստեղծի աֆրիկյան կոմպլեքսը

Գրավոր խոսք՝ 2014թ. Մկիվայի հունանկարար մրցանակարաշխության արարողությանը

Մկիվա Մարդասիրական հիմնադրամի հարգարժան ժյուրի, Իմբոնգի Յեսիզվե Թրասպի /Նույսի/ հռչակավոր անդամներ եւ այս հանդիսավոր արարողությանը ներկա գտնվող սիրելի ընկերներ.

Նախ եւ առաջ, մեծագույն խոնարհությամբ ներողություն պիտի խնդրեմ իմ բացակայության՝ այսօր ձեր շարքերում ներկա չգտնվելու համար, լինելու մեկն այն հեռեկ օրինված զգայունակներից այս հարթակում, ով իր մասնակցությունը պիտի բերեր այս կարեւորությանն ու այնքան պերճախոսաբար պիտի արտահայտվեր ձեր վեհանձնության ու մեծահոգության մասին, ինձ՝ նման պարվի արժանացնելու համար:

Պիտի խոստովանեմ, որ ձեր շարքերում իմ բացակայությունը, որ հազար ու մի հարգելի պարճառով կարող է արդարացվել, խորը ափսոսանք է մինչ օրս իմ կյանքում, եւ, հավանաբար, մինչեւ կյանքիս վերջը կապրեմ սիրտս կրծող մշտնջենական ափսոսանքի զգացումով: Եւս մեկ անգամ թույլ տվեք ձեր ներողամտությունը հայցել, որ չկարողացա գալ ու անձամբ խոսել ձեզ հետ:

Նարգելի ընկերներ, հեռավոր արեւելքում՝ Յի էթնիկ ծագման չինացիս, 1960-ականներին իմ սերնդակից դեռահասների հետ, Մաոյի՝ երրորդ աշխարհի հետ ամուր դիվանագիտական կապերի հռչակման շնորհիվ՝ գաղափարախոսական ու մշակութային, մեծացա՝ բոլոր սեւամորթ մարդկանց համարելով իմ քույրն ու եղբայրները: Ինչպես ֆրանսիական ասացվածքն է ասում՝ «La ceur est

tourjours a la gauche. սիրտը դեռ մնացել է»:

Մառյի վսեմ առաքելությունը աֆրիկյան նկրտումներով, ինչպես նաև մամուլում թեժացող քննադատության անջրպետը՝ մեծամիտ ու անխոհեմ Սպիրակների կողմից, դեռահասների գիտակցության մեջ բորբոքեց այն զգացումը, որ այս սեւ մայրցամաքը, որտեղ դուք ապրում եք, փոթորկվում է էպիքական կռվով՝ ընդդեմ ընչաքաղց գաղութակալների ու արյունարբու իմպերալիստների, որոնք խառնակռիվ սարքելով էին հանգստանում: Մեր՝ չինացիներին գաղութականության դեմ ընդվզման այդ կիրքը իրավամբ հիմնավորված էր՝ գրեթե մեկ դար արեւելյան եւ արեւմտյան իմպերալիստների ձեռքից փրոժած նվաստացումների ու ձախողումների պարճառով: Ոգեշնչող պարանություններ էին շրջանառում, թե մեկը մյուսի երեւից աֆրիկյան երկրները ազատվել են իրենց նախկին ավաբական իշխանությունից եւ անկախացել են: Այժմ մենք, իհարկե, ավելի լավ գիտենք: Չին ազգը հակված է, ինչպես րեդին մեջբերում է պրոֆեսոր Վերնոն Մակքեյը, փոխանորդ ուրախություն գտնել, քաջալերելով աֆրիկյան ժողովրդին՝ դիմակայելու «օվկիանոսի սաբանանների» վիրավորանքներին:

Աչքերին առաջ վառ մի պարկեր է բացվում, թե քանի անգամ մեզ՝ երիտասարդներին, քաղաքականապես լավ լարված մեր առաջնորդների կոչերից, բողոքի ալիքը ցույցի էր հանել փողոցները՝ հանուն մեր բարոյական պաշտպանության եւ աֆրիկացի եղբայրների հետ համերաշխության՝ իրենց ազատագրության ու արդարության համար մղվող պայքարում:

Ջարմանալի է, որ իդեալիզմի եւ խռովության մասին այդ հիշողություններն այսօր, ավելի քան երեկ, չափազանց թարմ են մտաբերում:

Եթե բարերասարիկ առիթ ներկայանա, կամ, միգուցե կարման դեր խաղա, ես ձեռնամուխ կլինեմ իմ գրական կարիերայի սրեղծմանը, որն ակամայից կկոչեի աֆրիկյան համալիր, այսինքն՝ աֆրիկյան գրելու փոխնիկայի եւ ոճերի բնագրային ընդօրինակում՝ սնուցված աֆրիկյան մշակույթների ու ժողովրդի խոր սիրով: Մենք գիտենք, որ 1960-ականների վերջին, զուգահեռ ապագադուրացվող Աֆրիկայի վերելքի, աֆրիկյան գրականությունը հաճելիորեն զարգացում էր ապրում իր խոսքումնառարներքին արժեքների շնորհիվ. այսօր այն լայնորեն հայրնի է եւ համարվում է համաշխարհային գրականության հիմնական օրգաններից մեկը: Ուզում եմ մի քանի ֆրանսախոս հսկաների անուններ հիշափակել, որոնց ես իմ բանասրեղծական գրի դասփարակներն եմ համարում՝ Լեոպոլդ Սեդար Սենդոր (Մենեգալ), Աիմե Կեսաիրե (Մարփինկա), եւ, անշուշտ, Դեիդ Դիոփ, որն այնքան փառանդաշար բանասրեղծ էր: Անսագրերից մեկը բանաձեւելով նեգրոիդ հեղափոխական հասկացությունը՝ ընդգծում է նեգրերի մշակութային արժեքները, անթիլիական ժողովրդական բանահյուսությունն ու սեւամորթ ցեղի կարեւորագույն արժանիքը: Ես դիմամբ օգրագործում եմ հեղափոխական բառը, քանի որ այն՝ որպես խղճի մրցանակ, ծառայել է ոչ միայն բոլոր սեւամորթներին, այլ աշխարհի ամեն մի անկյունում ցրված փարաբասարիկ խմբերին:

Ես պարզք եմ ոչ միայն ֆրանկոֆոնիայի երկրների գրողներին ու բանասրեղծներին, այլ նաեւ Մեծ Բրիտանիայի գրական հանճարներին, քանի որ վերջինս զարգացրել է հոգեւոր ավանդույթ՝ հավասարապես արժանի այն անվանը, որը խորը ազդեցություն է ունեցել իմ աշխարհընկալման եւ արժեքների մասշտաբի վրա, թեւ

նրանք նեգրիպոլոգ կոնցեպցիային շար ավելի գուսպ են անդրադառնում, վերաբերմունք, որ թերեւս ծնվել է որոշակի մշակութային ու քաղաքական իրականության ֆունին, որը բախվում է նրանց, ովքեր դեռ անկախության են ձգքում: Սա փայլուն գալակտիկա է, ասենք, Չինուա Աչերեի (Նիգերիա) հրաշալի վեպերը, հրաշալի պիեսները Վոլե Սոյինկայի (Նիգերիա), սուահիլիխաոս գրող Շաաբանա Ռոբերտի կապարյալ պատմությունները, ով իր գրույցներն այնքան ճարպար է հյուսում: Նրանք ինձ սովորեցրել են՝ ինչպես պահպանել ու նեցուկ լինել իմ Յի ժողովրդի ժառանգությանը, եւ ինչպիսի հավաքարմությունը պահպանել իսկական քնարական ոճը: Նաեւ պիտի ողջունեն Նգուգի Վա Սիոնգոյին՝ Զենիայից, Վիրիպո Կլեմենտե Դա Կրուզին՝ Անգոլայից, մասնավորապես՝ ձեր հանճարեղ Բենեդիկտոս Վալլեպ Վիլակազիին, Պեպեր Աբրահամսին, Դենիս Բրուպուսին եւ, ի վերջո, ոչ պակաս կարեւոր, Նոբելյան մրցանակի դափնեկիր՝ Նադին Գորդիմերին:

Նրանց սրեղծագործությունը սերվել է Ներոնի հասցրած փառապանքներից ու հեծեծանքներից՝ արտահայտելով անհաղթահարելի պաթոս ու իրական հույս՝ ավելի բարեկեցիկ աշխարհ ունենալու, եւ հնարավորություն է փալիս պարկերացնելու ամբողջ մայրցամաքի սոցիալական ու քաղաքական էվոլյուցիան Տարավային Աֆրիկայի օրինակով՝ ռասայական խտրականությունից մինչեւ ժողովրդավարություն: Նրանք աներկբայորեն բոլոր բնաշխարհիկ գրողներին ու ինձ նման բանաստեղծներին մեր պրպտուն որոնման մեջ առաջարկում են գորեղ ու հեռանկարային սրեղծագործության համար հաջողության բաղադրաբոմար: Գուցե կարող եմ պարծենալ, որ բոլոր կայացած ու նորելուկ չինացի գրողների

միջից իմ հոգեւոր կապը աֆրիկյան ավանդույթների հետ ակնհայտորեն անժխտելի է եղել: Ես սա միանգամայն վստահաբար ու հպարտությամբ եմ ասում այն պարզ, բայց կարեւոր պարճառով, որ Աֆրիկյան երիցս եղել է իմ կապվածության ու նկրումների թիրախը՝ էմոցիոնալ, մտավոր ու բանաստեղծական:

Ընկերներ, ձեր հիասքանչ երկիրը ես երբեք ուրք չեմ դրել, բացի դրանից երկիրը, որը կոչվում է Նարավային Աֆրիկա, եղել է այն Մեքքան, որ խուփուփ է փվել երեւակայությանս իմ ողջ կյանքում: Այո, հեռու-հեռավոր, բայց եւ անթիվ անգամներ առիթ եմ ունեցել երազում փեսանել ձեր երկիրը՝ կեսգիշերի ու լուսաբացի միջեւ, երբ քունն աչքերս է առնում:

Քսաներորդ դարի երկրորդ կեսից Նարավային Աֆրիկյան դարձել էր իմ Սփալինգրադը, որ քանդի ու ճեղքի ապարտեիդի /1948-1991թթ. Նարավային Աֆրիկայում եղել է ռասսայական խտրականության օրինականացված համակարգ/ սեգրագիստական պատերը, ապոկալիպտիկ պատերազմ, ուր մարդկային ճակատագիրը կախված է արդարության ու անարդարության, բռնապետության ու ազատության, իրավահավասարության ու ճնշման միջեւ առճակարման նույն թելից: Առանց հիմնավոր պարճառի:

Դեռ 1980-ականներին, երբ երիտասարդ թեկնածու էի Մուսայի դափնեկիր թագի, մի բանաստեղծություն գրեցի՝ ողջունելով աֆրիկյան քաղաքակրթությունների հնությունն ու փառաբանելով սեւամորթ ժողովուրդների բազում շնորհները: Ձեր աշխարասիրությունը, չքմեղությունն ու քաջությունը իմ թեմաներից մեկն են եղել: Քանի որ 20-րդ դարի վերջին ամիսը թեւակոխեց անսպասելի իրադարձություններով, ես, անդրադառնալով 20-րդ

դարին, երկար մի բանաստեղծություն ձոնեցի Նելսոն Մանդելային՝ մարդուն, ով հեղինակեց սրբանկարային մի դարաշրջան՝ անջնջելի հեպք թողնելով բոլոր հինգ հայրնի մայրցամաքների ժողովուրդների հիշողության մեջ: Եվ կրկին, երբ ինձ հայրնի դարձավ մարդկային ապարեզից նրա հեռանալու մասին ամենապիտեցուցիչ լուրը, սիրտս ցավից ու վշտից կծկվեց. ես գրչեցի մի երկար բանաստեղծություն՝ խորագրելով «Մեր Նորը»՝ եղերգելու եւ ողբալու «ժամանակների կուռքի» անժամանակ մահը, ով վիթխարի ավանդ է ունեցել մեր ժամանակի ներքին ու գլոբալ քաղաքականության վրա եւ անմահ է մնալու իմ եւ սերունդների հիշողության մեջ: Քլինթոնի մեջբերմամբ Մանդելան «պարզապես ծառայում էր բանակում՝ բորբոքվելով անարդարության դեմ ու առաջնորդելով մեզ դեպի լույսը»: Ամերիկայի նախկին նախագահը շեշտում էր նրա կարեւորությունը: Նելսոն Մանդելան, ի ծնե առաջնորդը, ապրում էր դժվարությունների դյուցազնական կյանքով. ճկունությունը, վերջնական հաղթանակն ու իր աֆրոլեզու ընդդիմախոսների հանդեպ ունեցած ծայրաստիճան ներողամտությունը, բացահայտում են նրա բարձր անհատականությունն ու լուսաշող ոգին, որը ճեղքում-անցնում է ռասսայական, կրոնական ու ազգային պարնեշը եւ նպաստում ձեւավորելու ապագայի միությունը: Նա արթնացնում է մարդկանց սրտերում քուն մրած արձագանքը: Նա մեզ բոլորիս մղում է վեհ գործերի: Նա զգում է մեր ժամանակների բացարձակ անհրաժեշտությունը մեր սահմանած կարգերի ու արժեքների մասշտաբների վերագնահատման ու վերակերպման գործում, ինչպես օրինակ՝ ազատության, արդարության, ազնվության ու հավասարության՝ ճանապարհի հարթելով ավելի մարդասիրական ու խաղաղ գո-

յակցության ապագայի համար:

Միրելի ու մեծ Նարավային Աֆրիկա, խնդրում եմ ընդունել մեր անկեղծ ու ջերմ շնորհավորանքները, ունենալով Նելսոն Մանդելայի նման արժանավոր գավակ, դուք արժանացել եք իմ հավերժական հիացմունքին, եւ ես վերադառնում եմ Նարավային Աֆրիկա՝ իմ երկրորդ հոգեւոր փունը:

Ընկերներ, ինձ ոգեւորում է այն փաստը, որ Մկիվա մարդասիրական մրցանակաբաշխությունը սրեղծվել է 1999 թվականին՝ ի պատիվ Մանդելայի նման մի այլ հերոսի՝ Ռիչարդ Մկիվայի, Դյուրվայի անհայտ մի գյուղակից՝ Բոլոբվայից, համայնքային ակտիվիստ եւ գյուղական համայնքի իրավունքների համար պայքարող մարտիկ, այժմ նաեւ իբրեւ սուրբ մասունք՝ պահպանվում է որպես դիմադրության խորհրդանիշ՝ ընդդեմ ռասայական խտրականության քաղաքականության եւ օրենքների: Ես իսկապես փառաբանված եմ, որ այս Փառքի սրահ եմ մուտք գործում այնպիսի հնչեղ նշանավոր մարդկանց հետ, ինչպիսիք են Նելսոն Մանդելան, Ֆիդել Կասարոն, նախագահ Ռոլինգալ եւ դոկտոր Սալիմ Ահմեդ Սալիմը՝ վիթխարի նախորդներ: Ես ինձ ձեզ նման վստահացված ու օրհնված եմ համարում, վաստակաշատ ժյուրին գնահատում է ինձ մի շարք մշակութային միջոցառումների նախաձեռնման ու կազմակերպման համար, որոնք որոշակի գործալ հեռահարումներ ունեն եւ արժանացնում է ինձ «Ժողովուրդների ազատության չեմպիոն» պատվավոր կոչմանը: Ինչպիսի՛ պարզեւ իմ եսին /անձնականությամբ/: Ինչպիսի՛ բարձրացում հանուն մշակութային բազմազանության եւ Չինաստանի հեռավոր լճացած շրջաններում մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված իմ նուրբ ջանքերի:

Այս պահին խոսքերն անգոր են: Նոգուս ներսն են հոսում հուզմունքն ու անհանգստությունը: Դժվարությունը կայանում է նրանում, որ ես այս անհանգիստ ու փանջված աշխարհին շար փոքր, թեև օգրակար ծառայություն եմ մատուցել: Ճիշտ է, փարիներ շարունակ իմ աշխատասենյակում, փոխկառավարչի պաշտոնում իմ պարտքն եմ համարել պաշտպանել մեր նյութական ու հոգեւոր երկիրը, եւ իմ ջանքերը որոշ պտուղներ փվեցին, քանի որ ուղի եմ հարթել՝ որպէս նախաձեռնող ու կողո, մի շարք մշակութային միջոցառումների անցկացման համար. հաջող բեմադրություններ ամեն փարի կամ երկու փարին մեկ, ինչպիսիք են՝ Յինհայ լճի պոեզիայի փառապոնը համաշխարհային բանաստեղծների համար. Յինհայի վրանային կլոր սեղան Ֆորումը, Սանջիանյուանյան միջազգային լուսանկարչական փառապոնը, Աշխարհի լեռները վավերագրական փառապոնը, Յինհայի՝ համաշխարհային ջրերի երաժշտական զբոսանքը եւ կենդանի համերգը, ինչպէս նաեւ Յինհայի միջազգային փանգկան եւ մշակութային ցուցահանդեսների փոնավաճառը: Ես նաեւ գումար եմ հավաքել երկու այլ մշակութային միջոցառումների՝ ժամանակակից Յի արվեստի թանգարանի ու Դաջիշալու համաշխարհային բանաստեղծների կառույցի հիմնադրման համար, որոնց շինարարական աշխատանքները թե՛ ընթացքի մեջ են:

Իմ նախաձեռնություններից կարեւոր եմ համարվում Յինհայի էքսպրեմալ ալպյան փեղագրությունն ու հեռավոր լեռնային վայրի զարոտումը՝ որպէս հանրահայտ Աշխարհի փանիք, որը նպաստում է կենսատեսակների անփոխարինելի արժեքների բազմազանությանը: Ոչ պակաս կարեւոր է փարածաշրջանը դիփարկել որպէս պոպուրի /խառնուրդ՝ բազմակրոնության, բազմազգու-

ՋԻՂԻ ՄԱՋԻԱ

թյան եւ բազմամշակութային:

Լեռնային տեղանքը կցելով՝ երագում եմ արվեստի միջոցով աշխարհի ուշադրությունը սեւեռել մարդկային մշակույթների փարրական գործընթացներին, երկխոսություններ հաստատել փարբեր մշակույթների միջեւ, բարձրացնել ներդաշնակ փոխհարաբերությունները մարդու եւ բնության միջեւ, եւ օգնել հանրությանը՝ հասկանալու ենթատեքստը շրջակա միջավայրի աղետների, ինչը կարող է վրանգի ենթարկել լեռնային էկո-համակարգը որը թափ է վերցրել անփարբեր արդիականացման հետեւանքով:

Անսահման փոքր իմ ավանդի դիմաց ձեր մրցանակը ամենաթանկ նշանավորումն է ոչ միայն մշակութային-ներարկումների իմ անդադար հայտի, այլեւ որպէս ջերմ բարեկամության նուրբ հիշեցման, որը զարգանում է Չինաստանի եւ Նարավային Աֆրիկայի ժողովուրդների միջեւ, այն պատճառով, որ վերջին 70 փարիների ընթացքում, կրիտիկական վիճակներում մեր կառավարությունն ու մեր ժողովուրդը աներկբայորեն ընտրել են ձեր հերոսական պայքարում ձեր կողքին հավասարապէս շարվելու գիծը՝ փրորելով ուրբերի փակ խայրառակ ապարտեիդն ու նենգ ռեպրեսիայի այլ ձեւերը, մինչեւ որ արդարության ու իրավահավասարության պայծառ օրը գա:

2014 թվականին լրանում է նոր ժողովրդավարացված Նարավային Աֆրիկայի 20-ամյակը, առաջին համընդհանուր ընտրությունները հաջող անցան այն բանից հետո, երբ ձեր պատմության մեջ ամենաամոթալի էջը շրջվեց: Երկիրն արյունոտ երկպառակտչական պատերազմից խույս փվեց: Փոխարենը խաղաղ հաշտեցման ուղին ու սահմանադրական հանրապետությունը, որ առաջին ան-

գամն էր ընդունում սեւամորթներին, փայլեց, օրինակ ծառայելով ոմանց համար՝ հետեւելու դրան, թեւ շարերը վախից շնչակտուր էին հետեւում այդ իրադարձությանը: Էյֆորիան, որն ուղեկցվում էր Նելսոն Մանդելային Ռուբեն կղզուց ազատ արձակմամբ, լավ էր ու հիմք գցել. վերջին 20 փարիների ընթացքում նոր Նարավային Աֆրիկան քաղաքական կայունության, փնտրեական աճի ու մշակութային փայլուն հաջողության աճ է գրացել: Պարկանելով այդ աղյուսի նույն բլոկին /կամ՝ մի խմորից լինելով/ Չինաստանի եւ Նարավային Աֆրիկայի միջեւ հարաբերությունները, ի շնորհիվ երկուստեք բազմաթիվ ընդհանուր շահերի, հարթ կերպով են ընթանում: Երկու երկրների նախագահները փոխայցելություններ են կազմակերպել եւ համագործակցության օրակարգի համառոտ շարադրանք կազմել՝ շոշափելով էկոնոմիկային, մշակութային եւ առեւտրային ոլորտներին վերաբերող հիմնահարցերը, մարնանշելով երկու երկրների համար խոստումնալից ապագայի հեռանկարները: Եզրափակելով, թույլ տվեք եւս մեկ անգամ կրկնել. ես պետք է խորին երախտագիտություն հայտնեմ Մկիվա մարդասիրական հիմնադրամին եւ Իմբոնգի յեսիզվե թրաստին: Ձեր վճռական եւ անձնուրաց որոշումը ինձ ձեր մրցանակին արժանացնելու եւս մեկ անգամ եւ իմ անունը Նարավային Աֆրիկային եռակցեց Ռիչարդ Մկիվայի հարգարժան անվան հետ: Ինձ մնում է հիացմունքի ու հպարտության այդ վեհ զգացումը, որ շողում է իմ մեջ, հաղորդել իմ երկրի բազմամիլիոնանոց ժողովրդին:

Վստահեցնում են՝ իմ այս պատիվը նաեւ նրանցն է:

**Ազնիվ գրականությունը դեռ
արդիական է եւ կարեւոր**

*Խոսք՝ Պոեզիայի եւ արվեստի Նոմերոս 2016թ.-ի
եվրոպական շքանշանով պարգևատրության
արարողությանը*

Պոեզիայի եւ արվեստի Նոմերոս 2016թ.-ի եվրոպական մեդալի պալատի հարգարժան ժյուրի, հարգելի ընկերներ, իմ հարազատ Յի հայրենակիցներ.

Ճակարագիրն ինձ օրհնել է, եւ ես պիտի երախտապարտ լինեմ մի նոր բացվող լուսաբացի համար, քանի որ այն այնքան բարեպատեհ է գալիս, որ այս օրը սկսվում է ինձ՝ Պոեզիայի եւ արվեստի Նոմերոս 2016թ.-ի եվրոպական շքանշանի արտակարգ պատվին արժանացնելով: Կարող եք համոզված լինել, որ իմ սիրելի երկրի այս հեռավոր վայրում լավ լուրերը անտառային հրդեհի պես պարսպում են իմ ցեղակից փղամարդկանց ու կանաց մեջ: Այս մրցանակը ժողովրդականություն է վայելում իմ ժողովրդի շրջանում, քանի որ այն վկայում է Եվրոպական այն հեռանկարի մասին, որ ազնիվ գրականության նկատմամբ մինչ օրս հեղափոխություն է ցուցաբերվում եւ առիթը, ինչպես նաեւ այն ճանաչումը, որ իմ պոեզիան, խորապես արմատավորված Յի ժողովրդի ազգային դիմագծում, ներառում է ողջ էթնիկ Նյուտոն /յի լեզուն/, եւ, որպես այդպիսին, կրում է գերազանցապես սոցիալական ու գեղագիտական նշանակություն, չնայած քննադատական կասկածներին, որ ես անընդհատ համառորեն խոսում եմ այն գլխավոր թեմաների մասին, որ Յիի ինքնությունը դեմ է ժամանակցությանը, ինչպես նաեւ նախանձամբություններին, որ իմ սրբազանություններին:

ներում որոշ հայեցակետային սահմանափակումներ կան: Զարմանալի չէ, որ ձեր կողմից ինձ ընտրելը ինձ համար նշանակում է ժամանակին արված լուծույթ Յիե-րի հոգեւորականության համար՝ այնքան հին, այնքան սքանչելի, այնքան փառահեղ, որ կարող է մրցակցել ցանկացած այլ կրկնորդի հետ: Ձեր մրցանակը նաեւ ամենահարմար նվերն է այս երկրին, բոլոր զգայուն էակ-ներին՝ երգով ու առաքինությամբ լի, նրա վեհապանձ գազաթներին, փոթորկալից հեղեղներին, խիպառխիպ անբառներին, անսահման մաքուր երկնքին, խորածածկ զառիթափերին՝ անձանոթ վայրի ծաղիկների բուրմուն-քով:

Այս պահին ես պիտի շատ աննիտուորեն արտա-հայրվեմ եւ միգուցե դժվար, որպեսզի իմ երախտագի-տությունն արտահայտեմ մի պարզ շնորհակալությամբ, հաշվի առնելով, որ դուք ճամփորդել եք ամբողջ երկրով ու հասել մինչեւ իմ դռան շեմքը, որպեսզի հանձնեք այս պարվանշանը: Ինչու՞ ես: Յիի բարեկամության արձա-նագրությունը թելադրում է, որ Ձեզ նման բարի լրաբեր-ների հետ այս պահին ձեր շարքերում ներկա չգտնվել, կամ, ավելի ճիշտ, Յիի վեհանձնության պաշտամունքը հրամայում է ինձ այսպեղ չկանգնել ու քաղաքավարու-թյան փափակություններ դուրս չբալ, այլ շրտապել ու իրար անցնել, որպես օգնական բակում, որ այժ, ցուլ կամ խոզ մորթեն, կամ օրհնված փանրիորջ պես քաջալերի հյուրերին եւս մեկ կենաց խմել՝ ինչպես վայել է իսկական նյութություններին ինչույքի ժամանակ:

Նարգելի բարեկամներ, ինձ տրվող այս շքանշանը կո-չել են Նոմերոսի պարվին, մեծագույն բանաստեղծի, որն ապրել է անտիկ արեւմտյան աշխարհում: Եւ Նոմերոսի հետ երկու հրաշալի դյուցազներգությունները՝ «Իլիա-

կան» եւ «Ողիսական», արեւմուտքի հնագոյն պահպանված այդ գործերը, այսօր գրականության կարեւոր մասն են կազմում՝ արեւելքից մինչեւ արեւմուտք. դա իսկական ժառանգություն է, որ անցել է սերունդներին այս կույր բանաստեղծի միջոցով՝ համարվելով արեւմտյան մշակութային արժեքների գույգ սկզբնաղբյուր: Այս պահին ես վարանում եմ Նոմերոսին՝ պոեզիայի մարգարեին ու բրահմանին, համեմատել ճշմարտության մարմնացման հետ: Նա, անշուշտ, այդպիսին է: Եվ նույնիսկ ավելին: Ես իրոք կցանկանայի անշրջահայաց շիւրակությամբ, անայլայլ անկեղծությամբ իմ հարածուն հիացմունքն արտահայտել բոլոր ժամանակների նրա վաստակի համար: Պարգոյունը, անպաճույճ լեզուն ու կյանքում շիւրակ լինելը Նոմերոսի համբավաշար որակներն են: Նրա պարզ եւ ուղիղ փողերում ազնվություն ու արժանապարտություն կա: Իլիականում Աքիլլեսը կանխագուշակում է, որ նրա բանաստեղծությունները կհարատեւեն ու երբեք չեն մոխրանա: Ես լիովին համամիտ եմ նման մարգարեության հետ ու մինչ օրս մենք վկան ենք այն բանի, թե ինչպես է մինչ օրս գրական երկինքը ողողված Նոմերական երգերի ու փաղերի լույսով:

Ես միշտ խորին ակնածանքով եմ ընդունում այն փաստը, որ առանց մ.թ.ա. 8-րդ դարի կույր էպոսագիր բանաստեղծի մեր գրական պարամոյունը կլիներ ավելի թշվառ ու անբովանդակ: Աքիլլեսի ու Ագամեմնոնի նման հերոսներին անուն առ անուն կանչելը, թեպէտ մոլեզին ու թռուցիկ, մշտապես վեհացրել ու կենդանացրել են, նույնիսկ, եթե բրոնզը ժանգոտվի ու ժայռերը քայքայվեն:

Տիշեցնեմ ձեզ, ընկերներ, այս մրցանակի մասին ես խոսում եմ հպարտությամբ, որը կապված է հանճարեղ

Նոմերոսի հետ: Դա ասես հեռագագացության պես մի հպում լինի, Նոմերոսի կողմից արված խորհրդավոր մի պարզամ կամ գուշակություն, որոնց վրա նման մարգարեի ուժն է ազդում. ես ամենայն մտադրությամբ ու նպատակաուղղվածությամբ կրկին հայացքս սեւեռում եմ Յիի դյուցագներգություններին՝ Լիրին, Մայգեին, ինչպես նաեւ Աջի Սյանջիին, բոլորը Դալիանշան բարձրավանդակում փառահեղ փառքի լուսապսակներ են: Զմայլված, թվում է, թե նորից ելել եմ բնության կախարդական բարձունքին ու փրվել այս սիրելի Յի երկրի հոգեհմայքին՝ պարասպ Արեւի Աստծո սուրբ մկրտությանը: Ուղղակի եւ անուղղակի, ես վերադարձել եմ այնպեղ, որպեղից 30 փարի առաջ սկսեցի իմ ամենաառաջին ճանապարհորդությունը դեպի արտաքին աշխարհ: Թույլ փրվեք իմ էգոիզմը, մի բանասպեղծ, որ արժանացել է նման մեծանուն ծագումնաբանությամբ հերոսի՝ ինչպիսին է Նոմերոսի անվամբ մրցանակին, օրհներգեր երգի. այս պահին սիրտս թնդում է իմ սիրելի Նյունոսի ժողովրդի հետ այն գորությամբ, որ հանդիսանում եմ Նյունոսի բանասպեղծ՝ կապված մարգարեական իրավունքի հետ, որ իմ բանասպեղծությունները կհարստեան ու կշարունակեն փայլել աշխարհի առջեւ՝ շնորհիվ իմ ժողովրդի, նրանց պարճառով ու հանուն նրանց:

Շնորհակալություն ուշադրության համար: Կանաաս:

ՋԻԴԻ ՄԱՋԻԱԿ ԶԻՆԱԿԱՆ ՆԵՐՔՈՂ

(Նանձնաժողովի գնահատական խոսքը Պոեզիայի եւ արվեստի Նոմերոս 2016թ.-ի եվրոպական շքանշանով
Ջ. Մաջիայի պարգևատրությանը)

Ջիդի Մաջիան համարվում է ժամանակակից չինացի մեծանուն բանաստեղծներից մեկը: Նրա պոեզիան մշակութային սահմանափակումներ ունի, որը, ըստ էության, խորապես արմատավորված է Նյուտոնի ազգի ավանդության մեջ: Ջիդի Մաջիան բանաստեղծություններ է գրել նաև այն պարճառով, որ ցանկացել է բարձրացնել այն վաղեմի կախարդական գիտակցությունը, որը չափավորվել է Բիւն քրմապետերի կողմից՝ իր նախնայաց ոգիներին առնչվելով: Նրա արվեստի ձեւը անրեսասնելի հոգեոտրության փիրոյթ է, որտեղից լեռնային ժողովուրդը մնում է հարստեւ փոխազդեցության մեջ, ինչը թույլ է տալիս պարգեւել նոր դարաշրջան մարդկային մեծագույն տենչանքի՝ մաքրության ու իրականացման համար: Այրելով ի դեմս բնական գեղեցկության ու անսահմանության, նրա ստեղծագործությունները մշտապես արտացոլում են մարդկային ճակատագրի խորությունը, որի վրայով նա զատիվայր վեր ու վար է անում, եւ միանում մեծ տիեզերագործական համակարգերին ու տեսականության տարրական մեխանիզմներին: Նա զգում է հավիտենականությունը գիշերվա ու ցերեկվա անքողջության միջոցով. կառչելով մարդկային մարմնին, իր հիվանդությամբ ու ցավով, նրա գոյարեւելը մարդկային կերպարանքի տեսքով, ենթարկվում է եղանակային պայմանների ազդեցությանը, որը դարապարտված է լինելու ժամանակի ջախջախիչ ուժին: Սա հազվադեպ երեւոյթ է ու թվում է այնքան հասու է մարդկային

գիրակցությանը, ճառագելով, որ հավերժ կերպի
սրայծառ մի ճաճանց, որը փարսածվելու է մեծ
ժամանակային միջակայքերի վրա ու զննելու է
փիեզերքը իր բոլոր ձեւերով ու
կերպարանափոխություններով:

Մաջհան կարող է բանաստեղծություն գրել ճպուրտի
թեւերի նուրբ շարժումների մասին, եւ սրեղծել
ընդարձակ համայնապարկեր, որն արքայացում է մի
ամբողջ դարաշրջանի ոգին, բարձրն ազար գոյաձեւի
լեռների ու լճերի միջեւ՝ ներդաշնակ կենդանիների,
թռչունների եւ բոլոր կենդանի էակների հետ: Նրա
բանաստեղծության ամեն մի տեսարան դառնում է այդ
ցեղի պարմության շարունակությունը, կարծես այն
հարուկ սահմանվել է փառքով պսակվելու համար:
Բանաստեղծը գիրակցում է, որ իր աշխարանքն
ընդրվել է բազմաթիվ այլ աշխարանքների միջից,
որպեսզի իրականացնի իր փափագած ճակարագիրը:
Նա հասկանում էր, որ մշտապես չէր կարող ապրել
Լիանշան լեռներում, որտեղ որսորդական հրացանն
ուսին կարող էր որսի զնայ եւ խաղաղ կյանքով ապրել
միայն իր ընտանեկան փոհմի հետ: Նա կարող էր
պարել խարույկի շուրջ ու լեռան գագաթից հեռուն
նայել, բայց նրա շնորհը նրան փանում է՝ լինելու
աշխարհի բանաստեղծների շրջանում, որ հոշակի իր
երկրի ու իր ժողովրդի փառքը աշխարհի ամենահեռու
անկյուններում: Նա կարող էր երգել փոքրիկ
խրճիթներում՝ ցրտից ու փիեզերական
հեռավորությունից զատ, նա կարող էր լսել փարեցների
ու շամանների պարմությունները, սակայն նրա
գործերը մեկնաբանում են գոյության փարսական
ճշմարտությունը. «Ես Նյուտոն եմ»: Մա նրա մեծագույն
առաջադրանքն է, եւ միեւնոյն ժամանակ այն աղոթքի
մի տեսակ է, որը կրկնվում է սերունդների համար՝
հիշեցումների ու վսեմացումների
հաջորդականությամբ, հեռավոր մի արձագանք
պարմության, որն արքայացում է անցյալն ու
փառապանծ ապագան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Զ. Բախայանի թարգմ.).....	5
Սուրբ վայր, օրհնյալ երկիր.....	6
Մեր հայրը.....	9
Անվերնագիր.....	13
Արեւաշող ձյունը եւ երկնքի գույնը.....	14
Նայրենիքիս.....	19
Մաղդ.....	22
Բերանի փավիղ.....	24
Գեպը.....	26
Շախմատային քարի փեղափոխությունը.....	28
Ինչպես կարող եմ չվերադառնալ.....	30
Երուսաղեմի աղավնին.....	32
Ֆեդերիկո Գարսիա Լորկայի փնտրություններում.....	33
Աթթիլա Ջոզեֆին.....	35
Նռենոս գետի վերածնունդը.....	37
Եթե մեռնեի.....	39
Նշաններ մեզալիթի վրա.....	40
Լամուցո շողացող լիճը.....	42
Գինովանալ.....	43
Ընդունված հրահանգ.....	44
Պայմանագիր.....	45
Արծվի հուղարկավորությունը.....	46
Կույրը.....	47
Բրոնզե կիսանդրին.....	48
Աքսոր.....	49
Մթություն.....	52
Ոսկե նժույգ.....	53
Քո խոցոտված սիրտը.....	54
Պոեթի վախճանը.....	56
Եվրոշենկոյին.....	59

Չսաված խոսք.....	60
Ոչ ոք ի գորու չէ սրվերել քո անունը.....	61
Ես՝ ձյունահովագու.....	64
Վլադիմիր Մայակովսկուն.....	81
Մնայունը.....	107
ԷՍՍԵՆԵՐ ԵՎ ԵԼՈՒՅԹՆԵՐ (<i>Լ. Ղազարյանի թարգմ.</i>).....	131
Ռուան պոեզիայի 20-րդ մրցանակաբաշխության արարողությանը հնչեցված պարասխանը.....	132
Ուղերձ Ֆեռնանդո Ռենդոնին.....	138
Մանիֆեստ՝ Յինհայ լիճ պոեզիայի միջազգային փառապոռնի.....	142
Լեռնաբնակների գոյաբանական հիշողություններն ու օգնության հասնող մարզինալացված պարկերները.....	146
Ձոն՝ Պոեզիայի.....	154
Տեղայնացված բանաստեղծական գիրն ու մարզինալացված ձայնը.....	158
Ինչու՞ է պոեզիայի դերը մինչ օրս նշանակալից համարվում.....	167
Ո՛վ է Բանաստեղծը: Ի՞նչ է Պոեզիան.....	173
Չինացի բանաստեղծի աֆրիկյան կոմպլեքսը.....	180
Ազնիվ գրականությունը դեռ արդիական է եւ կարելու.....	190
<i>Զիդի Մաջիս՝ շինական ներքոդ</i>	194

ՋԻԴԻ ՄԱՋԻԱ

ԸՆԶԱՌՅՈՒԾԻՑ ՄԻՆՉԵՎ
ՄԱՅԱԿՈՎՍԿԻ

Բանաստեղծություններ և էսսեներ

Անգլերենից թարգմանությունները՝
Քրիստինե ԲԱԼՅԱՆԻ
Լիլիթ ՂԱԶԱՐՅԱՆԻ

Չնարենից անգլերեն թարգմանությունները՝
Դենիս ՄԱՅԵՐԻ և Խոսան ՇԱՌԺԵՆԻ

Խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեոսյան
Էջադրումը՝ Մ. Ավանեսյանի
Կազմի ձեռավորումը՝ Մ. Սայիյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 12.5 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 1000:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

«ԳԵՂարմ» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից»- 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» -
2012

«Միրիուսի սրնգահարները»/Վ.Խլերնիկով,
Ն.Գումիլյով, Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեռնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Գ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014

Հենրիխ Սապգիր. «Ձուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը. մետամետաֆորիստներ» -
2015

Ալեքսանդր Մոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գութը. Պատմվածքներ» -
2015

Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդյազկին. «Լավը» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ(հատոր 1) - 2016

Յու Ջիան. «Անձրևից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեռ Տոլստոյ. Փախուստ դրախտից» -
2016

Չժան Յզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016

Լյուդմիլա Պետրուշենսկայա. «Մեր. երջանկություն.
ներվիեն» - 2016

Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթրլոգիա) - 2016

Ռուս մինիմալիստներ (անթրլոգիա) - 2016
Իձիյե Թան. «Կոնֆուցիականությունը,
բուդդայականությունը, դատսիզմը,
քրիստոնեությունը և չինական մշակույթը»- 2016

Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ(հատոր 2 և 3) - 2016

Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգերորգ Բախման. «30-րդ տարին» - 2017